ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE
AND SPORT

ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ
И СПОРТА АРМЕНИИ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Գիտամեթոդական պարբերական

SCIENCE IN SPORT: MODERN ISSUES

Scientific and methodical journal

НАУКА В СПОРТЕ: СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ

Научно-методический журнал

№ 3 (7)

ԵՐԵՎԱՆ

YEREVAN - 2022

ЕРЕВАН

ISSN 2579-2997

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Գրախոսվող գիտամեթոդական պարբերական

Երաշխավորված է տպագրության Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ–ի գիտական հրատարակությունների ցանկում:

Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ: Գիտամեթոդական պարբերական: Եր.: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, 2022, № 3 (7), 237 էջ:

Պարբերականում ընդգրկված են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի, հանրապետության և այլ երկրների բուհերի դասախոսների և աշխատակիցների գիտահետազոտական ու մեթոդական աշխատանքները: Տեսական և գիտափորձարարական ուսումնասիրությունները նվիրված են ինչպես ֆիզիկական կուլտուրայի, սպորտի, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի, ադապտիվ սպորտի բազմաբնույթ հիմնախնդիրներին, այնպես էլ հարակից ոլորտներին:

Պարբերականի հոդվածները նախատեսված են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի մասնագետների, մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսների, երիտասարդ գիտնականների համար:

Պարբերականի հիմնադիր՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0070, Ալեք Մանուկյան 11
11 Alek Manukyan Str., Yerevan 0070, Republic of Armenia
info@sportedu.am

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Դ. Ս. Խիթարյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

(Հայաստան, ՀՖԿՍՊԻ, rector@sportedu.am)

Ստեփանյան Լ.Ս.	**Պատասխանատու խմբագիր** կ.գ.թ., դոցենտ (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, lusine.stepanyan@sportedu.am)
Ղազարյան Ֆ. Գ.	մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, frunz.ghazaryan@sportedu.am)
Աղաջանյան Մ. Գ.	բ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, marina.aghajanyan@sportedu.am)
Հակոբյան Ե. Ս.	մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, elena.hakobyan@sportedu.am)
Չատինյան Ա. Ա.	մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, ashot.chatinyan@sportedu.am)
Գևորգյան Պ. Հ.	մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՎՊՀ, pargevgevorgyan007@gmail.com)
Մարդոյան Ռ. Ա.	մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՇՊՀ, mardoyanr@mail.ru)
Թումանյան Հ. Գ.	մ.գ.թ., պրոֆեսոր (Հայաստան, ԵՊՀ, armine.harutyunyan28@mail.ru)
Բաբայան Հ. Ա.	հ.գ.թ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, harutyun.babayan@sportedu.am)
Տեր-Մարգարյան Ն. Գ.	մ.գ.թ., դոցենտ (Հայաստան, ՀՖԿՍՊԻ,

nune.ter-margaryan@sportedu.am)

Պետրոսյան Տ. Ռ. կ.գ.թ., դոցենտ (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, tigran.petrosyan@sportedu.am)

Մուրադյան Ա. Ե. դասախոս (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, arpine.muradyan@sportedu.am)

Սիմոնյան Ե. Վ. լեզվաբան–խմբագիր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, eranuhi.simonyan@sportedu.am)

Միջազգային խմբագրական խորհուրդ՝

Սեյրանով Ս. Գ. մ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան, ՌՖԿՍԵՏՊՀ, rectorat@rgufk.ru)

Բուլատովա Մ. Մ. մ.գ.դ., պրոֆեսոր (Ուկրաինա, ՈՒՖԿՍԱՀ, dr.bulatova@gmail.com)

Սադովսկի Ե.Վ. մ.գ.դ., պրոֆեսոր (Լեհաստան, ՎՖԿՀ, rektorat@awf-bp.edu.pl)

Զոտովա Ֆ. Ռ. մ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան, ՊՖԿՍՏՊԱ, Zfr-nauka@mail.ru)

Զագանիա Ջ. Գ. մ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան, ՎՖԿՍՊՈՒՀ, jemal.dzagania@gmail.com)

SCIENCE IN SPORT: MODERN ISSUES

SCIENTIFIC METHODICAL JOURNAL

Chief editor

D. S. Khitaryan - PhD of Pedagogy, Professor

Stepanyan L. S. Responsible Editor, *PhD of Biology, Associate Professor (Armenia, ASIPCS,* lusine.stepanyan@sportedu.am*)*

Ghazaryan F. G. *Doctor of Pedagogy, Professor (Armenia, ASIPCS,* frunz.ghazaryan@sportedu.am*)*

Aghajanyan M. G. *Doctor of Medicine, Professor (Armenia, ASIPCS,* marina.aghajanyan@sportedu.am*)*

Hakobyan Y. S. *Doctor of Pedagogy, Professor (Armenia, ASIPCS,* elena.hakobyan@sportedu.am)

Chatinyan A. A. *Doctor of Pedagogy, Professor (Armenia, ASIPCS,* ashot.chatinyan@sportedu.am*)*

Gevorgyan P.H. Doctor of Pedagogy, Professor (Armenia, VSU, pargevgevorgyan007@gmail.com)

Mardoyan R.A. Doctor of Pedagogy, Professor (Armenia, SUSH, mardoyanr@mail.ru)

Tumanyan H. G. *PhD of Pedagogy, Professor (Armenia, YSU, armine.harutyunyan28@mail.ru)*

Babayan H. A. *PhD of psychology, Associate Professor (Armenia, ASIPCS, harutyun.babayan@sportedu.am)*

Ter-Margaryan N. G. *PhD of Pedagogy, Associate Professor (Armenia, ASIPCS,* nune.ter-margaryan@sportedu.am*)*

Petrosyan T.R. PhD of Biology, Associate Professor (Armenia, ASIPCS, tigran.petrosyan@sportedu.am)

Muradyan A.E. Lecturer (Armenia, ASIPCS, arpine. muradyan@sportedu.am)

Simonyan E. V. *editor (Armenia, ASIPCS, eranuhi. simonyan@sportedu.am)*

International editorial board:

Seyranov S.G. Doctor of Pedagogy, Professor (Russia, MSAPC, rectorat@rgufk.ru)

Bulatova M. M. Doctor of Pedagogy, Professor (Ukraine, NUUPES, *dr.bulatova@gmail.com*)

Sadowski E. B. Doctor of Pedagogy, Professor (Poland, AWF, rektorat@awf-bp.edu.pl)

Zotova F. R. Doctor of Pedagogy, Professor (Russia, VRSAPCST, *Zfr-nauka@mail.ru*)

Dzagania G. G. Doctor of Pedagogy, Professor (Georgia, GSTUPES, *jemal.dzagania@gmail.com*)

НАУКА В СПОРТЕ: СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ

НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ

Главный редактор

Д.С.Хитарян

кандидат педагогических наук, профессор, ректор института

Степанян Л. С. **Ответственный редактор**

к.б.н., доцент (Армения, ГИФКСА, lusine.stepanyan@sportedu.am)

Казарян Ф. Г. д.п.н., профессор (Армения, ГИФКСА, frunz.ghazaryan@sportedu.am)

Агаджанян М. Г. д.мед.наук,профессор (Армения, ГИФКСА, marina.aghajanyan@sportedu.am)

Акопян Е. С. д.п.н., профессор (Армения, ГИФКСА, elena.hakobyan@sportedu.am)

Чатинян А. А. д.п.н., профессор (Армения, ГИФКСА, ashot.chatinyan@sportedu.am)

Геворгян П. О. д.п.н., профессор (Армения, ВПУ, pargevgevorgyan007@gmail.com)

Мардоян Р. А. д.п.н., профессор (Армения, ШГУ, mardoyanr@mail.ru)

Туманян Г. Г. к.п.н., профессор (Армения, ЕГУ, armine.harutyunyan28@mail.ru)

Бабаян А. А. к. псих. наук, профессор (Армения, ГИФКСА, harutyun.babayan@sportedu.am)

Тер-Маркарян Н. Г. к.п.н., доцент (Армения, ГИФКСА, nune.ter-margaryan@sportedu.am)

Петросян Т. Р. к.б.н., доцент (Армения, ГИФКСА, tigran.petrosyan@sportedu.am)

Мурадян А. Е. преподаватель (Армения, ГИФКСА, arpine.muradyan@sportedu.am)

Симонян Е. В. редактор (Армения, ГИФКСА, eranuhi.simonyan@sportedu.am)

Международный редакционный совет

Сейранов С.Г. д.п.н., профессор (Россия)

Булатова М. М. д.п.н., профессор (Украина, УНУФКС, dr.bulatova@gmail.com)

Садовски Е. В. д.п.н., профессор (Польша, ВУФК, rektorat@awf-bp.edu.pl)

Зотова Ф. Р. д.п.н., профессор (Россия, ПГАФКСиТ, Zfr-nauka@mail.ru)

Дзагания Г. Г. д.п.н., профессор (Грузия, ГГУУФКС, jemal.dzagania@gmail.com)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՍՊՈՐՏ. ՕԼԻՄՊԻԶՄԸ, ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՊՈՐՏՈՒՄ 13

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՆ ՕԼԻՄՊԻԶՄԻՑ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ 13

Հ.Յու.Ավագյան, Մ.Ս.Բարբարյան

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ 20

Ա.Գ.Հարությունյան

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԲԻԶՆԵՍՈՒՄ ՖԻԹՆԵՍ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 30

Կ.Ս.Քոչարյան

ԲԱԺԻՆ 2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 39

ՄԱՐԴՈՒ ՃԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 39

Ա. Հ. Գույան, Հ. Գ. Կյոկչյան, Հ.Ս.Գասպարյան

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ 49

Հ. Շ.Թամիրյան

ԲԱՋՄԱՄԱՐՏԻ ԱՌԱՆՁԻՆ ՄՐՑԱՁԵՎԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 59

Է. Զ. Մարտիրոսյան, Վ. Ա. Համբարձումյան, Մ. Ա. Հարությունյան

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐՈՒՄ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 71

Ա. Գ. Նովրուզյան

ՓՈՓՈԽԱԿԱՆ–ԻՆՏԵՐՎԱԼԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 400Մ ԱՐԱԳԱՎԱԶՈՐԴՆԵՐԻ ԱՐԱԳԱՅԻՆ ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎՐԱ 81

Վ.Ա.Սմբատյան, Հ.Վ.Քոսակյան

ԲԱԺԻՆ 3. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 90

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 90

Վ.Ղ. Գեղամյան, Ս.Ս. Արզաքանյան

ԱՌԱՋԱՏԱՐԻ ԴԵՐԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԹԻՄԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 100

Ն.Է. Գևորգյան, Մ.Ս.Բարբարյան

ՇԱԽՄԱՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 112

Ե. Գ. Հակոբյան

ԲԱԺԻՆ 4. ՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ 120

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄՈՐՖՈՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՈՐՈՇ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 120

Մ.Գ.Աղաջանյան, Մ.Վ. Ճշմարիտյան,

ԿՐԵԱՏԻՆ ՄՈՆՈՀԻԴՐԱՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՈՒՀԻՆԵՐԻ ԿԵՆՍԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԱՐԱԳԱՅԻՆ ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ 130

Ն.Ե.Խաչատրյան, Ռ.Վ. Տամբովցևա

ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՔԻ ԼՈՂՈՐԴՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ 141

Է.Վ. Ֆերոյան

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐԴԻՈՄԻՈՑԻՏՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՐՖՈՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՏԵՎԱԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒՄԻՑ ԵՎ ՆՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ՀԱՆԳՍՏԻՑ ՀԵՏՈ 152

Տ.Հ. Ղևոնդյան, Ս. Բ. Բարինյան, Ի.Վ. Անտոնյան, Հ.Տ. Ղևոնդյան

ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ՀԱԿԱԴՈՊԻՆԳԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 166

Ա.Ս. Հովհաննիսյան, Գ.Գ.Սահակյան, Թ.Ուքլեբա, Է. Արխիպ,

Գ. Ջալլեհ, Ռ. Դոնովան

ԲԱԺԻՆ 5. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՍՊՈՐՏՈՒՄ 184

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԲՆԱԾԻՆ ԾՈՒՌՎԱԶՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ 184

Ա. Հ. Մարտիրոսյան

ԲԱԺԻՆ 6. ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՍՊՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 192

ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ 192

Ասիստենտ Լ.Ա.Մեծոյան

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՖՈՒՏԲՈԼՈՒՄ 203

Լ.Ա.Մեծոյան, Ս.Մ.Մարդանյան

ԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ 215

Թ.Ս. Պլաչինդա, Օ.Վ. Զախարովա

CONTENT

SECTION 1. OLYMPIC SPORT: OLYMPISM, OLYMPIC EDUCATION AND LEGACY IN THE MODERN SPORT 13

KNOWLEDGE OF HIGH SCHOOL STUDENTS OF OLYMPISM. SOCIOLOGICAL OBSERVATION 13

A.Yu. Avagyan, M.S.Barbaryan

OLYMPIC EDUCATION AS A COMPONENT OF PROFESSIONAL TRAINING 20

A.G. Harutyunyan

THE ROLE AND IMPORTANCE OF FITNESS INDUSTRY IN THE DEVELOPMENT OF HUMAN POTENTIAL IN THE HOTEL BUSINESS 30

K.S. Qocharyan

SECTION 2. PEDAGOGICAL ISSUES OF PHYSICAL CULTURE AND SPORT 39

ANALYSIS OF METHODS FOR ASSESSING HUMAN FLEXIBILITY

A.H. Gulyan, H. G. Kyokchyan, H.S. Gasparyan 39

STUDENTS' ATTITUDE TOWARDS PHYSICAL EDUCATION 49
G. Sh.Tamiryan
NEW APPROACHES TO THE RESULTS ANALYSIS OF SEPARATE ATHLETICS MULTISPORT COMPETITIONS 59
E. Z. Martirosyan, V. A. Hambardzumyan, M. A. Harutyunyan
FEATURES OF PHYSICAL TRAINING IN SPORTS DANCES. LITERATURE ANALYSIS 71
A. G. Novruzyan
INFLUENCE OF VARIABLE INTERVAL TRAINING METHOD ON THE DEVELOPMENT OF SPEED ENDURANCE IN 400 METERS RUNNERS 81
V.A. Smbatyan, A.V. Kosakyan
SECTION 3. PSYCHOLOGICAL ISSUES OF PHYSICAL CULTURE AND SPORT 90
DYNAMICS OF FORMATION OF PEDAGOGICAL ABILITIES OF FUTURE SPECIALISTS OF PHYSICAL CULTURE AND SPORT 90
V. Gh. Geghamyan, S.S. Arzaqanyan
THE ROLE OF A LEADER IN THE SUCCESS OF A SPORTS TEAM 100
N. E. Gevorgyan, M.S.Barbaryan
THE INFLUENCE OF CHESS ON THE PROCESS OF CHILD DEVELOPMENT 112
E. G. Hakobyan
SECTION 4. MEDICAL BIOLOGICAL ASPECTS OF SPORT ACTIVITY AND HEALTHY LIFE STYLE 120
COMPARATIVE ASSESSMENT OF SOME MORPHOFUCTIONAL INDICATORS OF SCHOOLCHILDREN AND YOUNG ATHLETES 120
M.G.Aghajanyan, M.V. Chshmarityan
INFLUENCE OF CREATINE MONOHYDRATE ON BIOCHEMICAL PARAMETERS AND SPEED ENDURANCE OF WOMAN FOOTBALL PLAYERS 130
N. Khachatryan, R. Tambovcova
BIOENERGETIC STANDARDS OF PHYSICAL PERFORMANCE OF SWIMMERS OF DIFFERENT AGES 141
E.V. Feroyan

SYSTEMIC MORPHOFUNCTIONAL ASSESSMENT OF THE STATE OF CARDIOMYOCYTES OF EXPERIMENTAL ANIMALS AFTER PROLONGED PHYSICAL LOAD WITH SUBSEQUENT REST 152
T.H. Ghevondyan, S. B. Barinyan, I.V. Antonyan, H.T. Ghevondyan

KEY WEAKNESSES IN COACHES' ANTI-DOPING KNOWLEDGE THAT MAY INFLUENCE ATHLETES' USE OF PROHIBITED SUBSTANCES. A CROSS-NATIONAL INVESTIGATION 166
A.S Hovhannisyan, G.G.Sahakyan, T.Ukleba, E. Arhip, G. Jalleh, R. Donovan

SECTION 5. ISSUES OF PHYSICAL REHABILITATION IN SPORT 184

PHYSICAL REHABILITATION METHODS FOR CONGENITAL TORTICOLLIS 184
A. H. Martirosyan

SECTION 6. INNOVATIVE TECHNOLOGIES IN THE PROCESS OF SPORT MANAGEMENT 192

APPLICATION OF NEW TECHNOLOGIES IN NATURAL DISASTERS 192
L.A.Metsoyan

THE ROLE AND APPLICATION OF INFORMATION TECHNOLOGIES IN FOOTBALL 203
L.A.Metsoyan, S.M.Mardanyan

PHYSICAL TRAINING OF FUTURE SPECIALISTS IN CONDITIONS OF DISTANCE LEARNING 215
T. S.Plachynda, O.V.Zakharova

ԲԱԺԻՆ 1. ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՍՊՈՐՏ. ՕԼԻՄՊԻԶՄԸ, ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՊՈՐՏՈՒՄ

ՀՅԴ 796.032 DOI: 10.53068/25792997-2022.3.7-13

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՆ ՕԼԻՄՊԻԶՄԻՑ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Մ.գ.թ., դոցենտ Հ.Յու.Ավագյան, մ.գ.թ. Մ.Ս. Բարբարյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
Email: hasmik.avagyan@sportedu.am, mesrop.barbaryan@sportedu.am

Առանցքային բառեր: Օլիմպիական շարժում, օլիմպիզմ, միասնություն, համերաշխություն, ֆիզիկական կուլտուրա, ժամանակակից սպորտ, դաստիարակություն, մարդու հոգևոր կատարելություն:

Հետազոտության արդիականություն: Ժամանակակից հասարակության առանձնահատկությունը մարդկային գործունեության բոլոր՝ այդ թվում և ֆիզիկական կուլտուրայի ոլորտներում, առաջադիմությունն է: «Ֆիզիկական կուլտուրա» առարկան ներառված է երեխաների կրթության ընդհանուր համակարգում, սահմանված է նրա արժեքը, ինչպես նաև դաստիարակչական, կրթական, առողջարարական և համամշակութային դերն անհատի և հասարակության համար [1,2]:

Դրա հետ մեկտեղ, սա միակ ուսումնական առարկան է, որը սովորողների մոտ ձևավորում է գրագետ վերաբերմունք սեփական անձի, մարմնի նկատմամբ, նպաստում է բարոյականային հատկանիշների դաստիարակմանը, ինչպես նաև առողջության ամրապնդման անհրաժեշտությանը:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պետական ծրագիրը և տիպօրինակներն ամբողջությամբ՝ որպես սոցիալական երևույթ, հիմնված են մի շարք՝ ֆիզիկական դաստիարակության կատարելագործման անհրաժեշտությունը հաստատող գիտամեթոդական մոտեցումների վրա: Դրանց թվին է դասվում նաև ֆիզկուլտուրային կրթությունը, որի պարտադիր պայմաններից է գործնական և տեսամեթոդական ուսումնական նյութի համադրությունը, որում անմասն չեն մնում օլիմպիական գաղափարախոսության դաստիարակման թեմաները:

Կարելի է պնդել, որ առանց գիտելիքների, դպրոցականի գիտակցական

գործունեության ոչ մի գործողություն՝ շարժողական հմտությունների յուրացմամբ, դրանց՝ առողջության ամրապնդման և ֆիզիկական զարգացման նպատակով գործնական կիրառում հնարավոր չէ [3,4]:

Սպորտը և ֆիզիկական կուլտուրան տարբեր հասկացություններ են այն առումով, որ սպորտի նպատակն առավելագույն արդյունքների հասնելն ու պարգևների արժանանալն է, որը ներառում է նաև մրցակցության որոշակի աստիճան: Արդի շրջանում չափազանց կարևոր է մրցակցային դաշտում պահպանել օլիմպիական գաղափարախոսությունը, որը կյանքի փիլիսոփայություն է, վեհացնող և միացնող բարոյական արժեքի ամբողջություն՝ մեկ մարմնում [5]: Օլիմպիզմի բնութագիրը կատարյալ գործիք է խաղաղության ամրապնդման համար, որի նպատակն է՝ սպորտում նպաստել ներդաշնակ մարդու զարգացմանը՝ պահպանելով մարդկային արժանապատվությունը [4]:

Հետազոտության նպատակը, խնդիրները: Հետազոտության **նպատակն է**՝ ուսումնասիրել պատանիների գիտելիքներն օլիմպիզմից և նախաձեռնել միջոցառումներ:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Բացահայտել պատանիների գիտելիքների իմացությունը օլիմպիզմից:
2. Մշակել մանկավարժական համապատասխան մոտեցումներ:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության **մեթոդներն են**՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում և վերլուծում, սոցիոլոգիական հարցում: Նպատակ ենք ունեցել հետազոտել սովորողների գրագիտության և կրթվածության մակարդակը օլիմպիական գաղափարախոսությունից: Բացի դրանից, ենթադրվել է որոշել փորձագետների հետաքրքրությունները «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից՝ օլիմպիական գաղափարախոսության գիտելիքների կատարելագործման վերաբերյալ:

Սոցիոլոգիական հարցմանը մասնակցել են Վայոց Ձոր մարզի համայնքային դպրոցների 15-17 տարեկան շուրջ 150 աշակերտներ:

Հարցաթերթի հարցերը կազմվել են բաց և փակ ձևաչափով, ինչն օժանդակեց հիմնախնդրի բազմակողմանի և խորը ուսումնասիրությանը:

Ստացված արդյունքների վերլուծություն:

Սովորողների հարցաթերթիկը ընդգրկում էր 5 հենքային հարցեր՝ 36 այլընտրանքային պատասխաններով, որին մասնակցել են 10, 11 և 12-րդ դասարանների երկու սեռի 150 սովորողներ (յուրաքանչյուր դասարանից 50 երեխա):

Արդյունքում բացահայտվել է, որ դասարանից դասարան սովորողներին ավելի շատ են հետաքրքրում սպորտի ոլորտում օլիմպիական գաղափարախոսության մասին գիտելիքները՝ 82-ից մինչև 96 տոկոսը:

Սովորողների մեծ մասը (4-11 տոկոս) այդ գիտելիքների նկատմամբ անտարբեր է, իսկ նրանց 7 տոկոսը կարծում է, որ այդպիսի գիտելիքներ պետք չեն:

Հաջողվեց բացահայտել, որ ֆիզիկական կուլտուրայից և սպորտից օլիմպիական գիտելիքների ձեռքբերման գլխավոր աղբյուրը հեռուստահաղորդումներն են (70-77 տոկոս). 10-12-րդ դասարանների սովորողների շուրջ 50 տոկոսը դիտում են սպորտին նվիրված ֆիլմեր: Ուրախալի է նաև այն, որ տարբեր տարիքի որոշակի թվով դպրոցականներ (6-15 տոկոս) կարդում են մասնագիտական գրականություն:

Սովորողներն արդյո՞ք ստանում են բավարար գիտելիքներ ֆիզիկական կուլտուրայի դասերին հարցին, 21-24 տոկոսը դրական պատասխան են տվել, ընդ որում՝ 12-րդ դասարանում այդ տոսկոսը նվազում է: Ոչ լիարժեք գիտելիքներ են ստանում հարցվողների 61-70 տոկոսը: Ֆիզկուլտուրային գիտելիքներ ձեռք չեն բերում սովորողների 5 տոկոսը (10-րդ դասարան), 12 տոկոսը (11-րդ դասարան) և 6 տոկոսը (12-րդ դասարան):

Խոսելով տեսական պարապմունքների տեղի մասին՝ բացահայտվել է, որ հարցվողներից յուրաքանչյուր 5-7-ը ճիշտ են համարում միայն ֆիզիկական կուլտուրայի դասերը, իսկ մինչև 12 տոկոսը՝ նաև ուսումնական պլանի մյուս առարկաների պարապմունքները: Հետաքրքիր է, որ հարցվողների որոշակի մասն ընդգծում են տեսական գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման հնարավորությունը (3-5 տոկոս): Հատկապես պետք է նշել, որ հարցվողներն առաջարկում են օլիմպիական գիտելիքների կատարելագործման նպատակով առանձին դասեր անցկացնել: Նմանատիպ կարծիք ունեն 10-րդ դասարանցիների 36 տոկոսը, 11-րդ դասարանցիների 17 տոկոսը և 12-րդ դասարանցիների 47 տոկոսը, ինչը շատ ուշագրավ է:

Սոցիոլոգիական հարցման արդյունքում հաջողվեց բացահայտել տեսական պարապմունքների թեմատիկային վերաբերող ևս մի շարք սկզբունքային հարցեր:

Սովորողների սոցիոլոգիական հարցման ընդհանրացված միջինացված տվյալները հաստատում են վերը նշված փաստերը: 10-ից 9 սովորողներին զգալի հետաքրքրում են օլիմպիական և սպորտի տեսական գիտելիքները, և միայն 2,3 տոկոսին այդպիսի գիտելիքներ պետք չեն: Հաստատվել է նաև, որ մոտավորապես

23 տոկոսը ֆիզիկական կուլտուրայի դասերին ստանում են նմանատիպ բավարար գիտելիքներ, 65 տոկոսը՝ ոչ լիարժեք:

Սույն հետազոտության հետաքրքրության շրջանակում ուրախալի է նշել, որ սովորողների 94.3 տոկոսն անհրաժեշտ է համարում ֆիզիկական կուլտուրայից և սպորտից օլիմպիական գաղափարախոսության մասին գիտելիքների ընդլայնումը և ավելացումը: Ցավոք, մոտ 6 տոկոսը չի հաստատում այդ կարծիքը: Ցույց է տրվել, որ օլիմպիական գաղափարախոսությամբ գիտելիքները պետք է տրվեն ֆիզիկական կուլտուրայի (55.7 տոկոս) և մյուս առարկաների դասերին (7.3 տոկոս): Ուշադրության է արժանի և այն փաստը, որ օլիմպիական գաղափարախոսությամբ գիտելիքների ձեռքբերման համար անհրաժեշտ են առանձին կազմակերպված պարապմունքներ (33.3 տոկոս), ինչպես նաև գիտելիքների ինքնուրույն ձեռքբերում:

Ընդհանրացված վերլուծության արդյունքում մեզ հաջողվեց նաև բացահայտել սովորող-հարցվողների ցանկությունը. այսպես՝ նրանց ավելի շատ հետաքրքրում է օլիմպիական խաղերին հայ մարզիկների մասնակցությանը (33.6 տոկոս), օլիմպիական գաղափարախոսության դերը (27.8 տոկոս) և օլիմպիական խաղերում արատավոր երևույթների օրինակներին (10.3 տոկոս) առնչվող հարցերը:

Սովորողների համար պակաս հետաքրքիր չէ նաև մի շարք այլ հարցերի, ինչպես օրինակ «արդարացի խաղի», ֆիզիկական կուլտուրայի դասերին անվտանգության ապահովման, առաջին օգնություն ցույց տալու ուսումնասիրումը և այլն:

Ստացված տվյալները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և, բնականաբար, դրանք որոշակի նախապայման են՝ կազմակերպելու հատուկ միջոցառումներ-հանդիպումներ, որոնք ուղղված կլինեն՝ զինելու աշակերտներին օլիմպիական գաղափարախոսությամբ:

Ցավոք, դպրոցում ֆիզիկական կուլտուրայի դասին երեխաները ցատկում են, վազում, գնդակ խաղում, այդ պատճառով էլ առարկայից և օլիմպիական գաղափարախոսությունից տեսական պատրաստության մակարդակը ցածր է: Հետևաբար, համակարգը արմատական փոփոխությունների կարիք ունի:

Հետազոտությունը կրում է շարունակական բնույթ:

Եզրակացություն: Հետազոտության արդյունքում բացահայտվեց, որ դպրոցահասակ 10-12-րդ դասարանի աշակերտները ցանկություն ունեն ընդլայնելու գիտելիքներն օլիմպիական խաղերից և օլիմպիզմից: Ինտելեկտուալ ակտիվության ցածր մակարդակի պատկերը փոխելու համար, որպես օլիմպիական գիտելիքների հաղորդման ձևեր՝ պետք է

իրականացվեն զրույցներ՝ ֆիզիկական կուլտուրայի դասերին, գրականության ուսուցչի կողմից հանձնարարված ինքնուրույն ընթերցումներ, հատուկ տեսական պարապմունքներ և օլիմպիական գաղափարախոսությամբ զինելու միջոցառումներ:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Հ.Յու., Դեռահաս դպրոցականների տեսական գիտելիքների ձևավորման մեթոդիկան ֆիզիկական կուլտուրայի դասերին, Թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2018, 110 էջ.
2. Գյոզալյան Ա.Գ., Կրտսեր դպրոցականների օլիմպիական դաստիարակության մեթոդիկայի առանձնահատկությունները, Սեղմագիր, Երևան, 2015, էջ 22:
3. Ղազարյան Ֆ.Գ., Ստեփանյան Ա.Գ., Ֆիզիկական ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի որոշ առանձնահատկություններ, Մանկավարժական միտք, N 1 – 2, 2010, էջ 65 – 69:
4. ՀՀ օրենք կրթության մասին, Երևան, 1999:
5. ՀՀ օրենք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին, Երևան, 2001:
6. Собянин Ф.И., О преподавании в школе основ теории физической культуры // Физкультура в школе. – 2007. -N 1. – с. 17 – 19
7. Урок в современной школе: проблемы и реальные возможности // Физкультура в школе. – 2010. – N 7. – с. 2 – 9
8. Lenk H., Personliche Leistung, sport und Erziehung sportprogramm. – In Inter – nationale Zeitschrift fur Sport – padagogik. Schordorf - 2016. – N 2. – ss. 9 -17

KNOWLEDGE OF HIGH SCHOOL STUDENTS OF OLYMPISM. SOCIOLOGICAL OBSERVATION

PhD, Associate Professor A.Yu. Avagyan, PhD M.S. Barbaryan
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia.

ABSTRACT

Key words: Olympic movement, Olympism, unity, solidarity, physical culture, modern sports, education, spiritual improvement of a person.

Research aim. To study the level of knowledge of older students in Olympism and determine the pedagogical conditions for its improvement and activities to equip students with Olympic knowledge.

Research methods and organization: To study and analyze professional literature, a sociological survey. We pursued the goal of studying the level of literacy and education of students in Olympism. It was supposed to determine the interests of experts in improving the knowledge of the Olympic ideology in the subject "Physical culture".

Analysis of research results: As a result of the study, a real picture of the level of knowledge of older students in Olympism and the Olympic movement, gaps and omissions in the process of physical education was revealed. The reasons are identified, which include socio-economic transformations in the Republic of Armenia, insufficient number of hours allocated for Olympic education, etc., which is confirmed by the corresponding digital material.

Conclusions: The data obtained confirm the need for a purposeful Olympic education in high school, which is one of the ways to develop the Olympic movement as a whole. The author develops pedagogical approaches to improve the level of knowledge of schoolchildren in Olympism, which will be tested in the process of school education.

ЗНАНИЯ СТАРШЕКЛАССНИКОВ ОБ ОЛИМПИЗМЕ. СОЦИОЛОГИЧЕСКОЕ НАБЛЮДЕНИЕ

К.п.н., доцент А.Ю. Авагян, к.п.н. М.С.Барбаряан
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: олимпийское движение, олимпизм, единство, солидарность, физическая культура, современный спорт, воспитание, духовное совершенствование человека.

Цель исследования. Изучить уровень знаний старших школьников по олимпизму и определить педагогические условия для его совершенствования и мероприятия по вооружению учащихся олимпийскими знаниями.

Методы и организация исследования. Изучение и анализ специальной литературы, социологический опрос. Мы преследовали цель изучить уровень грамотности и образованности учащихся по олимпизму. Предполагалось определить интересы экспертов по совершенствованию знаний олимпийской идеологии по предмету «Физическая культура».

Анализ полученных результатов. В итоге исследования выявлена реальная картина уровня знаний старших школьников по олимпизму и олимпийскому движению, пробелы и упушения в процессе физического воспитания. Определены причины, к числу которых относятся социально-экономические преобразования в РА, недостаточное количество часов, выделяемых на олимпийское образование и т.д., что подтверждается соответствуюшим цифровым материалом.

Краткое выводы. Полученные данные подтверждают необходимость целенаправленного олимпийского образования в старшей школе, что является одним из путей развития олимпийского движения в целом. Автором разрабатываются педагогические подходы по совершенствованию уровня знаний школьников по олимпизму, которые будут апробированы в процессе школьного образования.

Հոդվածն ընդունվել է 23. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 24.09. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՀՏԴ 796.032 DOI: 10.53068/25792997-2022.3.7-20

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Պրոֆեսոր Ա.Գ.Հարությունյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E.mail:anahit1958h@mail.ru

Առանցքային բառեր: Օլիմպիական կրթություն, մասնագիտական կարողություններ, հումանիստական ուսուցում, դեմոկրատական ոճ, փոխհարաբերություններ, բուհ:

Հետազոտության արդիականություն: Օլիմպիական շարժման համակարգում առաջնային է մանկավարժական գործունեությունը, որի նպատակն է՝ ապահովել երեխաների և երիտասարդների հաղորդակցումն օլիմպիզմի գաղափարներին և արժեքներին: Գրականության և մանկավարժական գործընթացներում հաճախ կիրառվող օլիմպիական կրթություն, օլիմպիական մանկավարժություն և այլ նմանատիպ արտահայտություններն ամրագրում են վերոգրյալ գործընթացի կարևորությունը [6]: Օլիմպիական կրթությանը վերաբերող բազմաբովանդակ հարցերը գիտական քննարկումների առարկա են միջազգային, ազգային, տարածքային գիտաժողովներում, սեմինարներում [5,6,7]: Մեր երկրում իրականացվում են գիտամեթոդական տարբեր բնույթի ուսումնասիրություններ, որոնք ամփոփվում են գիտական հոդվածներով կամ ատենախոսական աշխատանքներով, իսկ 2021 թվականին ՀՖԿՍՊԻ-ում կազմակերպվող «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողովի աշխատանքային ուղղություններում առկա է «Օլիմպիական սպորտ. օլիմպիզմը, օլիմպիական կրթությունը և ժառանգությունը ժամանակակից սպորտում» բաժինը: Վերոգրյալը առաջադրում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական ուսուցման ոլորտում օլիմպիական կրթությանը վերաբերող գիտելիքների ուսուցման և փոխանցման գործընթացների կազմակերպմանը թե՛ տեսական բովանդակության, և թե՛ գործնական աշխատանքների կազմակերպման մակարդակներում:

Հասարակության դեմոկրատական զարգացման պայմաններում ուսուցման համակարգում՝ օլիմպիական շարժման վերաբերյալ, մարդկության կողմից ամրագրված գիտելիքները, որոնք ձևավորում են անհատի զարգացման համար անհրաժեշտ ունակություններ, կարողութ-

յուններ, նշանակալի են ապագա մասնագիտական որակների ձևավորման գործընթացում: Ուսուցման հումանիստական բնույթը և դեմոկրատական ոճը, դասախոսի ու ուսանողների փոխհարաբերությունները «Օիմպիական շարժման» (բակալավրիատ), «Օիմպիական կրթություն»» (մագիստրատուրա) դասընթացները կազմակերպելիս պահպանում են որոշակի սկզբունքներ՝ դասընթացի բովանդակությունը համակցվում է տեսական և գործնական գիտելիքներով, գիտական ուսումնասիրություններով, իսկ մեթոդական հնարքների ընտրությունը հնարավորության սահմաններում և պայմաններում ուսանողների վրա թողնում է անհատական ազդեցություն[1]: Բուհում ուսումնական գործընթացի ժամանակակից մոդելը, նոր սերնդի կրթական չափորոշիչների ներդրումը, որը նախատեսում է իրավասությունների վրա հիմնված մոտեցում, մարզումները, ինչպես նաև միջազգային սպորտի և օլիմպիական շարժման ոլորտում իրողությունները թելադրում են առարկաների և հատուկ դասընթացների վերանայման և ճշգրտման ակնհայտ անհրաժեշտություն՝ ուսանողների մոտ համապատասխան ընդհանուր մշակութային և մասնագիտական կարողություններ ձևավորելու նպատակով: Այս հանգամանքը պահանջում է «օլիմպիական կրթության, օլիմպիական շարժման» ուսուցման նորովի հետազոտական խնդրի ձևակերպում, որոնք թելադրված են մի կողմից մասնագիտական կրթության օպտիմալացման և էմպիրիկ գիտելիքների շրջանակն ընդլայնելու կարևոր խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, որը պայմանավորված է պատասխանատվությունների, պարտավորությունների անհրաժեշտ պահանջների բացակայությամբ, նաև օլիմպիական կրթության վերաբերյալ բուհի որոշ աշխատակազմի գիտական գործունեության և իմացության, տեղեկության նվազագույն մակարդակով, մյուս կողմից՝ լսարանային ժամերի կրճատման պայմաններում՝ խնդիրը լուծել ուսանողի ինքնուրույն աշխատանքի թեմաների առաջադրման մակարդակում [2]: Կարծում ենք մասնագիտական կրթական ծրագրերի ստեղծման հեղինակների կողմից օլիմպիական կրթության և շարժման սկզբունքների անտեսելը խոչընդոտում է օլիմպիական կրթության ամբողջական բովանդակության իրականացմանը, խախտում մասնագետների մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման և կատարելագործման ամբողջությունը՝ որպես ապագա ուսուցիչ, մարզիչ, լրագրող, փրկարար և այլք:

Հետազոտության նպատակը: Ընդլայնել «Օլիմպիական կրթություն», «Օլիմպիական շարժում», «Պարալիմպիկ շարժում» դասընթացներում առկա ինք-

նուրույն աշխատանքների թեմաների կառուցվածքը, ներառյալ պահանջվող բովանդակությունը և փոխհամագործակցել մասնագետներ թողարկող ամբիոնների հետ՝ առաջադրելով «Ընտրած մարզաձևի տեսություն և մեթոդիկա» /կամ այլ/ դասընթացի ինքնուրույն աշխատանքների բովանդակությունում ներառել օլիմպիական կրթության և շարժման վերաբերյալ թեմաներ՝ նպատակաուղղված մանկավարժական գործունեության անհրաժեշտ ակտիվացմանը՝ մասնագիտական առավել բարձր արդյունքների ձեռքբերման համար:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ առաջնային աղբյուրների հավաքում, վերլուծություն և համակարգում, համեմատություն և հակադրում, մտավոր փորձ, նաև առարկաների բովանդակությունը, դրանց փոխհարաբերություններն ու փոխկապվածությունը:

Ստացված արդյունքների վերլուծություն: Պատմությունը ցույց է տալիս, որ օլիմպիական կրթությունն առավել զարգացած է եղել բուհերում, որոնց հիման վրա 2011 թվականին կազմակերպվել են տարբեր բովանդակության վերապատրաստման կենտրոններ՝ ծառայելու ամառային և ձմեռային օլիմպիական խաղերին, օլիմպիզմի գաղափարներին: Անցկացվել և անցկացվում են մեծ թվով «Օլիմպիական ուղղվածությամբ վերապատրաստումներ», օլիմպիական դասեր, թեմատիկ հանդիպումներ և ստեղծվում են նոր ուսումնական ծրագրեր: Ուսումնասիրել ենք Կուբանի ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և զբոսաշրջության պետական համալսարանի փորձը [8], որտեղ իրականացվել է օլիմպիական կրթության բովանդակության ուսուցման փուլային ներդրում՝ որպես հիմնական և լրացուցիչ ուսուցման ձև պարտադիր դասընթացներում և բուհի ընդհանուր կրթական գործընթացի սահմաններում:

Ակնհայտ է, որ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում մասնագիտացումների ապագան անմիջականորեն կապված է ՀՀ զարգացման տարբեր նախադրյալների հետ, նաև՝ տարբեր երկրների զարգացման ռազմավարության ու փորձերի հետ (դեմոկրատական, իրավական պետություն, այլ տնտեսության շուկայական հարաբերություններ, ազգային գաղափարախոսությունների համադրումներ և այլն): Սակայն, առողջ հասարակության դաստիարակությունը պետական մակարդակի խնդիր է: Բուհում օլիմպիզմի խորհրդանիշի պահպանման շարունակականությունը մեծ հնարավորություն է սպորտային մանկավարժությունը դիտել որպես հասարակության մշակույթի անբաժանելի մաս: Տվյալ գործընթացը կազմակերպելու և կառավարելու տեսանկյունից առաջարկում ենք Ազգային

օլիմպիական ակադեմիայի վերահսկողության ներքո բուհում սահմանել պատասխանատվության հետևյալ մեխանիզմը



Անհրաժեշտ է բուհում «Օլիմպիական կրթություն», «Օլիմպիական շարժում», «Ընտրած մարզաձևի տեսություն և մեթոդիկա» դասընթացները դիտարկել երկու տեսանկյունից.

1. օլիմպիական կրթությունը՝ որպես բուհում ուսանողների մասնագիտական պատրաստության բաղադրիչ,

2. օլիմպիական կրթությունը՝ որպես ուսանողների մասնագիտական վերապատրաստման բաղադրիչ:

Առաջին տեսակետը ռազմավարական նշանակություն ունի ոլորտային կրթության մասնագիտական առարկաների դասավանդման համակարգի կատարելագործման համակարգում՝ հաշվի առնելով պատմական գիտությունների առաջնահերթությունը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բաղադրիչը, նաև ՄՕԿ-2020 օրակարգին համապատասխան կոչերը, որտեղ ՄՕԿ-ի նախագահ Թ.Բախը և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Ա.Գուտերիշը դիմում են օլիմպիական շարժման համակարգում բոլոր ընդգրկվածներին՝ տարածել տեղեկատվություն օլիմպիական սպորտի առաջավոր փորձի վերաբերյալ, մասնավորապես՝ առողջ ապրելակերպի մակարդակում և 2020թվականի հունիսի 23-ին օլիմպիական մարզիկները և օլիմպիական շարժման ակտիվիստները ընդունում են օլիմպիական շարժման բովանդակության տարածման էստաֆետը [9]:

Միևնույն ժամանակ, միջազգային սպորտի և օլիմպիական շարժման ոլորտում ժամանակակից իրողությունները, ինչպես նաև դինամիկ զարգացող պատմական և սպորտային գիտությունը և տեղեկատվական բազայի զգալի ընդլայնումը միանշանակ հանգեցնում են ինքնուրույն աշխատանքների թեմատիկայի ճշգրտմանը, նաև նորերի մշակմանը և ներդրմանը օլիմպիական կրթության էմպիրիկ բաղադրիչի հետագա կատարելագործման համար:

Այս համատեքստում մեր կողմից ուսումնասիրվել է Ե.Վ.Դվինսկայայի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ապագա մասնագետների օլիմպիական կրթություն՝ հիմնված անհատականության մոտեցման վրա» խորագրով ատենախոսությունը (ՀԱԿ ՌԴ, 13.00.04, 181 էջ, 2013), որտեղ մանկավարժական դիտարկումը ցույց է տվել, որ ուսանողների մեծամասնությունը օլիմպիզմի վերաբերյալ գիտելիքները գործնականում չեն փոխանցում, չեն գիտակցում բազմաթիվ դասընթացների ողջ նշանակությունն ու խորությունը: Կարծում ենք սա առարկայակենտրոն ուսուցման արդյունք է, որն ակնառու է նաև մեր շրջանավարտների մոտ: Այսինքն՝ մասնագիտացման տարբեր փուլերում խախտվում է կամ չեն շեշտադրվում միջառարկայական կապերի կարևորությունը: Նման կապի խախտումը հանգեցնում է մանկավարժական գործընթացի ֆունկցիոնալ և բովանդակային դադարի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակի նվազման: Օլիմպիական կրթության բաղադրիչի ինտեգրումը կնպաստի ուսումնական գործընթացի ամբողջականության ամրապնդմանը, կապահովի մասնագետի ձևավորումը, որը կարող է հարգալից վերաբերմունք ցուցաբերել տարբեր գաղափարների և մշակույթի արժեքների նկատմամբ, կնպաստի կարծրատիպերի վերացմանը [2,3,4]: Օլիմպիական կրթության բովանդակության բաղադրիչների ինտեգրումը հնարավորություն է ստեղծում ներդնել հոգևոր և բարոյական արժեքային հիմքեր, փոխել մանկավարժական իրականության ազգային և մշակութային ասպեկտների մասին պատկերացումների մակարդակը, էապես փոխել մանկավարժական գործունեության բովանդակությունը, հարստացնել մասնագիտական և մանկավարժական գործառույթները:

Առաջին տեսակետի իրականացման համար ներկայացնում ենք ինքնուրույն աշխատանքների որոշ թեմաներ, որոնք արտացոլում են օլիմպիական կրթության բաղադրիչների իրականացման պայմանները և առարկայական փոխկապակցվածությունը.

«Օլիմպիական զբոսաշրջություն. պատմություն և արդիականություն», «Ըստ մարզաձևերի աշխարհը միջազգային սպորտում», «Երիտասարդական սպորտային շարժումը տարբեր մարզաձևերում», «Պատանեկան օլիմպիական խաղերը, դրանց մասշտաբները ներկա փուլում», «Միջազգային սպորտը՝ որպես սոցիալական երևույթ», «Ժամանակակից միջազգային սպորտի և օլիմպիական շարժման կազմակերպչական կառուցվածքը», «Քաղաքակրթություն և օլիմպիզմ», «Առողջության և առողջ ապրելակերպի օլիմպիական իդեալը. սպորտի դերը երիտասարդների հիվանդություններրի և հակասոցիալական վարքագծի կանխարգելման գործում», «Ադապտիվ սպորտ և պարալիմպիկ շարժում», «Հակադոպինգային կանոնակարգ», «Օլիմպիականի կերպարը», «Միջազգային սպորտային և օլիմպիական շարժման գիտական և կիրառական ասպեկտները», «Միջազգային սպորտային և օլիմպիական շարժում և զանգվածային լրատվության միջոցներ», «Գովազդը միջազգային սպորտում և օլիմպիական շարժման մեջ», «Օլիմպիական խաղերի էկոնոմիկա», «Հակադոպինգային կանոնակարգ». «Սպորտի կառավարման և գործունեության մոդելներն աշխարհի երկրներում. համեմատական վերլուծություն», «Տեսություն և խոշոր միջազգային մրցումների կազմակերպման պրակտիկա», «Օլիմպիական կրթության տեխնոլոգիաներ ուսանող երիտասարդների համար», «Սպորտի տնտեսական ասպեկտները և՝ երեխաների, և՝ երիտասարդների հումանիստական դաստիարակությունը», «Օլիմպիական դասերի կազմակերպման ձևերը» և այլն, նաև այն ակտիվացնել բուհական ուսուցման այլ ձևաչափերում (մանկավարժական պրակտիկա, տարբեր մակարդակի սպորտային և մշակութային միջոցառումներ և այլն):

Երկրորդ տեսակետը՝ Օլիմպիական կրթությունը՝ որպես ուսանողների մասնագիտական վերապատրաստման բաղադրիչ, բնութագրվում է մի շարք հիմնարար դրույթներով. մասնագետների վերապատրաստման բովանդակության և որակի կարգավորող պահանջներ. ունի առաջատար բնույթ՝ արտահայտված սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային միտումների արտացոլմամբ՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների պատրաստման բովանդակության և որակի մեջ: Այն կարելի է իրականացնել տարբեր ձևերով՝ բազմաառարկայական, ինտեգրատիվ, ընտրովի վերապատրաստման դասընթացներ: Ուսանողների պատրաստակամության մակարդակները որոշելու համար պետք է օգտագործվեն հետևյալ չափանիշերը. հարգանք և, այն ար-

տահայտելու կարողություն, կենտրոնանալ երկխոսության, համագործակցության և համահեղինակության վրա, անհատականության զարգացման հնարավորությունների մասին գիտելիքների համակարգ, թիմային գործունեության վրա հիմնված իրավիճակներ ստեղծելու փորձ[1]:

Ուսումնասիրությունը կրում է շարունակական բնույթ: Կանխատեսում ենք՝ ոլորտում օլիմպիզմի գաղափարների և արժեքների տարածման մակարդակներում արդեն իսկ յուրօրինակ փորձը և ուսանողներին տրված օլիմպիական գիտելիքները հնարավորություն կստեղծեն բուհին պահպանել առաջնայնությունը առկա օլիմպիական կրթության հասարակաքաղաքական համակարգում:

Եզրակացություն: Օլիմպիական կրթության աշխատանքային ծրագրերի բովանդակության փոխկապակցվածությունը մասնագիտացող ուսանողների ինքնուրույն աշխատանքների թեմաների բովանդակության հետ ոչ միայն կնպաստի օլիմպիական, սպորտային, պատմական թեմաների վերաբերյալ էմպիրիկ գիտելիքների համապարփակ լուսաբանմանը, այլև կլուծվեն կրթական տարբեր խնդիրներ: Մասնավորապես, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուսումնական հաստատություններում օլիմպիական կրթության տեսական և գործնական գիտելիքները կիրականացվի՝ որպես մասնագիտական ուսուցման բաղադրիչ, ինչը կնպաստի ոլորտում մասնագիտական կրթության հետագա կատարելագործմանն:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Լեոնտևա Ն.Ս., Լեոնտևա Լ.Ս., Կորենևա Մ.Վ, Օլիմպիական կրթություն դասընթացի բովանդակության ձևավորում՝ հաշվի առնելով միջազգային սպորտի և օլիմպիական շարժման զարգացման ժամանակակից միտումները, Օլիմպիական կրթության տեսություն և պրակտիկա. ավանդույթներ և նորարարություններ սպորտում, զբոսաշրջությունում և սոցիալական ոլորտում, Կրասնոդար, 2018. էջ 28-33:

2. Լեոնտևա Լ.Ս., Լեոնտևա Ն.Ս., Կորենևա Մ.Վ. Օլիմպիական կրթություն դասընթացի ուսուցման արդյունավետության բովանդակությունը և գնահատումը, Մարզիկների մրցունակության ռեսուրսները. իրականացման տեսություն և պրակտիկա. 2018 N 1, էջ 145-147:

3. Լեոնտևա Ն.Ս., Լեոնտևա Լ.Ս., Կորենևա Մ.Վ. Օլիմպիական կրթության ընտրության դասընթացի իրականացման ասպեկտները բարձրագույն կրթության

արդիականացման համատեքստում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում, Օլիմպիզմ. ծագումներ, ավանդույթներ և արդիականություն, Վորոնեժ, Գիտական գիրք, 2017, էջ 51-56:

4. Մելնիկովա Ն.Յու., Լեոնտևա Ն.Ս., Սամոիլովա Է.Ա., Լեոնտիևա Լ.Ս., Օլիմպիական կրթություն դասընթացի աշխատանքային ծրագիր, 49.03.01 «Ֆիզկուլտուրա» մարզման տարածք, Մոսկվա, 2017, 21 էջ:

5. Ստոլյարով Վ.Ի., Օլիմպիական նախագիծ «Սպարտ» (հիմնական գաղափարները և իրականացման առաջին քայլերը) // Տարեգիրք, Մ., 1993.-Ս.36-49:

6. Ստոլյարով Վ.Ի. ,Երիտասարդ սերնդին ծանոթացնելով օլիմպիզմի իդեալներին և արժեքներին (խնդիրներ, դժվարություններ, ուղիներ) // Ձեկույցների համառոտագիր. II գիտագործնական կոնֆ. Պերմ, 1993. - թիվ 2, էջ 5-8:

7. Ստոլյարով Վ.Ի., XXI դարի սպորտի հումանիստական ուղղվածության մոդելի ձևավորում // Օլիմպիական շարժում և սոցիալական գործընթացներ. VII Համառուս. գիտագործնական. Կոնֆ., Կրասնոդար, 1996, էջ 9-20:

8. Коренева, М. В. Комплексирование ценностного потенциала физической культуры и олимпизма в процессе физического воспитания студентов вуза: автореф. дис. … канд. пед. наук / М. В. Коренева. – Краснодар, 2015. – 24 с.

9. /https://www.who.int/ru/news/item/23-06-2020-ioc-joins-forces-with-who-and-the-united-nations-to-fight/.

OLYMPIC EDUCATION AS A COMPONENT OF PROFESSIONAL TRAINING

Professor A.G. Harutyunyan
Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: Olympic education, skills, humanitarian education, democratic style, interpersonal relations, university.

Purpose and objectives of the study: The expansion of the subject of independent work of students in conditions of reducing classroom hours from subjects “Olympic Movement”, “History of physical culture and sports”. At the level of interdependence, to propose, if possible, to introduce topics on Olympic education in independent work within the framework of general educational programs of the university.

Research methods: Analysis of primary sources, comparison, mental experiment.

Analysis of research results: On the example of the Kuban State University of Physical Culture, Sports and Tourism, the authors are presented with the point of view that Olympic education is very important in the training of specialists and the preservation of universal values. The author claims that the Olympic education unites and complements the special training of specialists. He offers to revise the topics of independent work of students in special educational programs for implementation.

Conclusion: The interrelation and interdependence with the disciplines "Olympic Movement" and "Olympic education" implemented within the framework of special educational programs of the university, it can be considered that the practical result achieved in the educational process and in the training of specialists, will ensure the development of the Olympic movement.

ОЛИМПИЙСКОЕ ОБРАЗОВАНИЕ КАК СОСТОВЛЯЮЩАЯ СПЕЦИАЛЬНОГО ОБУЧЕНИЯ

Профессор А.Г.Арутюнян,
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: олимпийское образование, навыки, гуманистическое образование, демократический стиль, взаимоотношение, вуз.

Задачи и цель исследования. Расширение тематики самостоятельных работ обучающихся в условиях сокращения аудиторных часов по предметам <<Олимпийское движение>>, <<История физической культуры и спорта>>. На уровне взаимообусловленности предлогать, по возможности, внедрить темы по олимпийскому образованию в самостоятельных работах в рамках общеобразовательных программ вуза.

Методы исследования. Анализ первоисточников, сравнение, мысленный эксперимент.

Анализ результатов исследования. На примере Кубанского государственного университета физической культуры, спорта и туризма, автором представлена точка зрения о том, что олимпийское образование очень важно в деле подготовки специалистов, сохранения общечеловеческих ценностей. Автор утверждает, что

олимпийское образование, об'единяет и дополняет специальное обучение специалистов. Предлогает для осуществления пересмотреть темы самостоятельных работ студентов в спецообразовательных программах.

Выводы. Взаимосвязь и взаимообусловленность с дисциплиннами <<Олимпийское движение>> и <<Олимпийское образование>> реализуемой в рамках спецообразовательных программах вуза, то можно расчитать, что в воспитательном процессе и в подготовке специалистов достигнутый результат практически обеспечит развитие олимпийского движения.

Հոդվածն ընդունվել է 19. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 23.09. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.թ., պրոֆեսոր Հ. Թումանյան

ՀՏԴ 338.46 DOI: 10.53068/25792997-2022.3.7-30

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԲԻԶՆԵՍՈՒՄ ՖԻԹՆԵՍ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Դասախոս Կ.Ս.Քոչարյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
Email: karine.qocharyan@sportedu.am

Առանցքային բառեր: Հյուրանոցային բիզնես, սպորտային ծառայություններ, ֆիթնես ինդուստրիա, զբոսաշրջային բիզնես, առողջարարական հյուրանոց, հյուրընկալության ձեռնարկություն, այցելուների սպասարկում, հասարակության պահանջ, մարկետինգային հետազոտություն:

Հետազոտության արդիականություն: Մեր հանրապետությունը սոցիալական ներկայիս իրավիճակում հյուրանոցային բիզնեսի ծավալների պահանջվածությամբ չի կարող համեմատվել արտասահմանյան շուկայի ծավալների հետ: Ֆիթնես ծառայությունների մակարդակը հյուրանոցային բիզնեսում շատ ցածր է: Վերջին տարիներին ՀՀ-ում աշխատաշուկայի մեծացման և կայացման ուղղությամբ կատարվում են բարեփոխումներ: Անխոս, անհրաժեշտություն կա տվյալ գործընթացներին զուգահեռ հյուրանոցներում ստեղծել և զարգացնել ֆիտնես ոլորտի փոխշահավետ համագործակցության լայն ցանց ու ներդնել նոր ֆիթնես ծառայություններ: Հարկ է նշել, որ աշխարհի շատ հայտնի բիզնես շինությունների, բանկերի ու հատկապես SS ոլորտի ընկերությունների շենքերի ու թաղամասերի պարտադիր մասն են կազմում ֆիթնես ակումբները, ինչպես նաև շատ բիզնես մեգապոլիսների (Նյու-Յորք, Հոնգ-Կոնգ, Տոկիո, Դուբայ, Մոսկվա, Սիլիկոնե Հովիտ և այլն) հյուրանոցներում սկսել են նորից արդյունավետությամբ կիրառել այս ոլորտի ներդրման աշխատանքները [1,2]: Հետազոտվող թեման ունի ինքնատիպ բնույթ՝ գրական աղբյուրների վերլուծության համատեքստում:

Հետազոտության նպատակը, խնդիրները: Հետազոտության **նպատակն է՝** ուսումնասիրել հյուրանոցային բիզնեսում սպորտային ծառայությունների ներդրման անհրաժեշտությունն ու դրա շնորհիվ բարձրացնել մրցունակությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Բացահայտում սոցիալական խմբերին առաջարկվող ծառայությունների որակի բարձրացման ուղիները:

2. Տվյալ պետության շուկային համարժեք ուսումնասիրել մարկետինգային երկկողմանի մտածողությունը:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության **մեթոդներն են՝** մասնագիտական գրականության ուսումնասիրում և վերլուծում, հաճախորդի հոգեբանական վերլուծություն, հյուրանոցային բիզնեսում սպորտային ծառայությունների մարկետինգային իրավիճակի գնահատում:

Ստացված արդյունքների վերլուծություն: Սույն հետազոտության հրատապությունը պայմանավորված է շուկայական հարաբերությունների անցման ներկա պայմաններում հյուրանոցների կառավարումը բարելավելու համար գտնել անհրաժեշտ լավագույն լուծումները: Հյուրանոցային ծառայությունների որակի վրա ազդող գործոնների քննարկումն ուղղված է ծառայությունների մակարդակի և հյուրանոցային ծառայությունների արդյունավետության բարձրացմանը: Շուկայական հարաբերությունների զարգացումը հանգեցնում է նոր խնդիրների առաջացմանը, ինչը պահանջում է կառավարման բարելավում: Շուկայական հարաբերությունների պայմաններում զբոսաշրջությունը տնտեսության դինամիկ ճյուղերից մեկն է համարվում, իսկ դրա զարգացման բարձր տեմպերը, արտարժութային եկամուտների մեծ ծավալներն ակտիվորեն ազդում են տնտեսության տարբեր հատվածների վրա, նպաստում՝ սեփական զբոսաշրջության ոլորտի ձևավորմանը:

Զբոսաշրջության ոլորտը կազմում է համաշխարհային համախառն ներքին արդյունքի 6%-ը, համաշխարհային ներդրումների 7%-ը, ամեն 16-րդ գործը [3,4]:

Օտարերկրյա հեղինակների հետազոտական ժառանգությունը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ արևմտյան երկրներում հյուրանոցային ձեռնարկությունների կառավարման ոլորտում առկա է հսկայական փորձ [5]: Գաղտնիք չէ, որ հյուրընկալության ոլորտի ձեռնարկությունների արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը, իհարկե, մեծ դեր է խաղում այցելուների սպասարկման որակի բարձրացման գործում, սակայն, զուգահեռաբար դժվար է որակյալ սպասարկող անձնակազմին, հաճախորդներին սպասարկել, եթե այն ունի անհասկանալի գաղափար, արդյոք ժամանակակից սպասարկման մակարդակի պահանջները ներկայացնում են այցելուները:

Այս առումով անհրաժեշտ է վերանայել և ուսումնասիրել հյուրանոցային բիզնեսի կառավարման ծառայությունների որակը:

Հյուրանոցային համալիրների և զբոսաշրջային բիզնեսի վերլուծության և նրանցում առաջարկվող հիմնական ծառայությունների վերաբերյալ նոր մոտե-

ցումների նպատակն է ստեղծել տեսական նյութերի ամբողջություն, որը հնարավորություն կտա ապագա սպասարկման մենեջերներին ճանաչել հյուրընկալության ոլորտը, դրա տեսակները, առաջարկվող հիմնական ծառայությունները, դրանց մատուցման նրբությունները, ինչն էլ կնպաստի որակյալ կադրեր պատրաստելուն և գործատուների պահանջների բավարարմանը: Զբոսաշրջության դերը երկրի տնտեսական աճի, հասարակության պահանջների բավարարման, երկրների միջև կապի հաստատման գործում անգնահատելի է: Զբոսաշրջության ոլորտն իր ուրույն տեղն է զբաղեցնում շատ զարգացած և զարգացող երկրների տնտեսության մեջ. շատ երկրներ ապրում են հենց տուրիզմից ստացված եկամուտով: Բացի այդ, ոլորտն առաջարկում է զբոսաշրջային ծառայությունների ծավալուն համակարգ, որը մեր երկրում դեռ զարգացման փուլում է:

Ուսումնասիրությունները թույլ են տալիս փաստել, որ ծառայությունների ոլորտը համապատասխան որակյալ մասնագետների կարիք ունի, որոնց պակասը հնարավոր է լրացնել ՄԿՈՒ համակարգում ընթացող բարեփոխումների և կարողություններին միտված պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, որոնք ընդգրկում են «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», «Հիմնական ծառայությունների կազմակերպումը հյուրանոցային համալիներում» ձեռնարկները: Ձեռնարկներում ներկայացված են հյուրանոցային գործի զարգացման պատմությունը, գործընթացի կազմակերպման իրավական հիմքերը, հյուրանոցային օբյեկտների տեսակներն ու առաջարկվող ծառայությունները [6,7,8]:

Ձեռնարկներում տեղ են գտել հյուրանոցում առաջարկվող հիմնական ծառայությունները՝ հաճախորդի ամրագրում, ընդունում ու տեղավորում, տեղեկատվության մատուցում, ծառայությունների ֆինանսական հաշվարկ և դուրսգրում, հյուրանոցային համարի սպասարկման ծախսեր, սննդի սպասարկման կազմակերպում, անվտանգության համակարգի շահագործում և սանիտարական պայմանների պահպանում, տեխնիկական սպասարկման կազմակերպում: Ձեռնարկներում ներկայացվում է նաև հյուրանոցային գործի և զբոսաշրջության զարգացման պատմությունը, որտեղ պատմվում է հյուրանոցների առաջացման և զարգացման, առաջին հյուրընկալության տների, ժամանակակից հյուրանոցների նախատիպերի մասին, որոնք առաջացել են մոտավորապես մեր թվարկությունից 2000 տարի առաջ՝ հին արևելյան քաղաքակրթությունում:

Հյուրանոցային ինդուստրիայի նախատիպերի մասին տեղեկություններ կարելի է ստանալ՝ ուսումնասիրելով այն արձանագրությունները, որոնք գիտնականները վերագրում են Հին Հռոմին և Հունաստանին:

Ժամանակակից տուրիզմը բնութագրվում է որպես հանգստամիջոց՝ ուժերը վերականգնելու, առողջությունն ամրապնդելու, ինչպես նաև մարդու այլ կենսական պահանջներ բավարարելու համար. հյուրընկալության ոլորտի զարգացման վերջնակետը հյուրանոցն է: Հասնելով համապատասխան բարձունքի և՛ տնտեսությունում, և՛ հասարակական կյանքում զբաղեցնելով կարևոր տեղ՝ հյուրանոցային գործը զարգացման նոր տեմպեր է արձանագրում: Ամեն օր բացվում են նոր հյուրանոցներ, վերանորոգվում են հները, ավելացվում է հյուրանոցային համարների քանակը, բարելավվում է սպասարկման կուլտուրան:

Շահույթ հետապնդող հյուրանոցները պարտադիր պետք է ապահովեն ֆիթնես և առողջարարական ծառայություններ:

Այսօր հյուրանոցները տրամադրում են հիմնական, լրացուցիչ և օժանդակ սպորտային ծառայություններ՝ լողավազան ու մարզադահլիճ, սաունա, շոգեբաղնիքներ և ջակուզի, ավտոկայանատեղի և պահոցներ: Միևնույն ժամանակ, երկրորդ և երրորդ կարգի ծառայությունների համար, որպես կանոն, լրացուցիչ վճար չի պահանջվում: Հյուրանոցային սպառողները հիմնականում օգտվում են մարզադահլիճից և լողավազանից, շոգեբաղնիքի և ջակուզիի պահանջարկը շատ ավելի փոքր է: Հետևաբար, հյուրանոցներում շատ հաճախ կարելի է տեսնել լողավազան՝ առանց շոգեբաղնիքի և ջակուզիի:

Հյուրանոցի առողջարարական և մարզական ծառայությունների ցանկը կախված է նրա աստղերի թվից, ապրանքային նշանից, գտնվելու վայրից, զբաղեցրած տարածքից և, իհարկե, սեփականատիրոջ երևակայությունից:

Սպորտի և հանգստի օբյեկտների մասշտաբները և ամբողջականությունը որոշվում են՝ ըստ սեփականատերերի առաջնահերթությունների՝ հյուրանոցի տեղանքը, գումարը, այցելուների պահանջները, թափուր տեղերի առկայությունը. այստեղ չկա մեկ ստանդարտ:

Առողջարանային հյուրանոցներում սպորտային ծառայությունների տարածքը հիմնականում ներառված է հյուրանոցների տարածքում: Բայց կան այս կանոնից շատ բացառություններ: «JW Mariott Seoul» հյուրանոցը, որը գտնվում է Կորեայի մայրաքաղաքի բիզնես կենտրոնում, այցելուներին տրամադրում է գոլֆի և squash-ի տարածք: Իսկ մայրաքաղաքի «Marquis Thermal Spaand Fitness Club»-ի մարզական կենտրոնը զբաղեցնում է 495,870 ք.մ: Հաճախ հյուրանոցներն

ունենում են բացօթյա լողավազաններ, թենիսի կորտեր, գոլֆի և ֆուտբոլի դաշտ: Իհարկե, ամեն ինչ կախված է հյուրանոցի ենթակառուցվածքի պրոֆիլից և տեխնիկական հնարավորություններից:

Օրինակ՝ «Cronwell Resort Yugorskaya Dolina» չորս աստղանի հյուրանոցն ունի սաունա, թուրքական բաղնիքներ, բացօթյա ջերմային լողավազան, նետաձգության սրահ և խաղահրապարակ, թենիսի կորտեր և մի սահադաշտ: Լեռնադահուկային հանգստավայրերում կառուցված հյուրանոցները հիմնականում ունեն իրենց երթուղիները: Որոշ հաստատություններ հյուրերին տրամադրում են տարբեր ծառայությունների վարձակալում՝ հատկապես հեծանվով հագստացողների համար հատուկ երթուղի, որն անցնում է գեղեցիկ ծածկերով և կանաչ տարածքներով:

Սպորտի և առողջապահական ծառայությունների ընտրությունը, որոնք տրամադրվում են հյուրանոցներում, հիմնականում լողավազանն և մարզադահլիճն է, գումարած սաունա և ջակուզի: Բայց այս դեպքում նույնպես կարող են լինել բացառություններ. մոսկովյան «Baltschug Kempinski Moscow Hotel» հյուրանոցն առաջարկում է նայելով Կրեմլին՝ անցկացնել յոգայի դասընթացներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Հյուրանոցային ընկերությունների կողմից տրամադրվող սպորտի և հանգստի ծառայությունների համեմատական բնութագրերը

Ծառայություններ	Հյուրանոցի անունը					
	Aurora	Prestige	Diana	Grove of Brides	Октябрьская	Aquamarine
Սաունա	+	+	+	+	_	+
Լողավազան	+	+	+	+	_	+
Բիլիարդի սենյակ	+			+	_	
Մերսման սենյակ	+	+	+	+	_	+
Կոսմետոլոգի սենյակ	+	_	_	_	_	_
Ֆիտնես կենտրոն	+	_	+	+	_	_
Այրուք	+	_		_	_	_
Շոգեբաղնիք	_	+	+	_	_	_
Ձկնորսություն	_	+	_	_	_	_
Ձիարշավ	_	+	_	_	_	_
Սեղանի թենիս	_	_	+	_	_	_

Եզրակացություն: Հետազոտության արդյունքում պարզեցինք, որ հյուրանոցներում անհրաժեշտ է ապահովել՝

1. ֆիթնես ծառայությունների առաջընթացը,
2. դրանց մրցունակությունը,
3. ֆիթնես ծառայությունների պահանջարկի սեգմենտների յուրահատկության ընկալումը,
4. ֆիթնես ծառայությունների կոմունիկացիաների քաղաքականության առանձնահատկությունները:

Ներկայումս գործարար միջավայրում արդիական է ոչ միայն բիզնես հաջողությունը, այլև գնահատման և կանխատեսումների անհրաժեշտությունը, որի համար անհրաժեշտ է անցկացնել շուկայի հետազոտություն: Փորձը ցույց է տալիս, որ շուկայում կարևոր որոշումներ կայացնելու համար հետազոտության հնարավոր չէ հավաքել բոլոր տեղեկությունները և համակարգված վերլուծել, ուստի շուկայի ընտրության, ինչպես նաև վաճառքի ծավալների, շուկայի կանխատեսումների և պլանավորման գործունեության առնչությամբ անհրաժեշտ է ցուցաբերել համակարգված մոտեցում:

Հյուրանոցային շուկայում ֆիթնես ծառայությունների աճը մեծապես պայմանավորված է մարկետինգային հետազոտության անընդհատությամբ: Շուկան գնահատող անկախ ընկերությունները փաստում են, որ ֆիթնես ծառայությունների տեսակարար կշիռը շուկայում շատ փոքր է:

Հյուրանոցներում ֆիթնես ծառայությունը, ոչ թե սպորտային շարժում է, այլ առողջ ապրելակերպի կոնցեպտ, որտեղ իրենց պահանջմունքները կարող են գտնել թե արհեստավարժ մարզիկները, և թե շարքային քաղաքացիները, որն էլ ընդգծում է այս ոլորտի մեծ հնարավորություններն ու սպառման պոտենցիալը: Շուկայի ընդլայնման տեսանկյունից սա ևս շահավետ միտում է:

Հյուրանոցներում ֆիթնեսի նկատմամբ հետաքրքրվածության աճի ու նրա նորաձևության մեջ մտնելուն զուգահեռ աճում է նաև ֆիթնեսի տարբեր պարագաների, հագուստի ու բրենդների շուկան: Ստեղծվում են ֆիթնեսի և նորաձևության համագործակցության այնպիսի օրինակներ, ինչպիսիք են Reebok-ը, CrossFit-ը և UFC-ի, որի պարագայում վերջինները խթանում են առաջինի ապրանքաշրջանառության մեծացմանը:

Ուսումնասիրելով արտասահմանյան հյուրանոցներում ձմեռային սպորտաձևերի չափազանց մեծ հետաքրքրությունն և, ինչու չէ նաև դրանց բարձր արժեքը՝ այս առումով կա մեծ պոտենցիալ, մեր հանրապետության տարբեր վայրերում այդպիսի հյուրանոցներ կառուցելու կամ եղածը ձմեռային անիմացիաներով հարստացնելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է նշել նաև պետության դրդապատճառները, որոնք հետաքրքրված և շահագրգռված են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմամբ: Այն բարձրացնում է աշխատողների աշխատունակությունը, զարգացնում է նրանց ինտելեկտուալ և ֆիզիկական հնարավորությունները, ընդլայնում է նրանց մտահորիզոնը, հետաքրքրությունների շրջանակը:

Այսպիսով՝ սպառողն ընտրում է այն ապրանքը, որի արժեքը համապատասխանում է իր ունեցած գումարին: Ըստ մարկետինգի պահանջարկի՝ սպառումը ձևակերպվում է հետևյալ կերպ՝ մարդու պահանջմունք, որն ամրապնդվում է նրա գնողականությամբ:

Շուկան գնահատող անկախ ընկերությունները փաստում են, որ մեր հանրապետության հյուրանոցներում ֆիթնես ծառայությունների տեսակարար կշիռը շուկայում շատ փոքր է: Սա է պատճառը, որ այս թեզում ուսումնասիրել եմ նաև շուկայական պիտանիության մակարդակը:

Այս առումով նպատակահարմար եմ գտնում Երևանի հյուրանոցներին առաջարկել, որ համագործակցեն քաղաքի ֆիթնես ակումբների հետ՝ հաշվի առնելով մեր քաղաքի կոմունիկացիաների մոտիկությունը:

Հյուրանոցներում ֆիթնես կենտրոնի վերազինումը թույլատրելի է մինչև 17% տարեկան տոկոսադրույքով՝ վարկի օգտագործման պայմաններում (կարճ ժամկետներում)՝ իր շահույթից վարկի հետգնման պայմանով:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андреев О.В., Технология бизнеса – маркетинг. –М.: Прогресс. 2007 с. 224
2. Дёмина И. Н., Теоретические основы рекламного дела: Учеб. Пособие. - Иркутск: Иркут. ун-т, 1996. - 92 с.3.
3. Котлер Ф., Основы маркетинга. - М.: Прогресс, 1990, с. 511.
4. Пунин Е. И., Маркетинг, менеджмент и ценообразование на предприятиях (в условиях рыночной экономики). - М.: Междунар. отношения, 1993. - 112 с.
5. Уткин Э.А., Кочеткова А.И. Рекламное дело. М.: Ассоциация авторов и издателей «Тандем». Издательство ЭКМОС, 1998. - 272 с.
6. http://www.booksites.net/download/chadwickbeech/index.html
9. https://www.inderscience.com/browse/index.php?journalID=102

THE ROLE AND IMPORTANCE OF FITNESS INDUSTRY IN THE DEVELOPMENT OF HUMAN POTENTIAL IN THE HOTEL BUSINESS

Lecturer K.S. Qocharyan
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Key Words: Hotel business, sports services, fitness industry, tourism business, Wellness hotel, hotel business, visitor service, public demand, marketing research.

Research aim: To study the necessity of introducing sports services in the hotel enterprise and increasing competitiveness due to it.

Methods and organization of the research: The research methods are the study and the analysis of professional literature, psychological analysis of the client, assessment of the marketing situation of sports services in the hotel business.

Analysis of research results: To improve the knowledge of professional specialists and to establish contribution in the field, using the experience of global, particularly Russian, European and local markets. Guided by the principles of re-equipment and improvement at first, find a unique and stable place in the market, and afterwards think about price changes, without forgetting the prime cost pricing.

Conclusion: Fitness service in hotels is not a sports movement, but a concept of a healthy lifestyle, where both professional athletes and ordinary citizens can meet their needs and interests. This emphasizes great opportunities and consumption potential of this sector.

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ФИТНЕС-ИНДУСТРИИ В РАЗВИТИИ ЧЕЛОВЕЧЕСКОГО ПОТЕНЦИАЛА В ГОСТИНИЧНОМ БИЗНЕСЕ

Преподаватель К.С.Кочарян
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: гостиничный бизнес, спортивные услуги, фитнесиндустрия, туристический бизнес, оздоровительный отель, обслуживание посетителей, общественное требование, маркетинговые исследования.

Цель исследования. Изучить необходимость внедрения спортивных услуг в гостиничный бизнес и повышение конкурентноспособности в этом процессе.

Методы и организация исследования. Методы исследования: изучение и анализ специальной литературы, психологический анализ клиента, оценка маркетинговой ситуации спортивных услуг в гостиничном бизнесе.

Анализ полученных резлуьтатов. Используя опыт мирового, в частности российского, европейского и местного рынка, необходимо создать и развивать знания профессиональных специалистов в данной отрасли. Руководствуясь вначале принципами переоснащения и совершенствования, найти на рынке уникальное и устойчивое место, после чего подумать об изменениях цен, не забывая о ценообразовании себестоимости.

Краткие выводы. Фитнес-сервис в гостиницах-это не спортивное движение, а концепция организации здорового образа жизни, где свои потребности и интересы могут удовлетворить как профессиональные спортсмены, так и обычные граждане, что подчеркивает большие потенциальные возможности фитнес-индустрии.

Հոդվածն ընդունվել է 21. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 22.09. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ԲԱԺԻՆ 2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՏԴ 612.63/66 (075.83) **DOI: 10.53068/25792997-2022.3.7-39**

ՄԱՐԴՈՒ ՃԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դասախոս Ա. Հ. Գուլյան,
ավագ դասախոս Հ. Գ. Կյոկչյան,
մ.գ.թ., դոցենտ Հ.Ս.Գասպարյան
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Երևան, Հայաստան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E.mail: agulyan86@mail.ru, hakopkyokchyan1961@gmail.com, hayk.gasparyan@sportedu.am

Առանցքային բառեր: Ճկունություն, թեստավորման մեթոդներ, որակական գնահատում, քանակական գնահատում, գնահատման սանդղակներ:

Հետազոտության արդիականություն: Գաղտնիք չէ, որ ճկունությունը մարդու հիմնական շարժողական ընդունակություններից է: Ճկունության մշակման ու գնահատման հարցերը սպորտի ոլորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառի շատ գիտնականների հետաքրքրության կենտրոնում հայտնվեցին հատկապես նախորդ դարի կեսերից [10]: Արևմուտքում գործած գիտնականների և նրանց աշխատանքների մասին բավականին տեղեկություններ կան Մ.Ալտերի [2], Ռ.Փեյտի և համահեղինակների աշխատանքներում [10]: Ճկունության տեսության զարգացման գործում ԽՍՀՄ գիտնականներից իրենց ներդրումն են ունեցել Հ.Թոփալյանը, Բ.Սերմեևը, Ա.Իաշվիլին, Գ.Թումանյանը և այլք: Ճկունության մշակման ու գնահատման հարցերին իրենց դասագրքերում, ձեռնարկներում պարբերաբար անդրադարձել են ֆիզիկական դաստիարակության հայտնի մասնագետներ Լ.Պ.Մատվեևը, Ֆ.Գ.Ղազարյանը և ուրիշներ: Հարկ է նշել, որ մինչ այժմ սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառի գիտնականների կողմից պարբերաբար հրատարակվում են մարդու ճկունության մշակման և գնահատման վերաբերյալ

տարատեսակ աշխատանքներ [1,5,6,9, 10]:

Գիտահետազոտական աշխատանքներում ճկունության հետազոտության նպատակով կիրառում են տարբեր մեթոդներ՝ օպտիկական, մեխանիկական, մեխանոէլեկտրոնային, ռենտգենային [2,5]: Մանկավարժական գործունեությունում ճկունությունը գնահատվում է հատուկ մշակված թեստերի, նորմատիվային սանդղակների կամ որոշակի չափանիշերի միջոցով:

Թեմային առնչվող մեթոդական գրականության և գիտական հոդվածների ուսումնասիրության ընթացքում նկատվեց, որ առանձին հեղինակներ տարբեր կերպ են թեստավորում և գնահատում ճկունությունը [1,2,3,5]: Այդուհանդերձ, ուսումնասիրված հեղինակների աշխատություններում նկատվեց մեկ ընդհանրություն: Շատ հեղինակներ իրենց աշխատանքներում թեստերի միջոցով ճկունությունն առաջարկում են գնահատել քանակական բնութագրով: Ինչպես հայտնի է, ճկունությունը կարելի է գնահատել ինչպես քանակական, այնպես էլ որակական բնութագիր ունեցող թեստերով [3]: Ընդ որում՝ մի շարք թեստեր ունեն և՛ քանակական, և՛ որակական բնութագրեր: Գրականության վերլուծության ընթացքում պարզվեց, որ ճկունության որակական գնահատման մասին տեղեկությունները զգալիորեն քիչ են և համակողմանիորեն մեկնաբանված չեն: Այս հանգամանքն ընդգծում է թեմայի արդիականությունը: Բացի այդ, հարկ է նշել, որ ուսումնասիրված գրական աղբյուրներում ճկունության թեստերն առաջարկելիս հեղինակները չեն նշում դրանց դրական և բացասական կողմերը (թերություններն ու առավելությունները), ինչի արդյունքում այդ թեստերը կիրառողը, օրինակ՝ դասախոսը կամ գիտահետազոտական աշխատանք կատարողը, կարող է թեստերի ընտրության և դրանց արդյունքները մեկնաբանելիս՝ ճիշտ չկողմնորոշվել կամ որոշակի մոլորության մեջ ընկնել: Ի դեպ, ճկունության թեստերի կիրառման մասին օբյեկտիվ տեղեկություններ պետք են նաև դպրոցականներին, ուսանողներին, մարզիկներին, որոնք սեփական մարմնի ճկունության ինքնավերահսկողության նպատակով կարող են կիրառել այս կամ այն թեստը: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ աշխատանքում փորձ է արվել համակողմանի վերլուծել վերոնշյալ խնդիրները:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ճկունության գնահատման ժամանակակից մեթոդները:

Հետազոտության խնդիրներն են՝ 1. Ուսումնասիրել մասնագիտական գրականությունում ճկունության գնահատման առաջարկվող մեթոդները: 2. Վերլուծել ճկունության քանակական և որակական

գնահատման թեստերի դրական ու բացասական կողմերը: 3. Ճկունության գնահատման համար առանձնացնել հարաբերականորեն պարզ ու մատչելի թեստեր:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտությունն իրականացվել է թեմային առնչվող գիտամեթոդական գրականության վերլուծության միջոցով: Ուսումնասիրվել է 50-ից ավելի աղբյուր՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով: Դրանցից առանցքայինները ներկայացված են աշխատանքում: Հետազոտությունն իրականացվել է 2022-ին:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: <<Ճկունություն>> բառը լատիներենից (flectere, flexibilis) թարգմանաբար նշանակում է <<ծալել>>: Առանձին բառարաններում թարգմանվում է՝ ծալվելու ընդունակություն, առաձգականություն, դյուրամշակելիություն, դյուրաթեքություն և այլն [1,2]: Ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառներում <<ճկունություն>> հասկացությունը դիտարկվում է որպես շարժողական ընդունակություն: Մասնագիտական գրականությունում մի շարք հեղինակների կողմից (Հ.Կրաուս, Լ.Ե.Հոլթ, Լ.Պ.Մատվեև, Ն.Գ.Օզոլին) ներկայացվել են ճկունության տարբեր սահմանումներ [1,2,10]: Համարվում է, որ <<ճկունության>> սահմանումը՝ որպես շարժողական ընդունակություն, առաջին անգամ առաջարկել է Ն. Գ. Օզոլինը (1949 թ.), որը մինչ այժմ կիրառվում է սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառներում: Համաձայն վերջինիս սահմանման՝ ճկունությունը մեծ լայնույթով շարժումներ կատարելու ընդունակություն է [1]: <<Ճկունություն>> տերմինի կիրառելիությունը մի շարք մասնագետներ (Բ.Վ.Սերմեև, Վ.Ն.Պլատոնով, Ժ.Կ.Խոլոդով) ընդունելի են համարում մարմնի առանձին հոդերի շարժունակությանը գումարային գնահատական տալուց [1], իսկ այն դեպքերում, երբ խոսքն առանձին հոդի մասին է, ապա ընդունելի է վերջինիս շարժունակությունը (օրինակ՝ շարժունակությունը սրունքթաթային կամ ուսային հոդերում): Հայտնի է, որ առանձին հոդերի շարժունակության միջև էական կապեր չկան: Այս պատճառով, հաճախ անհրաժեշտություն է առաջանում ճկունությունը գնահատելիս կիրառել թեստերի համալիր, որում ներառվում է առանձին հոդերի շարժունակության գնահատման թեստեր:

Ներկայումս սպորտի ոլորտում գոյություն ունեն հոդերում շարժունակության գնահատման տարբեր մեթոդներ: Կիրառում են տարբեր սարքավորումներ, եռանկյունաչափական բանաձևեր, համակարգչային տեխնիկա և այլն [1,2,5,9]: Այդուհանդերձ, մարզչամանկավարժական գործունեությունում առավել հաճախ

կիրառում են պարզ կառուցվածք ունեցող թեստեր, որոնք այլ կերպ անվանվում են շարժողական թեստեր կամ ստուգողական վարժություններ: Դրանք, որպես կանոն, առանձնանում են բավականին մեծ հուսալիությամբ: Ճկունության գնահատման շատ թեստերի հուսալիության ցուցանիշները տատանվում են 0,85 - 0,95 շրջանում [1]: Պետք է նշել, որ կան որոշ թեստեր, որոնց հուսալիության և ինֆորմատիվության ցուցանիշները շոշափելիորեն տարբերվում են վերը նշված ցուցանիշներից [10]:

Վ.Մ. Բոգդանովը և Լ.Պ. Բոգդանովը ճկունության գնահատման բոլոր թեստերը առաջարկում են դասակարգել երկու խմբում [3]: Ըստ այդ դասակարգման՝ ճկունության գնահատման թեստերը լինում են՝ քանակական և որակական: Առաջին դեպքում թեստավորման արդյունքները գնահատվում են սմ-ով, անկյունային աստիճաններով կամ ինդեքսային ցուցանիշներով [3,4]: Քանակական բնութագիր ունեցող թեստերը պահանջում են նաև հատուկ մշակված մոդելային սանդղակներ: Այդ սանդղակների մշակումը պահանջում է հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, մասնագիտությունը, առողջական վիճակը, մարդաչափական տվյալները [1]: Ինչպես հայտնի է, տարիքի հետ մեկտեղ ճկունությունը նվազում է: Ճկունության մի շարք ցուցանիշներով աղջիկները գերազանցում են (20-30 տոկոս) տղաներին և այլն [1]:

Քանակական բնութագրերով գնահատման մոդելային սանդղակը՝ որպես կանոն, արտահայտվում են թվային ցուցանիշներով և ունենում են որոշակի աստիճանակարգում (օրինակ՝ բարձր, միջին, ցածր): Հարկ է ընդգծել, որ ճկունության քանակական բնութագրերով թեստերի արդյունքները գնահատելիս՝ թեստավորողը պետք է հաշվի առնի մի պայման, որի մասին հաճախ չի խոսվում: Հայտնի է, որ <<որքան շատ, այնքան լավ>> սկզբունքը ճկունությունը գնահատելիս միշտ չէ, որ գործում է: Այստեղ պետք է որոշակի վերապահում: Չափից ավելի ճկունությունն (հոդերում շարժունակությունն) ունի նաև բացասական կողմ: Հոդերում մեծ շարժունակությունը նախադրյալ է ստեղծում հոդերի ապակայունացման և վնասվածքների ռիսկայնության մեծացման համար: Բացի այդ, չափից ավելի ճկունությունը կարող է խոսել որոշակի հիվանդությունների առկայության մասին: Պատահական չէ, որ մարդու շարժողական ապարատի առանձին օղակներով մեծ լայնույթով շարժումները բնութագրելիս՝ ճկունություն հասկացությունից բացի տարբերում են նաև <<հոդերի գերշարժունակություն>> կամ <<չափից ավելի շարժունակություն>> հասկացությունները [1,2]: Հոդի չափից ավելի շարժունակությունը կարող

է պայմանավորված լինել խրոնիկ վնասվածքներով կամ ժառանգական (բնածին) խանգարումներով, ինչպես օրինակ՝ Էլերս-Դանլոսի համախտանիշը (ռուս.՝ Синдром Элерса - Данлоса, անգլ.՝ Ehlers-Danlos Syndrome): Գերշարժունակության գնահատման նպատակով գրականությունում առաջարկվում են որոշ մեթոդներ [1,2]: Ի դեպ, վիճակագրական տվյալների համաձայն՝ մարդկանց 4-7 տոկոսին հատուկ է հոդերի գերշարժունակությունը [2]:

Ճկունության քանակական գնահատման համար հաճախ մասնագիտական գրականությունում, հոդվածներում առաջարկում են հետևյալ թեստերը՝ 1. <<իրանի թեքում առաջ>>, 2.<<կքանիստ>>, 3.<<կամուրջ>>, 4.<<լարան>>, 5.<<ձեռքերի ոլորում փայտով>>, 6. <<ձեռքերի հետ տարածում փայտով>>, 7. <<թիթեռ>> («бабочка»), 8. <<ոտնաթաթի ծալում>>, 9. <<ոտնաթաթի տարածում>>, 10. <<ոտք զատում կողմ>> և այլն [1,5,6,7,8]: Նշված թեստերն ունեն բավականին պարզ կառուցվածք և գնահատվում են սանտիմետրերով ու անկյունային աստիճաններով: Հարկ է նշել, որ ներկայացված թեստերը համարվում են ներկայումս գոյություն ունեցող ճկունության գնահատման թեստերի մի մասը: Նկատվեց, որ հեղինակները հաճախ ճկունության գնահատման նորմատիվները մշակելիս հաշվի չեն առնում մարդկանց մարդաչափական ցուցանիշները: Այս երևույթը պետք է դիտարկել որպես թերություն: Նշված բացը վերացնելու նպատակով որոշ մասնագետներ խորհուրդ են տալիս ճկունության գնահատման սանդղակները մշակելիս կիրառել ինդեքսների մեթոդը [4]:

Մասսայական մարզումների և ինքնահսկողության ժամանակ առավել նպատակահարմար է համարվում որակական բնութագրերով թեստերի կիրառումը [3]: Ի դեպ, նկատվեց, որ այս խմբի թեստերի մասին գրականությունում հարաբերականորեն քիչ է խոսվում: Տարբեր տարիքի և սեռի մարդկանց ճկունության որակական գնահատման նպատակով առաջարկվում են մի շարք թեստեր, մասնավորապես՝ <<նիստ կրունկներին>>, <<արտակորում պատի առաջ>>, <<իրանի թեքում կողմ, ձեռքը վեր>>, <<դաստակի տարածում>>, <<իրանի թեքում առաջ>>, <<ձեռքերի ծալում մեջքին>> (անգ.՝ scratch test), <<ոտնաթաթի տարածում>>, <<լարան>>, <<Կոբրա>>, Կրաուս-Վեբերի (մատների հպում հատակին 10 վրկ.) և այլն [1,2,3,5]: Այս թեստերն ունեն պարզ կառուցվածք, իսկ դրանց գնահատումը չի պահանջում որևէ սարք կամ չափումների համար նախատեսված գույք: Գնահման համար անհրաժեշտ է օգտվել պարզ մեթոդական ցուցումներից, որոնք առկա են թեստերի բնութագրերում

[1,3,5]: Ճկունության որակական գնահատման համար նախատեսված թեստերը, ի տարբերություն քանակական գնահատման թեստերի, կիրառման և գնահատման առումով հարաբերականորեն պարզ են ու մատչելի: Վերը նշված հանգամանքներն արտահայտում են ճկունության որակական գնահատման թեստերի դրական կողմը: Որակական գնահատման թեստերի արդյունքները թույլ չեն տալիս մեծ ճշգրտությամբ կատարել համեմատություններ, ինչի պահանջը զգացվում է մարզիկների, դպրոցականների կամ ուսանողների ճկունության դինամիկան գնահատելիս, ինչպես նաև առանձին համախմբերի (օրինակ՝ ըստ սեռի, ֆակուլտետի, դասարանի և այլն) ցուցանիշները համեմատելիս: Որակական բնութագիր ունեցող թեստերի մյուս բացասական կողմն այն է, որ այդ թեստերն առաջարկող հեղինակները, որպես կանոն, չեն ընդգծում սեռական և տարիքային տարբերությունները: Այդուհանդերձ, հոդվածում առաջարկված որակական բնութագրերով թեստերը թույլ կտան առանց որևէ հատուկ սարքավորումների և սանդղակների որոշակի ճշգրտությամբ գնահատել տարբեր տարիքի մարդկանց ճկունության մակարդակը: Հատկապես հատուկ մոդելային սանդղակների բացակայության դեպքում որակական բնութագրերով թեստերը կարելի է դիտարկել որպես այլընտրանք:

Տարածված որոշ տեսակետների համաձայն՝ առանձին թեստեր թույլ են տալիս գնահատել անհատի ընդհանուր ճկունությունը: Այդ նպատակով հաճախ առաջակում են կանգնած դիրքից <<իրանի թեքում առաջ>> թեստը [5]: Թեստի կատարումը պահանջում է կանգնած դիրքից (առանց ծնկները ծալելու) իրանը թեքել առաջ՝ ձեռքերն իջեցնելով ցած: Գնահատվում է հետևյալ կերպ. բավարար՝ մատները հպվում են հատակին, լավ՝ բռունցքները հասնում են հատակին, գերազանց՝ ափերը հպվում են հատակին: Այս և նմանատիպ այլ թեստերի կատարման ժամանակ ակնհայտորեն սահմանափակ թվով հոդեր են ներգրավվում աշխատանքի մեջ: Այսպիսով՝ ընդհանուր ճկունության գնահատման համար նախատեսված այս և նմանատիպ մյուս թեստերին պետք է որոշակի վերապահումով վերաբերել:

Եզրակացություն: Ինչպես քանակական, այնպես էլ որակական բնութագրերով թեստերն ունեն իրենց թերություններն ու առավելությունները: Դրանց ընտրությունը պայմանավորված է թեստավորողի նպատակից, իրավիճակից, պայմաններից, ձեռքի տակ եղած գույքից, առկա գնահատման սանդղակներից: Ճկունության թեստավորման և գնահատման առանձնահատկությունների մասին ներկայացված վերլուծությունն ու տեղեկությունները կնպաստեն ֆիզկուլտուրայի

ուսուցիչների, բուհերի դասախոսների հսկողության արդյունավետության բարձ-կողմից սովորողների ճկունության բացմանը:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Հ.Ս., Մարգարյան Մ.Ժ., Ճկունության մշակումը սպորտային մարմնամարզությունում, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2015, էջ 5-8, 75-83:
2. Алтер М. Дж., Наука о гибкости: Учеб. пособие / Александр Радзиевский (науч.ред.), Георгий Гончаренко (пер.с англ.). - К. : Олимпийская литература, 2001. с. 8, 130-131, 174-177.
3. Богданов В.М., Богданова Л.П., Гибкость и ее развитие: Метод. рекомендации / Самар. гос. аэро-косм. ун-т; Самара, 2004. с. 9-10, 15-17.
4. Бубэ Х. и др., Тесты в спортивной практике, изд. ФиС.- 1968, с.85-92.
5. Зайцева Т.В., Шутьева Е.Ю., Развитие гибкости у студентов посредством физических упражнений. Межрегиональный центр инновационных технологий в образовании. Киров: 2016. с. 81-85.
6. Собко С. Г., Собко Н. Г., Контроль развития гибкости студентов в отделении футбола. Научно-методическое обеспечение физического воспитания и спортивной подготовки студентов. Материалы междунар. науч.-практ. онлайн-конф., Минск : БГУ, 2021, с. 313-316.
7. Филимонова С.И., Физическая культура студентов специальной медицинской группы : учебник / С.И. Филимонова, Л.Б. Андрющенко, Г.Б. Глазкова, Ю.О. Аверясова, Ю.Б. Алмазова ; под ред. С.И. Филимоновой. -Москва: РУСАЙНС, 2020. - с. 110-112.
8. Drenowatz C, Hinterkörner F, Greier K., Physical Fitness in Upper Austrian Children Living in Urban and Rural Areas: A Cross-Sectional Analysis with More Than 18,000 Children. *International Journal of Environmental Research and Public Health*. 2020; 17(3):1045. [https://doi.org/10.3390/ijerph17031045]
9. Irurtia A. et al., Flexibility testing in young competing gymnasts using a trigonometric method: one-year follow-up, Apunts Med Esport. 2010;45(168): 2010. p. 235-242.
10. Pate R, Oria M, Pillsbury L. , Fitness Measures and Health Outcomes in Youth. Washington (DC):National Academies Press (US); 2012 Dec 10. [https:// www.ncbi. nlm.nih.gov/books/NBK 241315/]

ANALYSIS OF METHODS FOR ASSESSING HUMAN FLEXIBILITY

Lecturer A.H. Gulyan,
Senior lecturer H. G. Kyokchyan,
PhD. of Pedagogy, Associate Professor H.S. Gasparyan
Armenian State University of Economics, Yerevan, Armenia,
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: flexibility, testing methods, qualitative assessment, quantitative assessment, assessment scales.

Research aim: The study of modern methods for assessing human flexibility

Research methods and organization: The research was carried out through the analysis of scientific and methodological literature. More than 50 sources in Armenian, Russian, and English have been studied. The main ones are presented in the article. The research was carried out in 2022.

Research results and analysis: In the course of the study, the proposed methods for assessing flexibility were studied. Positive and negative aspects of quantitative and qualitative tests were also analyzed to assess flexibility. The study identified relatively simple and affordable tests for assessing flexibility.

Currently, there are various methods of assessing flexibility, which require the use of appropriate inventory, equipment, mathematical formulas, etc. In the process of physical education, simple structure tests are used, which are otherwise called control exercises. In some literary sources, tests for assessing flexibility are proposed to be divided into two groups. According to this classification, tests for assessing flexibility have quantitative and qualitative characteristics. In the first case, the test results are measured in cm, angular degrees or index indicators, in the second case - according to methodological guidelines. Quantitative tests require special equipment, inventory and specially designed model scales. The development of these scales requires taking into account factors such as age, gender, profession, health status, and anthropometric data. Unlike tests with quantitative characteristics, tests with qualitative characteristics are available for use, but the accuracy of the assessment is not high. These tests are not very suitable for comparing individual groups or for self-monitoring purposes.

Conclusion. Both quantitative and qualitative tests have their advantages and disadvantages. They should be applied depending on the situation, testing conditions, available assessment scales.

АНАЛИЗ МЕТОДОВ ОЦЕНКИ ГИБКОСТИ ЧЕЛОВЕКА

Преподаватель А. О. Гулян,
Старший преподаватель А. Г. Кекчян,
к.п.н., доцент Г. С. Гаспарян
Армянский государственный экономический университет, Ереван, Армения,
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: гибкость, методы тестирования, качественная оценка, количественная оценка, шкалы оценок.

Цель исследования. Изучение современных методов оценки гибкости человека.

Методы и организация исследования. Исследование проводилось путем анализа научно-методической литературы. Было изучено более 50 источников на армянском, русском и английском языках. Основные из них представлены в статье. Исследования проводились в 2022 году.

Анализ результатов исследования. В ходе исследования были изучены предлагаемые методы оценки гибкости. Также были проанализированы положительные и отрицательные аспекты количественных и качественных тестов для оценки гибкости. В ходе исследования были выявлены относительно простые и доступные тесты для оценки гибкости.

В настоящее время существуют различные методы оценки гибкости, которые требуют использования соответствующего инвентаря, оборудования, математических формул и т. д. В процессе физического воспитания, используются тесты с простой структурой, которые иначе называют контрольнимы упражнениями. В некоторых литературных источниках тесты для оценки гибкости предлагается разделить на две группы. Согласно этой классификации, тесты для оценки гибкости имеют количественные и качественные характеристики. В первом случае результаты тестирования оценивают в см, угловых градусах или индексных показателях, во втором

случае - по методическим указаниям. Количественные тесты требуют специальное оборудование, инвентарь и специально разработанные модельные шкалы. Разработка этих шкал требует учета таких факторов, как возраст, пол, профессия, состояние здоровья, антропометрические данные. В отличие от тестов с количественными характеристиками, тесты с качественными характеристиками доступны для использования, но точность оценки невысокая. Эти тесты не очень подходят для сравнения отдельных групп или для целей самоконтроля.

Краткие выводы. Как количественные, так и качественные тесты имеют свои преимущества и недостатки. Их следует применять в зависимости от ситуации, условий тестирования, наличия оценивающих шкал.

Հոդվածն ընդունվել է 25. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 03.10. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՀՏԴ 796.01 DOI: 10.53068/25792997-2022.3.7-49

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՀՀ վաստակավոր մարզիչ, դասախոս Հ. Շ. Թամիրյան
Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան
Email: ed.tamiryan@mail.ru

Առանցքային բառեր: Ֆիզիկական դաստիարակություն, ֆիզիկական պատրաստվածություն, առողջություն, ուսանող երիտասարդություն, հարցաթերթիկային հարցում, դրդապատճառ:

Հետազոտության արդիականություն: Մարդկային հասարակության զարգացման յուրաքանչյուր ժամանակաշրջանում առանձին կարևորություն է ստացել ֆիզիկական կուլտուրայի սոցիալական դերը և նշանակությունը ուսանող երիտասարդության համար: Ուսանողների ֆիզիկական դաստիարակության հարցերը միշտ էլ բուհի առաջնակարգ խնդիրներից է եղել՝ որպես նրանց համակողմանի, ներդաշնակ զարգացման, առողջության պահպանման և ամրապնդման, ֆիզիկական և մտավոր աշխատունակության բարձրացման, սոցիալականացման կարևորագույն միջոց [2]: Ինչպես տեսնում ենք, մի կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նշանակությունը ժամանակակից ուսանողների կյանքում անչափ պահանջված է, մյուս կողմից, նրանց գերակշռող մեծամասնությունը կանոնավոր չեն զբաղվում ֆիզիկական կուլտուրայով:

Ապացուցված է, որ ուսումնական գործընթացը բացասական ներգործություն է ունենում 32,6 տոկոս աղջիկների և 16,4 տոկոս տղաների հոգեկան առողջության վրա: Ուստի, պատահական չէ, որ վերջին ժամանակներս երիտասարդների առողջության պահպանման հարցերը դարձել են լուրջ մտահոգության առարկա, որն առավել կարևորվում է տարբեր միջազգային գիտաժողովներում: Այսպես՝ «Олимпийский спорт и спорт для всех» XXII միջազգային գիտաժողովում (Тбилиси, 2018) ներկայացվեցին զեկուցումներ, որտեղ բնութագրում էին առողջական վիճակի վատթարացման բազմակի փաստեր: Մասնավորապես, Վ. Ս. Սավչենկոն, Ն. Ի. Մոսկոլենկոն [12] ներկայացրեցին, որ ըստ բժշկական հետազոտությունների՝ Ուկրաինայի ավագ դպրոցականների 90 տոկոսն ունի տարբեր առողջական վիճակի շեղումներ, որոնցից 70 տոկոսը՝ տեսողության խնդիրներ, 60 տոկոսը՝ հենաշարժողական ապարատի խախտումներ, 40 տոկոսը՝ սրտանոթային համակարգի խնդիրներ, նույնքան տոկոս էլ աղեստա-

մոքսային հիվանդություններ: Դպրոց ընդունվող երեխաների միայն 35 տոկոսն են առողջ, իսկ շրջանավարտների՝ 11 տոկոսը, Ռուսաստանի Դաշնությունում՝ 20-25 տոկոսը:

Ուսանողների ֆիզիկական պատրաստությունը նույնպես գտնվում է անմխիթար վիճակում: Արագաշարժության ցուցանիշները համալսարանի տղաների 60,3 տոկոսի մոտ նույն վազքատարածության նորմատիվային պահանջներից ավելի վատ է: Ուսանողուհիներից վատ և շատ վատ գնահատականի արդյունք են ցույց տվել 87,9 տոկոսը: Ավելի վատթար վիճակ էր դիմացկունության վազք 500մ աղջիկների և 1000մ տղաների դեպքում: Տղաների 84,5 տոկոսը ցուցաբերել են վատ և շատ վատ արդյունքներ, իսկ աղջիկների 93 տոկոսի արդյունքները համապատասխանում են վատ և շատ վատ գնահատականներին [3]: Գրեթե նույն պատկերն է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողների մոտ [1]:

Կատարված հետազոտությունների ուսումնասիրությունները թույլ են տալիս փաստել, որ ներկայումս բուհերում ֆիզիկական դաստիարակությունը կազմակերպվում է ավանդական ձևերով, միջոցներով, մեթոդներով, որոնք ուսանողների մոտ չեն առաջացնում հետաքրքրություն: Ուսանողները շատ հաճախ խուսափում են պարտադիր ուսումնական պարապմունքներից, նույնիսկ իրենց ցանկությամբ ձևավորված սեկցիոն խմբերի հաճախումները գոհացուցիչ համարել չենք կարող:

Ներկայումս անհետաձգելի պահանջ է՝ գտնել ֆիզիկական դաստիարակության գործընթացը կազմակերպելու նոր, առավել արդյունավետ փորձարարությամբ հիմնավորված մոտեցումներ:

Մենք դիտում ենք այն հանգամանքը, որ ուսանողների մասնակցությամբ ֆիզիկական դաստիարակության կազմակերպված ձևերը զգալի կակտիվանան, եթե դրանք կատարվեն նրանց դրդապատճառների և հետաքրքրություններին համապատասխան:

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ֆիզիկական կուլտուրայի վերաբերյալ ուսանողների դրդապատճառները և հետաքրքրությունները:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության նպատակի իրականացման համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝ գրական աղբյուրների ուսումնասիրություն և վերլուծություն, սոցիոլոգիական հարցում:

Հարցաթերթիկային հարցումն անցկացվել է Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի առաջին կուրսի 105 ուսանողների շրջանում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Պետք է նշել, որ ուսանողների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ մշակվում են հայեցակարգեր, հայեցակարգային դրույթներ, որոնք ուղղորդում են բուհական ֆիզիկական դաստիարակության հետագա կատարելագործումը [4, 6, 11]:

Սովորող երիտասարդության ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծումը քննարկվում է մի շարք նորարարական տեսանկյուններից: Այսպես՝ Օ. Վ. Բուլգակովան, Դ. Ա. Շուբինը, Վ. Վ. Պոնոմարիովը [8], Տ. Վ. Վասիլովան [9] և այլք առաջարկում են նախագծել և բուհական ֆիզիկական դաստիարակության համակարգ ներդնել ժամանակակից ֆիթնես տեխնոլոգիաներ: Ա. Վ. Կաբաչկովան [10] կարևորում է առաջին կուրսի ուսանողների ինքնազգացողության ուսումնասիրությունը և առաջարկում դրանց արդյունքների հիման վրա վերակառուցել ֆիզիկական դաստիարակության գործընթացը:

Մեր աշխատանքի համար կարևոր նշանակություն ունի Պ. Վ. Բորոդինի և Վ. Գ. Տյուտկովի [7] հետազոտական աշխատանքը, որի նպատակն էր ֆիզիկական դաստիարակության միջոցների օգտագործմամբ բարելավել բժշկական համալսարանի սովորողների մասնագիտական գործունեության արդյունավետությունը:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ զգալի ակտիվացել է ուսանող երիտասարդության ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրներին նվիրված ատենախոսական աշխատանքների քանակը: Այսպես, եթե խորհրդային ժամանակաշրջանում պաշտպանվել էր ընդամենը 233 ատենախոսական աշխատանք [5], ապա հետխորհրդային ժամանակաշրջանում (1991-2012թթ.) միայն Ռուսաստանում արդեն այդ թիվը կազմում է 750:

Դպրոց ավարտելը և բուհ ընդունվելը յուրաքանչյուր սովորողի կյանքում շրջադարձային փուլ է: Բուհի ուսումնական գործունեությանը հարմարվելը ուսանողներից պահանջում է լինել առողջ, ֆիզիկապես պատրաստված, աշխատունակ և սոցիալապես ակտիվ:

Այդ խնդիրների լուծման համար ֆիզիկական կուլտուրան և սպորտը երիտասարդ ուսանողների կյանքում սոցիալական և կիրառական մեծ գործառույթներ են կատարում:

Նախ անդրադառնանք միջնակարգ կրթությանը և դիտարկենք, թե ավագ դպրոցական տարիներին Երևանի Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի առաջին կուրսի ուսանողներին դասավանդվող առարկաներից որոնք են հետաքրքիր եղել: Հատկանշական է, որ առավել մեծ հե-

տաքրքրություն են առաջացնում բնագիտական ուղղվածության առարկաները՝ ֆիզիկա՝ 90.4 տոկոս, կենսաբանություն՝ 86.6 տոկոս, քիմիա՝ 82.8 տոկոս, որը ամենայն հավանակությամբ պայմանավորված է մասնագիտության ընտրությամբ: Մտահոգիչ է այն փաստը, որ ավագ դպրոցականների հետաքրքրությունը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի նկատմամբ կտրուկ նվազում է: Դա արտահայտվեց ուսանողների ավագ դպրոցական տարիներին ֆիզկուլտուրային կրթության բավարարվածության վերաբերյալ արտահայտված դրիքորոշմամբ: Այսպես՝ նրանց միայն 14.2 տոկոսն են նշել, որ գոհ են ավագ դպրոցում ստացած ֆիզկուլտուրային կրթությունից:

Դպրոցից ստացած գիտելիքներն արդյո՞ք բավարար են՝ վարելու առողջ կենսակերպ, հարցին դրական է պատասխանել ուսանողների 36.1 տոկոսը: Սա վկայում է այն մասին, որ ստացված գիտելիքներից թեկուզ և առկա է որոշակի բավարարվածություն, սակայն ուսանողների մեծամասնությանը՝ մոտ 63.9 տոկոսին, դպրոցում ստացած գիտելիքները չեն բավարարում հետագայում վարել առողջ ապրելակերպ: Այսպիսով՝ ակնառու է հանրակրթական դպրոցի և բուհի ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպման հաջորդայնության սկզբունքի պահպանման թույլ վիճակը:

Զարգացած երկրների ուսանող երիտասարդության համար ֆիզիկական վարժությունները, այդ թվում նաև չափավոր ապորտը, վաղուց են դարձել առողջ ապրելակերպի վարման կարևոր բաղադրամասերից մեկը:

Ուսանողների՝ ֆիզիկական դաստիարակության ժամանակակից առողջարարական ձևերի իմացությունը և դրանցով զբաղվելու ցանկությունը թույլ տվեցին բացահայտել, որ 41.4 տոկոս ուսանողները ցանկացել են զբաղվել ֆիթնեսով, 28.5 տոկոսը՝ շեյփինգով և, նույնքանն էլ՝ աթլետիկ մարմնամարզությամբ: Քիչ տոկոս է կազմում աերոբ մարմնամարզությամբ, կալանետիկայով և սթրեթչինգով պարապողների թիվը (աղյուսակ 1):

Ֆիզիկական կուլտուրայի մասնագետները պետք է ուսանողների շրջանում համապատասխան աշխատանքներ ծավալեն՝ ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից ձևերով զբաղվելու միջոցով իրենց ցանկությունները և կամային ճիգերը առկա նպատակների իրականացմանն ուղղորդելու համար:

Աղյուսակ 1.

Ուսանողների ցանկությունը ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից ձևերով զբաղվելու վերաբերյալ

N	Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից ձևեր	Պատասխաններ, %
1.	Աերոբ մարմնամարզություն	11.9
2.	Ռիթմիկ մարմնամարզություն	22.8
3.	Ակվաաերոբիկա	20.9
4.	Սթրեթչինգ	18.1
5.	Շեյփինգ	28.5
6.	Ֆիթնես	41.4
7.	Յոգա	27.6
8.	Աթլետիկ մարմնամարզություն	28.5
9.	Կալանետիկա	16.1

Արդի շրջանում ավելի է կարևորվում ուսանողների ինքնուրույն ֆիզկուլտուրային պարապմունքների ակտիվացումը: Մարդու գործունեության բոլոր ոլորտներում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնումը կտրուկ կրճատեց նրանց շարժողական ակտիվությունը: Այդ իսկ պատճառով, առանց ինքնուրույն ֆիզկուլտուրային պարապմունքի, դրական տեղաշարժեր՝ նրանց ֆիզիկական պատրաստության, առողջական վիճակի, առողջ ապրելակերպի վարման գործում ակնկալել չենք կարող: Ուսանող երիտասարդության ինքնուրույն ֆիզկուլտուրային պարապմունքները կարող են կազմակերպվել տարբեր ձևերով: 2–րդ աղյուսակում պատկերված է ուսանողների կողմից ինքնուրույն պարապմունքի մի քանի ձևերի կատարման հաճախականությունը:

Հարցվողների 20.9 տոկոսը մշտապես կատարում է առավոտյան մարմնամարզություն, մյուսները՝ 51.4 տոկոսը, կատարում են դեպքից դեպք, իսկ 27.6 տոկոսը չի կատարում: Հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ ուսանողներից ոչ մեկը մշտապես չի կատարում ինքնուրույն ֆիզկուլտուրային պարապմունք և, ընդամենը 42.8 տոկոսն է, որ կատարում է դեպքից դեպք: Գոհացուցիչ համարել չենք կարող նաև ինքնուրույն մարմնամարզական վարժությունների, ընկերների հետ խաղերի, բակի մարզասարքերից օգտվելու ցուցանիշները:

Աղյուսակ 2.

Ինքնուրույն ֆիզկուլտուրային պարապմունքի ձևեր

N	Հարցեր	Հաճախականություն		
		Մշտապես	Դեպքից դեպք	Չեմ կատարում
1.	Կատարում եք առավոտյան մարմնամարզություն	20.9	51.4	27.6
2.	Ինքնուրույն ֆիզկուլտուրային պարապմունք		42.8	57.2
3.	Կատարում եք մարմնամարզական վարժություններ	26.6	36.1	37.3
4.	Խաղում եք ընկերների հետ	26.6	40	33.4
5.	Օգտվում եք բակի մարզասարքերից	13.3	27.6	59.1

Ստացված արդյունքների հիմքում ընկած են մի շարք պատճառներ, որոնք խոչընդոտում են ուսանող երիտասարդությանը՝ ակտիվորեն զբաղվելու ֆիզիկական կուլտուրայով: Հարցվողների 82.7 տոկոսը՝ որպես պատճառ նշել է ազատ ժամանակի բացակայությունը, 81.9 տոկոսը՝ ուսումնական մեծ բեռնվածությունը, 49 տոկոսը՝ չկան համախոհներ, 26.6 տոկոսը՝ հատուկ մեթոդական գիտելիքների և կարողությունների բացակայությունը, 37.3 տոկոսը՝ բնակավայրերում խաղահրապարակների բացակայությունը:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այն փաստին, որ ուսանողները կարևորել են մեթոդական գիտելիքների և կարողությունների բացակայությունը: Այս պարագայում կարևոր է, որ բուհը համապատասխան քարոզչական, մեթոդական, լուսավորչական աշխատանքներ ծավալի ուսանողների շրջանում՝ նրանց մեթոդական գիտելիքները և գործնական կարողությունները հարստացնելու համար: Իսկ ազատ ժամանակի բացակայությունը չի կարող դիտարկվել որպես հիմնարար պատճառ, քանի որ գոյություն ունեն ազատ և տոն օրեր, արձակուրդներ, շաբաթ, կիրակի և այլն:

Հոգեբանությունում ընդունված է, որ դրդապատճառ համարվում է հոգեկան այն երևույթը (միտք, մտապատկեր, հույզ կամ դրանց համակցությունը), որը ակտիվություն է հարուցում, օրգանիզմը մղում ակտիվ գործունեության:

Հաշվի առնելով վերը նշված դասական բնորոշումը, ուսումնասիրել ենք, թե ինչ դրդապատճառներից ելնելով ուսանողները կցանկանային զբաղվել ֆիզիկական կուլտուրայով: Նրանց 77.1 տոկոսն ակնկալում է ունենալ լավ մարմնակազմություն, 71.4 տոկոսը՝ ամրապնդել սեփական առողջությունը, 61 տոկոսը՝ ձեռք բերել ֆիզիկական լավ պատրաստվածություն, 45.7 տոկոսը՝ շփվել ընկերների հետ, 34.2 տոկոսը՝ ակտիվ հանգստանալ, 9.5 տոկոսը՝ ավելի լավ դրսևորել մասնագիտական կարողությունները, 6.6 տոկոսը՝ ստանալ դրական հույզեր և, նույնքան տոկոսն էլ՝ կյանքը դարձնել ավելի հետաքրքիր:

Եզրակացություն:

• Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ առաջին կուրսի ուսանողների միայն 14,2 տոկոսն են գոհ ավագ դպրոցում ստացած ֆիզկուլտուրային կրթությունից:

• Բացահայտված է, որ 41,4 տոկոս ուսանողները ֆիզիկական դաստիարակության ժամանակակից ձևերից ցանկություն են հայտնել զբաղվել ֆիթնեսով, 28,5 տոկոսը՝ շեյփինգով, նույնքան տոկոսն էլ աթլետիկ մարմնամարզությամբ:

• Հատկանշական է այն հանգամանքը, որ ուսանողները դրական դիրքորոշում ունեն ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու վերաբերյալ, նրանց 77,1 տոկոսը ակնկալում է ունենալ լավ մարմնակազմություն, 71,4 տոկոսը՝ ամրապընդել սեփական առողջական վիճակը:

Բացահայտված են այն հիմնական պատճառները, որոնք խոչընդոտում են ուսանողներին ավելի ակտիվ զբաղվել ֆիզիկական կուլտուրայով. որպես հիմնական պատճառ դիտարկվում է ուսումնական բեռնվածությունը (81,2 տոկոս): Հետևաբար, խնդիր է առաջանում մեծ աշխատանքներ կատարել առաջին կուրսի ուսանողների ուսումնական բեռնվածության օպտիմալացման ուղղությամբ:

Բազմաթիվ ուսումնասիրությունների վերլուծությունը ցույց է տալիս միանշանակ ընդունել ուսանող երիտասարդության ֆիզիկական դաստիարակության նորովի արժեքավորման անհրաժեշտությունը: Այսինքն՝ ֆիզիկական դաստիարակության գործող համակարգն անհրաժեշտ է նպատակաուղղել կոնկրետ անհատը, նրա դրդապատճառների և հետաքրքրությունների համակարգը:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչատրյան Ս., Ուսանողի շարժողական ընդունակությունները և ժամանակաշրջանի պահանջները, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003,– 39 էջ:

2. Հակոբյան Ս.Ա., Ուսանողների ֆիզիկական դաստիարակությունը, Մենագրություն, Երևան, 2007, 120 էջ:

3. Պետրոսյան Գ.Ա., Ֆիզիկական կրթության և հանրակրթության համընթացը, Հանրապետական XXXIV գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2007, էջ 138-144:

4. Анисимова А.Ю., Концепция формирования системы физического воспитания студентов и молодежи на основе интеграции социальноориентированных ее ценностей. Автореф. дисс. д-ра пед. наук. Москва. – 2022. – 42с.

5. Баранов В.Н., Шустин Б.Н., Развитие диссертационных исследований по проблемам модернизации физического воспитания населения и массовой физической культуры \\ Теория и методика спорта высших достижений. 2014. С. 8-13.

6. Болотин А.Э., Селюкин Д.Б., Структура и содержание педагогической концепции физического воспитания студентов на основе ценностей здорового образа жизни \\ Теория и практика физической культуры. 2015. N 7. С. 32-34.

7. Бородин П.В., Тютюков В.Г., Повышение уровня готовности профессиональной деятельности студентов-медиков на основе спортизированного подхода \\ Физическая культура: воспитание, образование, тренировка. 2015. – N 4. С. 14-16.

8. Булгакова О.В., Шубин Д.А., Пономарев В.В. Влияние фитнес технологий на физическое развитие и функциональную подготовленность студенток вуза \\ Физическая культура: воспитание, образование, тренировка. 2015. – N 4. С. 48-49.

9. Василистова Т.В., Проектирование фитнес-технологий в физическом воспитании студенток вуза в условиях северных регионов: Автореф. дис. канд. пед. наук. Тула, 2011. – 22 с.

10. Кабачкова А.В., "Самочувствие-активность-настроение" студентов-первокурсников при посещениии занятий по физическому воспитанию // Теория и практика физ. культуры. - 2015. - № 7. - С. 29-31.

11. Лубышева Л.И., К концепции физического воспитания студентов \\ Теория и практика физической культуры. 1993. – N 5-6. С. 15-18.

12. Савченко В.Г., Москаленко Н.В., Современные подходы к совершенствованию системы физического воспитания в общеобразовательных школах \\ Материалы международного научного конгресса Олимпийский спорт и спорт для всех. 2018. С. 154-187.

STUDENTS' ATTITUDE TOWARDS PHYSICAL EDUCATION

Honored Coach of the Republic of Armenia, Lecturer G. Sh. Tamiryan
Yerevan State Medical University after M. Heratsi, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: students, physical education, physical fitness, health, attitude, survey, motive.

Research aim: Studying the attitude of university students to physical culture.

Research methods and organization. To achieve the aim of the study, the following methods were used: study and analysis of literary sources, a survey. Research was organized in the State Medical University after M. Heratsi, a survey was conducted among 105 students of the 1st course.

Analysis of research results: The survey results showed that only 14.2% of the surveyed first-course students were satisfied with the physical education they received in high school. It was revealed that 41.4% of students expressed a desire to do fitness, 28.5% shaping, and the same percentage was revealed for athletic gymnastics. Researches have shown the necessity to develop new approaches of physical education in universities.

Conclusion: It should be noted that students have a positive attitude towards physical culture: 77.1% expect to have a beautiful body and 71.4% - to improve their health.

ОТНОШЕНИЕ СТУДЕНТОВ К ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЕ

Заслуженный тренер Армении, преподаватель Г. Ш. Тамирян
Ереванский государственный медицинский университет
имени М. Гераци, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: студенты, физическое воспитание, физ. подготовленность, здоровье, отношение, опрос, мотив.

Цель исследования. Изучение отношения студентов ВУЗа к физической культуре.

Методы и организация исследования. Для реализации цели исследования были использованы следующие методы: анализ и обобщение литературных источников, опрос. Исследования были организованы в Гос. Медицинском университете имени М. Гераци, был проведен опрос среди 105 студентов 1-го курса.

Анализ результатов исследования. Результаты опроса показали, что только 14,2% опрошенных первокурсников удовлетворены физкультурным образованием, получившим в старших классах. Выявлено, что 41,4% студентов проявили желание заниматься фитнесом, 28,5% шейпингом и столько же процентов атлетической гимнастикой. Исследования показали необходимость разработки новых подходов в физическом воспитании в ВУЗах.

Краткие выводы. Следует отметить, что студенты положительно относится к физической культуре: 77,1% предпологают иметь красивое телосложение, 71,4% - укрепить здоровье.

Հոդվածն ընդունվել է 27. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 30.09. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՀՏԴ 796.42 DOI: 10.53068/25792997-2022.3.7-59

ԲԱԶՄԱՄԱՐՏԻ ԱՌԱՆՁԻՆ ՄՐՑԱՁԵՎԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Մ.գ.թ., դոցենտ Է. Զ. Մարտիրոսյան,
դոցենտ Վ. Ա. Համբարձումյան,
դասախոս Մ. Ա. Հարությունյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E.mail: erik.martirosyan@sportedu.am,
vachik.hambardzumyan@sportedu.am,
marine.harutyunyan@sportedu.am

Առանցքային բառեր: Բազմամարտ, տասնամարտ, յոթնամարտ, էլիտար, բարձրակարգ, ստանդարտացված չափի ներգործություն, աստիճանավորում, արդյունավետություն:

Հետազոտության արդիականություն: Բազմամարտը համարվում է աթլետիկայի ամենաբարդ մրցաձևերից մեկը, որում միավորված են աթլետիկական դասական տարբեր մրցաձևեր: Աթլետիկական բազմամարտի անվանումը պայմանավորված է ընդգրկված մրցաձևերի քանակով: Դասական մրցաձևեր են համարվում տասնամարտը և յոթնամարտը [1, 3, 6]: Բազմամարտում հաղթողը որոշվում է առանձին մրցաձևերում հավաքած միավորների գումարային առավելագույն քանակով՝ Համաշխարհային աթլետիկայի կողմից (1985) հաստատված միավորների աղյուսակի հիման վրա [8]: Աթլետիկական մրցաձևերի բազմազանությունը մարզիկից պահանջում է տիրապետել առանձին մրցաձևերի տեխնիկային, ունենալ շարժողական ընդունակությունների բարձր մակարդակ, դրսևորել կամային բարձր որակներ, հակառակ դեպքում հնարավոր չէ հասնել մարզական բարձր արդյունքի [1, 3, 4, 5]: Բազմաթիվ մասնագետներ միակարծիք են, որ բազմամարտը պետք է դիտել ոչ թե աթլետիկական տարբեր մրցաձևերի խումբ, այլ աթլետիկական առանձին մրցաձև, որի մարզման գործընթացում պետք է լուծել մի շարք հարցեր՝ կապված մրցաձևի առանձնահատկությունների հետ [2, 6]: Այլ կերպ լինել չի կարող, որովհետև բազմամարտի մարզումը չի կարելի դիտել՝ որպես աթլետիկական առանձին մրցաձևերի մարզում [6, 7]: Ինչպես ցույց են տալիս մի շարք հետազոտություններ, նույնիսկ բազմամարտի մեջ մտնող առանձին խումբ մրցաձևերի կատարելագործումը կարող է ունենալ ինչպես դրա-

կան, այնպես էլ բացասական ազդեցություն՝ բազմամարտի այլ խմբի մրցաձևերի պատրաստության վրա [1, 2, 3, 7]: Գրականությունում առկա նյութերի ուսումնասիրումը հաճախ խոսում է բազմամարտի առանձին մրցաձևերի արդյունքների հարաբերակցական փոխկապվածության գործակցի մասին, որը հնարավորություն է տալիս հիմնավոր պլանավորելու առանձին մրցաձևերի մարզման պատրաստության միջոցների և ծավալի հարաբերակցությունը՝ հաշվի առնելով մարզիկների անհատական առանձնահատկությունները և մարզական արդյունքները տարբեր մրցաձևերից [4, 5]: Սպորտային գիտության ոլորտում գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև տարբեր պատրաստություն ունեցող մարզիկների արդյունքների վերլուծությունը, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվում տեսականորեն պարզել և գործնականում կիրառելի դարձնել բացահայտված տվյալները՝ մարզումային գործընթացում ակնկալելով մարզական բարձր արդյունք:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել և վերլուծել աթլետիկական բազմամարտի առանձին մրցաձևերի տեսակարար կշիռն ընդհանուր արդյունքի ձևավորման գործում:

Հետազոտության խնդիրները: 1. Վերլուծել բազմամարտի առանձին մրցաձևերի արդյունքներն օլիմպիական խաղերում (2000-2020): 2. Տարանջատել էլիտար և բարձրակարգ բազմամարտիկներին: 3. Որոշել առանձին մրցաձևերի արդյունավետության չափն էլիտար և բարձրակարգ բազմամարտիկների մոտ:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտական աշխատանքի հիմք է հանդիսացել 2000-2020թթ. Օլիմպիական խաղերում տղամարդկանց տասնամարտի և կանանց յոթնամարտի արդյունքների ուսումնասիրումը: Մեր ուսումնասիրության արդյունքում փորձ է արվել մասնակիցների շրջանում տարանջատել էլիտար և բարձրակարգ մարզիկների արդյունքները՝ հաշվի առնելով գրականությունում հայտնի և կիրառելի որոշ սկզբունքներ [3, 6]: Էլիտար տասնամարտիկների խմբում ընդգրկվել են 41 մարզիկներ, որոնք հավաքել են 8292-9018 միավոր (Dp=726): Ուսումնասիրվող վեց օլիմպիական խաղերում էլիտար տասնամարտիկների միջին միավորը կազմել է 8554±192: Բարձրակարգ մարզիկների խմբում ընդգրկվել են 81 մարզիկներ, որոնք հավաքել են 7712-8291 միավոր (Dp=579): Ուսումնասիրությանը մասնակից բարձրակարգ մարզիկների միջին միավորը կազմել է՝ 8037±146:

Կանանց յոթնամարտում էլիտար են համարվել այն մարզուհիները, որոնք հավաքել են 6508-6955 միավոր (Dp=447):

Միջին միավորը 22 էլիտար մարզուհիների մոտ կազմել է՝ 6651±133: Բարձրակարգ յոթնամարտուհիների խմբում ընդգրկվել են 52 մարզուհի, որոնք հավաքել են 6209-6507 միավոր (Dp=298): Այս խմբում ընդգրկված մարզուհիները միջինում հավաքել են 6341±82 միավոր: Ուսումնասիրության ընթացքում էլիտար և բարձրակարգ մարզիկներին տարանջատելու համար մեր կողմից հաշվի են առնվել նաև մարզական արդյունքների ցրվածության ցուցանիշները կամ ինչպես ընդունված է ասել վարիացիայի գործակիցը, որը երկու խմբերի դեպքում էլ չի գերազանցել 10 տոկոսի սահմանը: Կատարվել է նաև ստացված արդյունքների մաթեմատիկակամն վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության արդյունքները: Տասնամարտի առանձին մրցաձևերի արդյունքների համեմատական վերլուծությունն էլիտար և բարձրակարգ մարզիկների մոտ ներկայացված է աղյուսակում:

100 մ մրցաձևում էլիտար տասնամարտիկների միջին արդյունքը կազմել է 10,72 վրկ., իսկ բարձրակարգ մարզիկներինը՝ 10,98 վրկ.: Միջին արդյունքների տարբերությունը կազմել է 0,26 վրկ.: Միավորների սանդղակով, այդ արդյունքներին համարժեք են համապատասխանաբար՝ 924 և 862 միավորները (տրամագիր 1): Տարբերությունը է 59 միավոր է: Այս մրցաձևում երկու խմբերի արդյունքների տարբերության ստանդարտացված չափի ներգործության արդյունավետությունը՝ d-ն, հավասար է 0,96, որի արդյունավետության աստիճանավորումը համարվում է «չափավոր»:

Հեռացատկում էլիտար տասնամարտիկները ցույց են տվել 759 սմ միջին արդյունք: Այս արդյունքը համարժեք է 957 միավորին: Բարձրակարգ մարզիկների միջին միավորը հեռացատկում կազմել է 852, որը համարժեք է 716 սմ արդյունքի: Արդյունքների տարբերությունը 43 սմ է: Միավորների սանդղակով այս տարբերությունը կազմում է 105 միավոր: Ստանդարտացված չափի ներգործության արդյունավետությունը կազմել է 2,07, որն ըստ արդյունավետության աստիճանավորման համարվում է «շատ բարձր»: Հատկանշական է նաև այն փաստը, որ տասնամարտում էլիտար մարզիկներն ամենաբարձր միավորը հավաքել են այս մրցաձևում և տասնամարտում հավաքած ընդհանուր միավորի 11,18 տոկոսը բաժին է հասնում հեռացատկին, որն ամենաբարձրն է առանձին մրցաձևերի հաշվարկով:

Առանձին մրցաձևերի միջին արդյունքները բազմամարտում

Տասնամարտ						
Մրցաձևեր	**Էլիտար n=41**		**Բարձրակարգ n=81**		M	**d**
	x̄ ± m	σ	**x̄ ± m**	σ		
Վազք 100 մ (վրկ.)	10,72±0,04	0,27	10,98±0,02	0,20	0.26	0,96
Հեռացատկ (սմ)	759±3,56	20,77	716±2,65	23,81	43	2,07
Գնդի հրում (սմ)	1485±11,82	75,71	1449±9,46	85,17	36	0,48
Բարձրացատկ (սմ)	206±1,04	5,65	199±0,68	6,09	7	1,23
Վազք 400 մ (վրկ.)	48,19±0,16	0,72	49,36±0,10	0,86	1,17	1,62
110 մ արգելավազք (վրկ.)	14,22±0,06	0,28	14,61±0,05	0,42	0,39	1,39
Սկավառակի նետում (սմ)	4586±54,19	346,98	4413±38,15	343,37	170	0,49
Ձողացատկ (սմ)	491±3,72	23,79	478±3,05	27,45	13	0,54
Նիզակի նետում (սմ)	6361±93,88	601,10	6002±60,39	534,52	359	0.59
Վազք 1500 մ (րոպե/վրկ.)	4.31,91±1,43	9,18	4.38,27±1,08	9,76	6,36	0.69
Յոթնամարտ						
Մրցաձևեր	**Էլիտար n=22**		**Բարձրակարգ n=52**		M	**d**
	x̄ ± m	σ	**x̄ ± m**	σ		
100 մ արգելավազք (վրկ.)	13,24±0,07	0,26	13,53±0,04	0,27	0,29	1,11
Բարձրացատկ (սմ)	185±1,34	3,28	180±0,67	3,76	5	1,52
Գնդի հրում (սմ)	1434±28,36	133,2	1379±13.50	96,40	55	0,41
Վազք 200 մ (վրկ.)	24,03±0,14	0,67	24,41±0,08	0,56	0,38	0,56
Հեռացատկ (սմ)	643±3,66	12,17	616±2,83	16,43	30	2.46
Նիզակի նետում (սմ)	4820±88,40	545,99	4557±61.54	433,79	263	0,48
Վազք 800 մ (րոպե/վրկ.)	2.13,40±0,84	3.92	2.12,92±0,44	3,19	0,48	0,15

Գնդի հրում մրցաձևում արդյունքների համեմատական վերլուծությունն ունի հետևյալ պատկերը. էլիտար տասնամարտիկների միջին արդյունքը կազմել է 1485 սմ: Միավորների սանդղակում այս արդյունքը համարժեք է 780 միավորին: Բարձրակարգ մարզիկների մոտ միջին արդյունքը հավասար է 1449 սմ կամ 758 միավոր: Տարբերությունը կազմել է 22 միավոր: Մեր հետազոտության արդյունքների վերլուծության տվյալներից կարելի է ենթադրել, որ էլիտար և բարձրակարգ տասնամարտիկները, գնդի հրում մրցաձևում ունեն գրեթե նույն ֆիզիկական և տեխնիկական պատրաստությունը կամ, եթե կա որոշակի տարբերություն, ապա այն դիտարկվում է առանձին մարզիկների մոտ և չունի զգալի ազդեցություն միջին արդյունքների վրա: Այդ է վկայում նաև ստանդարտացված արդյունավետության չափի գործակիցը՝ 0.48, որն ունի է «ցածր» աստիճան:

Բարձրացատկ մրցաձևում էլիտար և բարձրակարգ տասնամարտիկները ցույց են տվել հետևյալ միջին արդյունքները՝ 206 սմ և 199 սմ, արդյունքների տարբերությունը 7 սմ է: Միավորների սանդղակով այս արդյունքներն ապահովել են՝ 859 և 794 միավոր, տարբերությունը կազմել է 65 միավոր: Բարդ տեխնիկական այս մրցաձևում d=1,23: Բարձրացատկում ուսումնասիրվող երկու խմբերի արդյունքների տարբերության արդյունավետության աստիճանը համարվում է «բարձր»:

Արագավազքի հաջորդ՝ 400 մ մրցաձևում, արդյունքների և միավորների տարբերությունն ուսումնասիրվող երկու խմբում ունի հետևյալ պատկերը՝ էլիտար տասնամարտիկները տարածությունը հաղթահարել են 48,19 վրկ.-ում, որն ապահովել է 900 միավոր, իսկ բարձրակարգ մարզիկները 400 մ հաղթահարել են 49.36 վրկ.-ում, որը համարժեք է 844 միավորի: Այստեղ նույնպես նկատվում է միավորների մեծ տարբերություն: Արդյունքների տարբերության արդյունավետության չափը կազմել է 1,62, որին համարժեք է «բարձր» աստիճանը:



Տրամագիր 1. Առանձին մրցաձևերի միջին միավորները դասնամարտում

110 մ արգելավազքում ուսումնասիրության մասնակից էլիտար տասնամարտիկների միջին արդյունքը կազմել է 14,22 վրկ., իսկ բարձրակարգ մարզիկները վազքատարածությունը հաղթահարել են 14,61 վրկ.: Ցույց տված արդյունքները համարժեք են համապատասխանաբար՝ 947 և 897 միավորի: Այս մրցաձևում նույնպես կա միավորների զգալի տարբերություն ուսումնասիրվող երկու խմբերի միջև: 110 մ մրցաձևում d=1,39, որը համարժեք է արդյունավետության «բարձր» աստիճանին: Կարելի է նշել, որ բարձրակարգ մարզիկներն ամենաբարձր միավորը հավաքել են այս մրցաձևից:

Նետումային երկու մրցաձևերում արդյունքների տարբերության ներգործության չափի արդյունավետությունը կազմել է. սկավառակի նետում՝ 0,49, նիզակի նետում՝ 0,59, որոնք համապատասխանում են արդյունավետության աստիճանավորման «ցածր» մակարդակի: Սկավառակի նետում մրցաձևում էլիտար տասնամարտիկների միջին արդյունքը վեց օլիմպիական խաղերում կազմել է 4586 սմ, որը համարժեք է 785 միավորի, իսկ բարձրակարգ մարզիկները միջինում ցույց են տվել 4413 սմ, որն ապահովել է 749 միավոր: Թվական տվյալների համեմատական վերլուծությունը փաստում է, որ թե՛ արդյունքների, և թե՛ միավորների տարբերությունը նետումային մրցաձևերում նվազագույն է հետազոտվող երկու

խմբերում: Մեր կարծիքով արդյունքների այս տարբերությունը խոսում է էլիտար և բարձրակարգ մարզիկների տեխնիկական համեմատաբար միանման պատրաստության մասին:

Ի տարբերություն ցատկային նախորդ երկու մրցաձևերի, ձողացատկում ցույց տրված արդյունքներն ունեն համեմատաբար ցածր ցուցանիշներ, որը մեր կարծիքով պայմանավորված է վարժության տեխնիկայի բարդությամբ: Էլիտար տասնամարտիկների միջին արդյունքը կազմել է 491 սմ, որը միավորների սանդղակում հավասար է 883 միավորի, իսկ բարձրակարգ մարզիկները ցույց են տվել 478 սմ միջին արդյունք, որը համապատասխանում է 843 միավորի: Այս մրցաձևում d=0,54, որը համապատասխանում է աստիճանավորման «ցածր» մակարդակին:

1500 մ վազքը տասնամարտի վերջին մրցաձևն է: Դիմացկունության այս մրցաձևում էլիտար տասնամարտիկները ցույց են տվել 4.31,91 վրկ., իսկ բարձրակարգ մարզիկները՝ 4.38,27 վրկ. միջին արդյունք: Միավորների սանդղակով այս արդյունքներն ապահովել են համապատասխանաբար՝ 732 և 691 միավոր: Արդյունքների վերլուծությունը փաստում է, որ ուսումնասիրվող մասնակիցների երկու խմբերում էլ, ի տարբերություն հեռացատկի և 110 մ արգելավազքի, այս մրցաձևը, հավաքած միավորների քանակով, ամենաթույլն է համարվում և կազմում է ընդհանուր միավորների քանակի համապատասխանաբար՝ 8.55 և 8.61 տոկոսը: Արդյունքների տարբերության ստանդարտացված չափի ներգործության արդյունավետությունը կազմել է 0.69, որը համապատասխանում է «չափավոր» մակարդակին:

Կանանց յոթնամարտում արդյունքների համեմատական վերլուծությունն (աղյուսակ) ունի հետևյալ պատկերը. 100 մ արգելավազքում էլիտար մարզուհիները ցույց են տվել 13,24 վրկ. արդյունք, իսկ բարձրակարգ մարզուհիները՝ 13,53 վրկ.: Արդյունքներին համապատասխան մարզուհիները հավաքել են 1089 և 1044 միավոր (տրամագիր 2): Արդյունքների տարբերությունը կազմել է 0,29 վրկ.: Այս մրցաձևում d=1,11, որն ըստ արդյունավետության աստիճանավորման համարվում է «չափավոր»:

Բարձրացատկ մրցաձևում էլիտար մարզուհիները հաղթահարել են 185 սմ բարձրությունը, որն ապահովում է 1041 միավոր, իսկ բարձրակարգ մարզուհիները հաղթահարել են 180 սմ բարձրությունը՝ հավաքելով 978 միավոր: Արդյունքների տարբերության ստանդարտացված չափի ներգործության արդյունավետությունը կազմել է 1,52, որին համապատասխանում է արդյունավետության «բարձր» աստիճանը:

Գնդի հրում մրցաձևում էլիտար յոթնամարտուհիները ցույց են տվել 1434 սմ, իսկ բարձրակարգ մարզուհիները՝ 1379 սմ միջին արդյունք: Միավորների սանդղակով այս արդյունքներն ապահովել են համապատասխանաբար՝ 817 և 780 միավոր: 200 մ վազքում յոթնամարտուհիների ցույց տված միջին արդյունքները և հավաքած միավորները համապատասխանաբար կազմել են՝ 24,03 վրկ. (978 միավոր) և 24,41վրկ. (942 միավոր): Նետումային մյուս՝ նիզակի նետում մրցաձևում արդյունքները հետևալն են՝ 4820 սմ (826 միավոր) և 4557 սմ (774 միավոր):

Վերը նշված երեք մրցաձևերում ակնհայտ է արդյունքների տարբերության ստանդարտացված չափի ներգործության արդյունավետության «ցածր» աստիճան՝ գնդի հրում (d=0,41), վազք 200 մ (d=0,56) և նիզակի նետում (d=0,48):



Տրամագիր 2. Առանձին մրցաձևերի միջին միավորները յոթնամարտում

Հեռացատկում էլիտար յոթնամարտուհիները ցույց են տվել 643 սմ միջին արդյունք: Այս արդյունքը համարժեք է 985 միավորին: Բարձրակարգ մարզուհիների միջին արդյունքը կազմել է 616 սմ, որին համապատասխանում է 852 միավորը: Արդյունքների տարբերությունը 30 սմ է: Ստանդարտացված չափի ներգործության արդյունավետությունը կազմել է 2,46, որն ըստ արդյունավետության աստիճանավորման համարվում է «շատ բարձր»:

Յոթնամարտի վերջին՝ 800 մ մրցաձևում, ուսումնասիրվող երկու խմբերի մարզուհիները ցուցաբերել են հետևյալ միջին արդյունքները և միավորները՝ 2.13,40 վրկ. (914 միավոր) և 2.12,92 վրկ. (922 միավոր): Այս մրցաձևում արդյունքների տարբերությունը 0,48 վրկ. է՝ հօգուտ բարձրակարգ մարզուհիների: Ստանդարտացված չափի ներգործության արդյունավետությունը կազմել է 0,15, որն ըստ արդյունավետության աստիճանավորման համարվում է «աննշան»:

Եզրակացություն: 1. Աթլետիկական բազմամարտը համարվում է բարդ տեխնիկական մրցաձև, որտեղ միավորված են աթլետիկական դասական տարբեր մրցաձևեր: Մարզիկից պահանջվում է դրսևորել կամային բարձր որակներ, տիրապետել առանձին մրցաձևերի տեխնիկային, ունենալ շարժողական ընդունակությունների բարձր մակարդակ: 2. Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ էլիտար տասնամարտիկները վազքային մրցաձևերում՝ վազք 100 մ, 400 մ, 1500 մ և 110 մ արգելավազք, հավաքել են 3502 միավոր, որը տասնամարտում հավաքած միավորների 40,92 տոկոսն է կազմում, իսկ բարձրակարգներն այս մրցաձևերում հավաքել են 3297 միավոր կամ ընդհանուր միավորների 41,06 տոկոսը: 3. Ցատկային երեք մրցաձևերում՝ հեռացատկ, բարձրացատկ և ձողացատկ, էլիտար տասնամարտիկները հավաքել են 2699 միավոր կամ ընդհանուր միավորների 31,54 տոկոսը: Բարձրակարգները այս մրցաձևերում հավաքել են 2489 միավոր կամ 30,99 տոկոսը: 4. Նետումային երեք՝ գնդի հրում, սկավառակի նետում, նիզակի նետում միցաձևերում տասնամարտիկները հավաքել են համեմատաբար ավելի քիչ միավորներ. էլիտար՝ 2357 միավոր կամ 27,54 տոկոս, բարձրակարգ 2245 միավոր կամ 27,95 տոկոս: 5. Կանանց յոթնամարտում էլիտար մարզուհիները վազքային մրցաձևերում հավաքել են 2981 միավոր կամ ընդհանուր միավորների 44,83 տոկոսը, իսկ բարձրակարգ մարզուհիները՝ 2908 միավոր կամ 45,87 տոկոսը: 6. Ցատկային և նետումային մրցաձևերում միավորները բաշխվել են հետևյալ կերպ, էլիտար մարզուհիներ՝ 2026 միավոր կամ 30,46 տոկոս, 1643 միավոր կամ 24,71 տոկոս: Բարձրակարգ մարզուհիներ՝ 1877 միավոր կամ 29,61 տոկոս, 1554 միավոր կամ 24,52 տոկոս: 7. Մեր կարծիքով, բազմամարտում բարձրակարգ մարզիկների հետագա մարզական արդյունքի բարելավումը մեծ մասամբ կախված է արագաուժային մրցաձևերի զարգացման մակարդակից:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մամաջանյան Վ.Մ., Աթլետիկական բազմամարտ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005, 140 էջ:
2. Մամաջանյան Վ.Մ., Աթլետիկա. կանանց բազմամարտ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2011, 58 էջ:
3. Озолин Н. Г., Воронкин В. И., Примаков Ю. Н. Легкая атлетика: Учебник для институтов физической культуры. М.: ФиС., 1989. - 671 с.
4. Немцев О.Б., Немцева Н.А., Полянский А.В., Борисов А.Б., Ляпин В.М. Структура соревновательного результата у десятиборцев разной квалификации. // Ученые записки университета им. П.Ф. Лесгафта, № 6 (160). - 2018. - 135-140 с.
5. Немцев О.Б., Бгуашев А.Б., Немцева Н.А., Гунажоков И.К. Анализ результатов лучших семиборок мира // Ученые записки университета им. П.Ф. Лесгафта, № 7 (185). - 2020. - 267-274 с.
6. Чесноков Н.Н., Никитушкин В.Г., Легкая атлетика: Учебник, М.: ФиС.- 2010.- 440 с.
7. Zhnkampfier.Training and wettkampt.- Frankfurt, 1965. - 202 p.
8. file:///C:/Users/TEST/Downloads/iaaf%20scoring%20tables%20for%20combined%20events%20(2).pdf

NEW APPROACHES TO THE RESULTS ANALYSIS OF SEPARATE ATHLETICS MULTISPORT COMPETITIONS

PhD of pedagogy, Associate Professor E. Z. Martirosyan,
Associate Professor V. A. Hambardzumyan,
Lecturer M. A. Harutyunyan
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: Multisport race, decathlon, heptathlon, elite, high-class, standardized size intervention, grading, efficiency.

Research aim: To study and analyze the dynamics of the results of individual athletic multisport competitions.

Research methods and organization: The research was based on the study of the results of men's decathlon and women's heptathlon at the Olympic Games from 2000 to

2020. The initial data of this study were the existing results of elite and high-class athletes, taking into account some principles known and used in the literature [3, 6]. The group of elite decathletes included 41 athletes who scored 8554±192 points, and the group of high-class athletes included 81 athletes who scored 8037±146 points. In the women's heptathlon, 22 athletes, who scored 6651±133 points, were defined as elite, and the group of high-class heptathlon, who scored 6341±82 points, included 52 athletes.

Analysis of research results: Statistical analysis showed that in some types of decathlon, elite and high-class athletes revealed differences in the values of standardized and graded effects of the results shown:long jump - "very large", high jump, 400 m running, 110 m hurdles - "large", 100 m running, 1500 m - "moderate", shot put, discus throw, javelin throw, pole vault - "small". ". In the women's heptathlon, the picture was as follows: long jump - "very big", high jump - "large", 100 m hurdles - "moderate", shot put, javelin throw, 200 m run - "small", 800 m run - "insignificant".

Conclusion: Athletic Multisport race is considered a complex technical competition, which combines different classical athletic competitions. The athlete is required to demonstrate strong willpower, to master the technique of certain types of competitions, to have a high level of motor abilities. In our opinion, the further improvement of sports results in multisport race among high-class athletes largely depends on the level of development of the speed-strength types of the competition program.

НОВЫЕ ПОДХОДЫ АНАЛИЗА РЕЗУЛЬТАТОВ В ОТДЕЛЬНЫХ ВИДАХ СОРЕВНОВАНИЙ ПО АТЛЕТИЧЕСКОМУ МНОГОБОРЬЮ

К.п.н., доцент Э. З. Мартиросян,
доцент В. А. Амбарцумян,
преподаватель М. А. Арутюнян
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: многоборье, десятиборье, семиборье, элитный, высоко-классный, стандартизированный размер эффекта, градация, результативность.

Цель исследования. Изучить и проанализировать динамику результатов отдельных видов соревнований атлетического многоборья.

Методы и организация исследования. В основу исследовательской работы легло изучение результатов мужского десятиборья и женского семиборья на Олимпийских играх с 2000-ого по 2020 годы. Исходными данными настоящего исследования явились сушествуюшие результаты элитных и высококлассных спортсменов с учетом некоторых известных и применяемых в литературе принципов [3, 6]. В группу элитных десятиборцев вошли 41 спортсмен, набравшие 8554±192 баллов, а в группу высококлассных спортсменов вошли 81 спортсмен, набравшие 8037±146 баллов. В женском семиборье элитными определились 22 спортсменки, которые набрали 6651±133 балла, а в группу высококлассных семиборок вошли 52 спортсменки, набравшие 6341±82 балла.

Результаты исследования. Статистический анализ показал, что в отдельных видах десятиборья у элитных и высококлассных спортсменов выявлены различия в величинах стандартизированного и градуированного эффектов показанных результатов: прыжки в длину - «очень большой», прыжки в высоту, бег на 400 м, 110 м с барьерами - «большой», бег на 100 м, на 1500 м - «умеренный», толкание ядра, метание диска, метание копья, прыжок с шестом - «малый». В женском семиборье картина оказалась следующей: прыжки в длину - «очень большой», прыжки в высоту - «большой», бег на 100 м с барьерами - «умеренный», толкание ядра, метание копья, бег на 200 м - «малый», бег на 800 м - «ничтожный».

Краткие выводы. Атлетическое многоборье считается сложным техническим соревнованием, в котором сочетаются разные классические виды соревнований. От спортсмена требуется демонстрация высоких волевых качеств, совершенное владение техникой отдельных видов соревнований, высокий уровень развития двигательных способностей. На наш взгляд, дальнейшее улучшение спортивных результатов в многоборье у высококлассных спортсменов во многом зависит от уровня развития скоростно-силовых видов программы соревнований.

Հոդվածն ընդունվել է 26. 08. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 30.08. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՀՏԴ 796.01 DOI: 10.53068/25792997-2022.3.7-71

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐՈՒՄ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայցորդ Ա. Գ. Նովրուզյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E.mail: armine.novruzyan@sportedu.am

Առանցքային բառեր: Ֆիզիկական պատրաստություն, սպորտային պարեր, մարզիկ, զույգեր, պարառճեր, առաջատար շարժողական ընդունակություններ:

Հետազոտության արդիականություն: Հայտնի է, որ մարզիկների պատրաստության համակարգում կարևորագույն կողմերից մեկը ֆիզիկական պատրաստությունն է, որն ուղղված է՝ ստեղծելու կայուն շարժողական և ֆունկցիոնալ բազա [1]:

Սպորտային պարերը թողնում են բազմակողմանի, համալիր ազդեցություն հատկապես երեխաների և դեռահասների օրգանիզմի վրա՝ նպաստելով շարժողական ապարատի զարգացմանը, անհրաժեշտ շարժողական ընդունակությունների մշակմանը, ճիշտ կեցվածքի ձևավորմանը, նաև՝ նոր շարժումների յուրացմանը:

Գիտական և մեթոդական գրականության վերլուծությունը ցույց է տվել, որ սպորտային պարերի ոլորտի մասնագետներն այլ հիմնահարցերից զատ նաև նշում են սկզբնական մասնագիտացման փուլում պարողների ֆիզիկական պատրաստվածության բարելավման անհրաժեշտությունը: Ավելին, հեղինակները շեշտում են, որ սպորտային պարերի ֆիզիկական պատրաստվածությունն անհրաժեշտ է՝ որպես հաջող տեխնիկական պատրաստության կարևորագույն բաղադրիչ: Միաժամանակ նրանք գտնում են, որ այդ գործընթացը պետք է կառուցվի՝ հաշվի առնելով առաջատար շարժողական ընդունակությունները [6,9]:

Մարզիկների անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածությունն ապահովում է մարզման գործընթացի ամբողջականությունն ու արդյունավետությունը [4, 7, 13]:

Պետք է նշել, որ սպորտային պարերում ոչ լիարժեք է ուսումնասիրված ֆիզիկական և տեխնիկական պատրաստության հարցերը, հատկապես՝ պատանի պարող-մարզիկների՝ հաշվի առնելով զույգ թե անհատ պարողի պարառճերի, ֆիզիկական պատրաստվածության առանձնահատկությունները և դրանով պայմանավորված պահանջները: Սակայն այլ բազմաթիվ հիմնահարցեր,

մասնավորապես՝ անհատական պարաոճերում, պատանի պարուհիների առաջատար շարժողական ընդունակությունների մշակման խնդիրները, արդիական են և դեռ ուսումնասիրման անհրաժեշտություն ունեն:

Հետազոտության նպատակն է՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրության հիման վրա պարզաբանել սպորտային պարերում մարզիկների ֆիզիկական պատրաստության գործընթացի առանձնահատկությունները՝ պայմանավորված կոնկրետ պարաոճերով:

Հետազոտության մեթոդն է՝ գիտամեթոդական, ուսումնական աղբյուրների ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Պարը գոյություն է ունեցել մարդու արարման օրից: Այն մարմնի բարետես ու ներդաշնակ շարժումների ամբողջությունն է՝ երաժշտության ուղեկցությամբ: Պարը, արվեստի տեսակներից մեկը լինելով, իր ուրույն տեղը գտավ նաև ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառում՝ կոչվելով սպորտային պարեր: Այս մարզաձևում առավել մեծ ուշադրություն է դարձվում մարզիկների ֆիզիկական և տեխնիկական պատրաստության հիմնահարցերին [3]:

Հավելենք, որ սպորտային պարերում մրցումներն անցկացվու են ինչպես զույգերով, այնպես էլ սոլո ձևաչափով: Պարում են հետևյալ պարաոճերով՝ սամբա, չա-չա-չա, ռումբա, պասադոբլ, ջայվ:

Սպորտային պարերի մարզումային գործընթացի կազմակերպման առումով թերի են ուսումնասիրված տարիքային պատրաստության տարբեր կողմերը, մարզիկների մարզական գործունեության պլանավորումը և վերահսկումը, բեռնվածության կարգավորումը: Թերի են ուսումնասիրված նաև պատանի պարողների տարիքային առանձնահատկություններին հարմարեցված մարզումային համակարգը [11]:

Հայտնի փաստ է, որ սպորտային արդյունքների աճը հնարավոր է միայն այն դեպքում, եթե վարժությունների կատարման տեխնիկան համապատասխանի ֆիզիկական պատրաստվածության որոշակի մակարդակին: Հետևաբար, սպորտային պարերի ոլորտի մասնագետների մեծ մասը պարի հաջողության հիմքում դնում են ֆիզիկական և տեխնիկական պատրաստվածությունը [11, 10, 14]: Օրինակ՝ Կ. Գենադիևիչն իր աշխատանքում կարևորում է 12-13 տարեկան պարողների մրցակցային բեռնվածությունը. որքան բարդ մրցման պատրաստվեն, այնքան ավելի մեծ ծավալով պետք է մարզվեն պարողները:

Ըստ անհրաժեշտության՝ պետք է կազմակերպել խմբային և անհատական

պարապմունքներ՝ պահպանելով կառուցվածքային բովանդակությունը: Մասնավորապես, պարապմունքի սկզբում նախապատրաստել օրգանիզմը, իսկ ավարտին կատարել վարժություններ, որոնք աստիճանաբար նվազեցնում են բեռնվածությունը [5]: Նախապատրաստական շրջանում կարևոր է յուրաքանչյուրի համար կազմակերպել անհատական պարապմունքներ: Սակայն ուսումնասիրված աշխատանքում քիչ է խոսվում ֆիզիկական պատրաստության առանձնահատկությունների, առանձին պարառոճերի տարբերակված ֆիզիկական պատրաստության կարևորության և անհրաժեշտության մասին:

Սպորտային մարզումների տեսության և մեթոդիկայի մեջ նշվում է, որ ֆիզիկական պատրաստվածության կարևորությունը հատկապես մեծ է բազմամյա սպորտային պատրաստության սկզբնական փուլում, երբ հիմք է դրվում մարզական վարպետության բոլոր բաղադրիչների զարգացմանը և լուծվում են ֆիզիկական պարտաստության այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ առողջության ամրապնդումը, համակողմանի ֆիզիկական զարգացվածությունը և մարզաձևի տեխնիկայի ուսուցումը [8,12]:

Նախնական մասնագիտացման փուլում օգտագործելով 10-11 տարեկան պարողների ֆիզիկական պատրաստության մշակված մեթոդիկան՝ ներառյալ ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության միջոցները, պարային վարժությունների հատուկ մշակված համալիրները, պարային համակցությունները և միջոցները, որոնք ընտրվել են՝ հաշվի առնելով առաջատար շարժողական, ֆունկցիոնալ ունակությունները և շարժումների հատուկ տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև տարվա ընթացքում յուրաքանչյուր մարզման ցիկլի ընթացքում ֆինանսական միջոցների ներդրման խիստ սահմանված հաջորդականությունը, զգալիորեն կբարելավվի մարզիկների ֆիզիկական և տեխնիկական պատրաստվածությունը:

Մինչև օրս սպորտային պարերի ոլորտում կատարվել է հայալեզու ընդամենը մեկ գիտական հետազոտություն՝ նվիրված նախնական սպորտային մասնագիտացման փուլում՝ 9–11 տարեկան պատանի պարողների ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի մշակմանը և փորձագիտական հիմնավորմանը:

Սպորտային պարերի մասնագետ Վ. Ալեքսանյանը ՀՀ առաջատար մարզիկների սոցոլոգիական հարցման հիման վրա պարզել է, որ մրցակցային արդյունքի հասնելու համար զույգով պարողների առաջատար շարժողական ընդունակություններից են՝ շարժումների կոորդինացիան, ճարպկությունը, հավասարակշռությունը պահպանելու կարողութ-

յունը և հոդերում ինտեգրալ շարժունակությունը: Սպորտային զույգերի մրցակցական գործունեության ուսումնասիրման արդյունքում պարզ է դարձել, որ մեկ մարզական ելույթի ընթացքում պարազույգերն ամենաշատ տեխնիկական տարրերը կատարում են «Ջայվ» պարում, այնուհետև՝ «Սամբա» և «Չա-չա-չա»:

Նա նաև իր գիտափորձերից մեկում պատահական ընտրության մեթոդով ձևավորել է 9-11 տարեկան պատանի պարողների փորձարարական և ստուգողական խմբեր՝ յուրաքանչյուրում երկու տարվա ուսուցման տասական զույգ: Փորձարարական խումբը պարապում էր իր մշակած մեթոդիկայով, ստուգողականը՝ ավանդական, ընդունված մեթոդիկայով: Պարային զույգերի պարապմունքները փորձարարական խմբում անցկացվում էին շաբաթը երեք անգամ՝ 1,5-2 ժամով: Գիտափորձի շրջանում 1,5 տարվա ընթացքում անցկացվել է 208 ուսումնամարզական պարապմունք: Փորձագիտական մեթոդիկայի արդյունավետությունը որոշվել է ֆիզիկական և տեխնիկական պատրաստվածության գնահատման չափանիշերով, աշխատունակության, սրտանոթային ու շնչառական համակարգերի ֆունկցիոնալ վիճակի ցուցանիշներով: Մանկավարժական գիտափորձի արդյունքում ֆիզիկական զարգացման ցուցանիշներում երկու խմբերի պարային զույգերի միջև էական տարբերությունները դրսևորվել են թոքերի կենսական տարողությունում (P>1%) և մարզիկների մարմնի քաշի անհավաստի ցուցանիշներում: Նշվում է, որ փորձարարական խմբում բարելավվել է մարզիկների տեխնիկական պատրաստվածության ցուցանիշները [1]:

Այսպիսով՝ հետազոտությունում ցույց է տրված 9-11 տարեկան պարային զույգերի ֆիզիկական պատրաստության մշակված մեթոդիկայի արդյունավետությունը: Ուսումնամարզական գործընթացում տարբեր վարժությունների հատուկ համալիրների, պարային խորեոգրաֆիայի, շարժախաղերի ընդգրկումը թույլ տվեց զգալիորեն բարելավել ֆիզիկական և տեխնիկական պատրաստվածությունը, բարձրացնել պատանի մարզիկների օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները, ինչն իր արտացոլումը գտավ սպորտային վարպետության և նվաճումների բարձրացման մեջ:

Սպորտային պարերով կանոնավոր պարապմունքները ոչ միայն նպաստում են առաջատար շարժողական ընդունակությունների և շարժումների կուլտուրայի զարգացմանը, այլև խթանում են անձի այն որակների կատարելագործումը, որոնք նպաստում են ինքնազարգացմանը և ինքնադրսևորմանը [2]:

Հեղինակն առավելապես անդրադառնում է մրցակցային փուլում հաջողության հասնելու գործոններին և քիչ է հիշատակում ֆիզիկական պատրաստության սկզբնական փուլը և առանձին պարառճերում պարողների շարժողական ընդունակությունների մշակման առանձնահատկությունները:

Ռուսալեզու աղբյուրները սպորտային պարերի առումով ևս սակավ են: Տեխերովայի գիտական հետազոտությունն ուղղված է պարողների պարային պատրաստության սկզբնական փուլի ուսումնասիրմանը՝ շեշտը դնելով նորարարության վրա՝ ամեն 45–րդ պարապմունքին օգտագործել նոր վարժություն: Հետազոտությունն արվել է 10–11 տարեկան պարողների շրջանում՝ ուսումնասիրելով նրանց շարժողական և ֆունկցիոնալ կարողությունների զարգացումը, ինչպես նաև տեխնիկական հնարքների աճը նախնական մարզման շրջանում [4]: Սակայն աշխատանքում չի մանրամասնում, թե ինչ վարժություններ կամ դրանց համալիրներն են առավել արդյունավետ, իսկ արդյունքները ներկայացված են ավելի ընդհանրական:

Ե. Տիմեչենկոն իր հերթին անդրադառնում 11-13 տարեկան պարողների մարզումային մասնագիտացման փուլում ֆիզիկական և տեխնիկական կողմնորոշման դասընթացների ստեղծման ծրագրին: Նա իր աշխատանքում նաև խոսում է մարզիկների ֆիզիկական պատրաստության սկզբնական փուլի մասին և որքանով է կարևոր տարիքային առանձնահատկությունները, քանի որ մարզիչների մեծամասնությունն ավելի վաղ հասակի պարողներին տալիս են նույն բեռնվածությամբ մարզման գրաֆիկ, ինչ մեծահասակներին [10]: Հեղինակը աշխատանքում առաջարկում է օգտագործել մարզումային 3 միկրոցիկլ, որը կբարձրացնի պարողի տեխնիկայի կայունությունը և 11-13 տարեկանների ֆիզիկական պատրաստության մակարդակը: Հետազոտություն են կատարել ռումբա պարառճում, մշակվել և ներդրվել է տեխնիկայի կայունությունը գնահատող համապարփակ չափանիշ՝ հիմնվելով 2 րոպե տևողությամբ թեստային վարժության կատարման վրա (ռումբա պարում՝ «առաջադիմական քայլ», տեմպտ 28 տակտ/ րոպե):

Ա. Բրեդիխինան ևս իր աշխատանքում խոսում է պատրաստության տարիքային առանձնահատկություններից և անդրադառնում 8-9 տարեկան պարողների հատուկ ֆիզիկական պատրաստության մեթոդներին՝ հաշվի առնելով նրանց մորֆոլոգիական (մորֆոլոգիան ուսումնասիրում է օրգանիզմի արտաքին կառուցվածքը) առանձնահատկությունները:

Ֆիզիկական պատրաստության մակարդակը և մրցակցային գործունեության արդյունավետությունը բարձրացնելու

համար առաջարկվում է ստեղծել հատուկ վարժությունների համալիր և շեշտը դնել տարիքային մորֆոլոգիական և ֆունկցիոնալ առանձնահատկությունների վրա [15]:

Ի. Եվգենիևնան ուսումնասիրել է պարողների նախամրցումային գործընթացը՝ շեշտը դնելով խորեոգրաֆիայի կարևորությանը: Այստեղ մեծապես կարևորվում է և հետագա արդյունքի հասնելու համար ավելի մեծ ուշադրություն է դարձվում պարողի գեղագիտական զարգացմանը, որը պետք է զուգահեռաբար շարունակել ֆիզիկական պատրաստության գործընթացին համապատասխան: Հետազոտությունում առաջարկվում է մասնակցել 45 րոպե տևողությամբ հատուկ խորեոգրաֆիայի պարապմունքին [6]:

Սակայն ուսումնասիրված աշխատանքում մեր կարծիքով կան շատ բացթողումներ: Այստեղ խոսվում է ընդհանուր գեղագիտական զարգացման մասին, որի նպատակն է՝ պարուսույցների միջոցով կատարելագործել 7-9 տարեկան պարողների վերապատրաստման գործընթացը, բայց այստեղ ևս խոսվում է ընդհանրացված և չեն առանձնացվում պարառոճերը, որն ըստ մեզ՝ առաջնային է:

Եզրակացություն: Այսպիսով՝ գիտամեթոդական աղբյուրների ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ մասնագետներն առավել մեծ ուշադրություն են դարձրել 10-ից բարձր տարիքային խմբի պարուհիներին և զույգերով պարապողների պատրաստության և մրցումային գործընթացի տարբեր հիմնահարցերին: Մինչ այս ուսումնասիրված աշխատանքները մեծապես վերաբերում են խորը մասնագիտացված փուլին: Զույգերով պարերին հեղինակները տալիս են ընդհանուր վերլուծություններ, որոնք կապված չեն սպորտային պարերի տարբեր պարառոճերի հետ:

Բավականին թերի են ուսումնասիրված տարբեր պարառոճերում պարուհիների ֆիզիկական պատրաստության հիմնախնդիրները՝ առաջատար շարժողական ընդունակությունները և դրանց մշակման մեթոդական առանձնահատկությունները:

Այս ամենը կարևոր է մարզական բարձր արդյունքների հասնելու տեսանկյունից:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանյան Վ.Հ., Պատանի պարողների պատրաստության առանձնահատկությունները, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2012, էջ 66:

2. Ալեքսանյան Վ.Հ., Ֆիզիկական պատրաստության մեթոդիկան սպորտային պարերում, Երևան, 2013, էջ 25:

3. Վերմիշյան Լ., Լատինաամերիկյան պարեր, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2018, 123 էջ:

4. Терехова М. А., Методика физической подготовки танцоров 10-11 лет на этапе начальной спортивной специализации : диссертация, кандидата педагогических наук: Волгоград, 2008, 168 с.

5. Клецов К. Г., Предсоревновательная подготовка юниоров 12-13 лет в спортивных танцах : диссертация, кандидата педагогических наук: Омск, 2010, 177 с.

6. Ересько И. Е., Методика совершенствования тренировочного процесса танцоров 7-9 лет на основе использования средств хореографии: автореф. дисс., канд. пед. наук: Хабаровск, 2005, 25 с.

7. Жаворонкова И. А., Комплектование пар в спортивных бальных танцах (на примере детей 12-15 лет): автореф., дисс. . канд. пед. наук: М., 2007.-23 с.

8. Платонов В. Н., Система подготовки спортсменов в олимпийском спорте. Общая теория и ее практические приложения: М.: Советский спорт, 2005, 820 с.

9. Румба О. Г., Народно-характерная хореография в системе подготовки специалистов по гимнастике и танцам на паркете: автореф. дис., канд. пед. наук: СПг, 2006, 23 с.

10. Николаева Е. С., Развитие координационных способностей как условие эффективного обучения девочек 5-7 лет упражнениям с предметами в художественной гимнастике: дис., канд. пед. наук: Белгород, 2006, 153 с.

11. Николаева М. С., Формирование и совершенствование способности к пространственной ориентации у гимнасток высокой квалификации при выполнении бросков и ловли мяча: дис., канд. пед. наук: М.: 1999, 200 с.

12. Тимченко Е. С., Программы тренировочных занятий технической и физической направленности на этапе спортивной специализации в спортивных танцах: диссертация, кандидата педагогических наук: 2017, 177 с.

13. Сингина Н. Ф., Некоторые аспекты общей и специальной физической подготовки в спортивных танцах / Н. Ф. Сингина, И. Н. Еремеева // Спортивные танцы: бюллетень. № 3 (5): апрель-июнь 1999.– М.: РГАФК, 1999, С. 30-48.

14. Бредихин А. Ю., Методика специальной физической подготовки танцоров 8-9 лет с учетом их морфофункциональных особенностей: дис., кандидат наук: Малаховка, 2014, 178с.

15. Холодов Ж.К., Кузнецов В.С., Теория и методика физической культуры и спорта, М.: 2014, 480 с.

FEATURES OF PHYSICAL TRAINING IN SPORTS DANCES. LITERATURE ANALYSIS

Applicant A. G. Novruzyan
Armenian State Institute of Physical Culture and Sports of Armenia, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords. Physical training, sports dances, athletes, couples, dance styles.

The aim of the research: Based on the study of the analysis of scientific and methodological literature, to reveal the opinions of specialists about the features of the organization of the process of physical training of athletes in sports dances.

Methods and organization of the research. Study and analysis of scientific and methodological, textbooks.

Analysis of the obtained results. Sports dances is an acyclic, complex-coordinating sport associated with the art of expressive movement. After being recognized as a kind of sport, the issue of physical training of dancers, as one of the components of the general training system, it became the subject of research by theorists and practitioners of this type of sport.

The scientific novelty of the research results lies in the development and justification of the pedagogical effectiveness of young dancers' physical training methodology, which for the first time is based on the identified leading motor and functional abilities of dancers in the performance of Latin American dance programs.

Research on this issue is rather scarce. There is little information on physical training of dancers, which is mainly associated with Latin American dances. Dance styles are not highlighted, as it is mainly about initial training and choreography.

So far, only one scientific study has been carried out on the development of methods of physical training of young dancers, aged 9 to 11, at the initial stage of sports specialization.

In his work, V. Aleksanyan writes about dancers in pairs, emphasizing the possibility of achieving a competitive result based on the development of the leading motor abilities of athletes. The mechanisms of influence of complex exercises specially developed for training leading motor abilities improving the sportsmanship of young dancers are explained.

Conclusion. Thus, as a result of research of scientific and methodical sources, it became clear that specialists paid more attention to dancers over the age of 10, to various issues of training and competitive process of practicing in pairs. Until now, these studies mostly related to the stage of specialized training in pairs, and did not relate to solo dancers.

Unfortunately, the issues of physical training of solo dancers, and in particular the structure of the leading motor abilities, methodigcal features of their training have not yet been studied. The solution of these issues is important for achieving high sports results.

ОСОБЕННОСТИ ФИЗИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ В СПОРТИВНЫХ ТАНЦАХ. АНАЛИЗ ЛИТЕРАТУРЫ

Соискатель А. Г. Новрузян
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова. Физическая подготовка, спортивные танцы, спортсмены, пары, танцевальные стили.

Цель исследования. На основе изучения анализа научно-методической литературы выявить мнения специалистов об особенностях организации процесса физической подготовки спортсменов в спортивных танцах.

Методы исследования. Изучение и анализ научно-методической,учебной литературы.

Анализ полученных результатов. Спортивные танцы — это ациклический, сложно-координационный вид спорта, связанный с искусством выразительного движения. После того, как они были признаны видом спорта, вопрос физической подготовки танцоров, как одного из компонентов общей системы подготовки, стал предметом исследования теоретиков и практиков этого вида спорта.

Научная новизна результатов исследования заключается в разработке и обосновании педагогической эффективности методики физической подготовки юных танцоров, которая впервые построена на учете выявленных ведущих двигательных и функциональных способностей танцоров в исполнении Латиноамериканской танцевальных программ.

Исследования по этой проблеме довольно скудны. Есть малоизвестные темы, связанные с физической подготовкой танцоров, которые в основном связаны с латиноамериканскими танцами. Танцевальные стили не выделяются, так как в основном говорится о начальной подготовке в хореография.

На сегодняшний день проведено только одно научное исследование в нашей республике, посвященное разработке методики физической подготовки юных танцоров 9-11 лет на начальном этапе спортивной специализации.

В своей работе В. Алексанян пишет о танцорах в парах, подчеркивая возможность достижения соревновательного результата на основе развитиая ведущих двигательных способностей спортсменов. Объясняются механизмы влияния специально разработанных для воспитания ведущих двигательных способностей комплексов упражнений на повышение спортивного мастерства юных танцоров.

Краткие выводы. В результате исследования было установлено, что в большей степени раскрыты особенности подготовки танцоров спортивных пар 10-ти лет старше, и к соревновательной деятельности. До настоящего времени эти исследования в большей степени были связанны с этапом углубленной специализированной подготовки в парах, и не относились к соло танцором.

К сожалению, пока не изучены вопросы физической подготовки соло-танцоров,и в особенности структуры ведущих двигательных способностей, методических особенностей их подготовки. Решение данных вапросов имеет важное значение для достижения высоких спортивных результатов.

Հոդվածն ընդունվել է 12. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 13.09. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ե. Հակոբյան

ՀՏԴ 796.42 DOI: 10.53068/25792997-2022.3.7-81

ՓՈՓՈԽԱԿԱՆ–ԻՆՏԵՐՎԱԼԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 400Մ ԱՐԱԳԱՎԱԶՈՐԴՆԵՐԻ ԱՐԱԳԱՅԻՆ ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎՐԱ

Մ.գ.թ., դոցենտ Վ.Ա.Սմբատյան,
դասախոս Հ.Վ.Քոսակյան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան, Երևան, Հայաստան
E.mail: vardan.smbatyan@sportedu.am, hasareg@yandex.ru

Առանցքային բառեր: Փոփոխական ինտերվալային մեթոդ, արագային դիմացկունություն, շարժողական ընդունակություններ, մարզական արդյունք:

Հետազոտության արդիականություն: Բարձր նվաճումների սպորտում մարզիկին ներկայացվում են ծայրաստիճան բարձր պահանջներ: 400 մետր արագավազքը աթլետիկական առավել բարդ վազքատարածություններից մեկն է: Հատուկ (արագային) դիմացկունության զարգացվածության բարձր մակարդակը, վազքի գերազանց տեխնիկան հիմնական և կարևոր բաղադրիչներն են, որոնց շնորհիվ աթլետիկական այս մրցաձևում կարելի է հասնել բարձր մարզական արդյունքների [1,2,4]:

Արագային դիմացկունության մշակման ամենակարևոր գործոնը վազքատարածության էտալոնային հատվածում բարձրացնել բացարձակ արագության ավելացման հնարավորությունը, որի շնորհիվ առաջանում է ձեռք բերած արագության լրացուցիչ պաշար: Սա հնարավորություն է տալիս մարզիկին վազքատարածությունն անցնել՝ հնարավորինս քիչ ջանք գործադրելով և առավել բարձր միջին արագությամբ:

400մ արագավազորդի հատուկ դիմացկունությունը հնարավորություն է տալիս հակազդել հոգնածությանը՝ առավելագույն լարվածությամբ աշխատանք կատարելիս: Դա նշանակում է, որ ցիկլիկ բնույթի վարժություններում ձեռք բերած արագությունը մարզիկը կարողանում է պահպանել՝ չնայած հոգնածության առկայությանը:

Նշված դիմացկունության հնարավորությունների ձեռքբերումը մարզիկի օրգանիզմից պահանջում է բարձր աերոբ և, առավելագույն անաերոբ արտադրողականություն: Ուսումնամարզական գործընթացը և մարզման պլանը կազմելու

ընթացքում մարզչին անհրաժեշտ է հստակեցնել յուրաքանչյուր մարզում ոչ միայն տեխնիկական և տակտիկական տեսանկյունից, այլև մարզիկի ֆիզիկական հնարավորությունների կատարելագործման անկյունից [5,6]:

Փոփոխական ինտերվալային մեթոդի օգտագործման բարձր արդյունավետությունն ընդունվում է բազմաթիվ հեղինակների կողմից, սակայն նրա օգտագործման որոշ բարդությունները և դժվարություններ սահմանափակում են դրա կիրառումը պատանիների ուսումնամարզական գործընթացում: Միևնույն ժամանակ, մենք ենթադրում ենք, որ տվյալ մեթոդի կիրառումը զուգակցելով մարզման լարվածության խիստ վերահսկողությամբ, օգտագործելով զարկերակային հարվածների հաշվարկն անմիջապես վազքային հատվածներն անցնելուց հետո, ինչպես նաև մարզական աշխատունակության վերականգնման համալիր միջոցներով կբարձրացնի 15–16 տարեկան 400մ արագավազորդների հատուկ արագային դիմացկունության մակարդակը, ինչն առավել բարենպաստ է հատկապես այդ տարիքային խմբերում [2,3,7]:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել մարզման գործընթացում փոփոխական–ինտերվալային մեթոդի կիրառման արդյունավետությունը 15–16 տարեկան 400մ արագավազորդների արագային դիմացկունության մշակման գործընթացի վրա:

Հետազոտության խնդիրները: 400մ արագավազորդների մարզման գործընթացում կիրառելով տարբեր մեթոդներ և միջոցներ՝ նպաստել արագային դիմացկունություն շարժողական ընդունակության մշակմանը և բարելավմանը:

Հետազոտության մեթոդները: Հետազոտությունն իրականացնելու և անցկացնելու նպատակով կիրառվել են հետևյալ մեթոդները՝

1. մանկավարժական և մասնագիտական գրականության վերլուծություն,

2. ստուգողական թեստավորում, ցուցաբերած արդյունքների գրանցում,

3. մանկավարժական դիտարկում,

4. մանկավարժական գիտափորձ,

5. ստացված արդյունքների մաթեմատիկական վերլուծություն:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Գիտահետազոտական գրականության ուսումնասիրման ընթացքում վերլուծվել են տարբեր աշխատանքներ, որոնք անմիջական կապ ունեն արագաուժային ընդունակությունների մշակման խնդրի հետ: Ուսումնասիրվել են նաև հատուկ և ընդհանուր դիմացկունության մշակման մեթոդների և միջոցների հարցեր: Այս մեթոդի կիրառման նպատակն էր 15–16 տարեկան 400մ արագավազքում մասնագիտացող աթլետների դիմացկու-

նության մշակման առանձնահատկությունների տեսական տվյալների համադրումը և բացահայտումը, ինչպես նաև մարզման արդյունավետ մեթոդների և միջոցների որոնումը: Դիմացկունության մակարդակի գնահատման համար անցկացվել են հետևյալ ստուգողական վարժությունները՝ վազք՝ 800մ և 1000մ, վազք սարնիվեր՝ 4Х400մ, կքանիստ 20կգ ծանրաձողով՝ 1 րոպեում:

Ուսումնամարզական գործընթացի կառուցման ռացիոնալ միջոցների և մեթոդների որոնման միջոցով 15–16 տարեկան 400մ արագավազքում մասնագիտացող աթլետների մոտ արդյունավետ մշակել արագային դիմացկունության ընդունակությունները:

Ուսումնամարզական գործընթացը կառուցվել է արագային դիմացկունության մշակման փոփոխական–ինտերվալային մեթոդի հիման վրա: Մարզումների ընթացքում կիրառվել են բժշկամանկավարժական վերահսկման մեթոդներ: Շաբաթվա ընթացքում իրականացվել է 5 – 6 մարզում:

Մանկավարժական գիտափորձին մասնակցել է 7 պատանի, որոնք մասնագիտանում են Երևան քաղաքի աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցում: Վերընշված թեստային վարժությունների միջոցով իրականացվել է սկզբնական և վերջնական թեստավորում: Ստացված արդյունքները ներկայացված են 1–ին և 2–րդ աղյուսակներում, ինչպես նաև 1–ին նկարում:

Նախնական թեստավորման ժամանակ պատանիների մոտ գրանցվել են հետևյալ արդյունքները: Վազք 800մ վարժությունում միջին արդյունքը կազմել է՝ 2,36 րոպե, վազք՝ 4Х400մ սարնիվեր վարժության միջին արդյունքը կազմել է՝ 1,31 րոպե, վազք՝ 1000մ վարժության միջին արդյունքը՝ 3,29 րոպե, կքանիստ՝ 20կգ ծանրաձողով վարժության միջին արդյունքը նախնական թեստավորման ընթացքում կազմեց 30 կքանիստ:

Աղյուսակ 1

400մ արագավազքում մասնագիտացող պատանի արագավազորդների նախնական թեստավորման արդյունքները

	Վարժություն	**Արդյունք M±m**
1	Վազք 800մ րոպե	2,36±0.8
2	Վազք 1000մ րոպե	3,29±0.10
3	Վազք սարնիվեր 4Х400մ	1,31±00,7
4	Կքանիստ 20կգ ծանրաձողով մեկ րոպեում քանակ (անգամ)	30±5

Աղյուսակ 2

400մ արագավազքում մասնագիտացող պատանի արագավազորդների վերջնական թեստավորման արդյունքները

	Վարժություն	Արդյունք M±m
1	Վազք 800մ րոպե	2,26±0.6
2	Վազք 1000մ րոպե	3,17±0.12
3	Վազք սարնիվեր 4Х400մ րոպե	1,22±00,8
4	Կքանիստ 20կգ ծանրաձողով մեկ րոպեում քանակ (անգամ)	41±5

Վերջնական թեստավորման արդյունքները հետևյալն էին՝ վազք 800մ վարժությունում միջին արդյունքը կազմեց 2,26 րոպե, այստեղ տեղի է ունեցել 12 վրկ., կամ 6,8%–ով միջին արդյունքի աճ: Վազք 1000մ թեստային վարժությունում վերջնական միջին արդյունքը կազմել է 3,17 րոպե, ինչը 12 վրկ. կամ 6,5%–ով առավել էր նախնական արդյունքից: Վազք 4Х400մ սարնիվեր վարժությունում վերջնական միջին արդյունքը կազմել է՝ 1,22 վրկ, այն բարելավվել է 9 վրկ–ով, կամ 10,9%–ով: Կքանիստ 20 կգ ձողով թեստային վարժության վերջնական արդյունքը կազմել է 41 կքանիստ, ինչն առավել է նախնական արդյունքից 11 կքանիստով, կամ 36,7%–ով: Այսպիսով՝ 400մ պատանի արագավազորդների արագային դիմացկունությունը մշակելու համար ընտրված միջոցները, որտեղ գերակշռում էր փոփոխական ինտերվալային մարզման մեթոդը բոլոր թեստային վարժություններում ունեցել է իր դրական ազդեցությունը, սակայն առավել բարձր աճ գրանցվել է 20կգ ձողով մեկ րոպեում կատարած կքանիստների քանակը:

400մ արագավազքում մասնագիտացող պատանի արագավազորդների նախնական և վերջնական արդյունքների համեմատականը

Նկար 1



Ծանուցում: Կապույտով նշված են թեստավորման նախնական արդյունքները, կարմիրով՝ վերջնական:

Եզրակացություն: 400մ արագավազորդների պատրաստության գործընթացը բավական բարդ խնդիր է, ինչը նախատեսում է հաշվի առնել բազմաթիվ գործոններ, և դրանք լուծելու համար պահանջում է համակարգային մոտեցում: Այն մարզման գործընթացի պայմանների, կազմակերպչական ձևերի և մեթոդական հիմունքների ամբողջականություն է, որոնք որոշակի սկզբունքների հիման վրա լավագույն կերպով համագործակցում են միմյանց հետ, ապահովում են մարզիկի առավելագույն պատրաստության մակարդակը՝ բարձր մարզական արդյունքներ ցուցաբերելու համար:

Արագային դիմացկունությունը կատարելագործելու նպատակով հատուկ ֆիզիկական պատրաստության աշխատանք կատարելն անհրաժեշտ է սկսել 15–16 տարեկանում՝ խորացված մասնագիտացման սկզբնական փուլում:

Մանկավարժական գիտափորձի արդյունքներն ապացուցում են կիրառվող միջոցների (փոփոխական ինտերվալային) մեթոդի արդյունավետությունը 15–16 տարեկան 400 մ արագավազքում մասնագիտացող արագավազորդների արագային դիմացկունության մշակման գործընթացի վրա:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վ.Մամաջանյանի ընդ.խմբ., Աթլետիկա, ուսումնական ձեռնարկ, Երևան , 2003, 187 էջ:
2. Ղազարյան Ֆ.Գ., Մարդու ֆիզկական վիճակի մոնիթորինգ, Երևան, 2007, 215 էջ:
3. Агапова Н.Н., Средства восстановления спортивной работоспособности легкоатлетов [Текст]// Проблемы физической культуры, спорта и туризма – Хабаровск, 27-29 марта 2007.- 2007. - с. 6-9.
4. Аракелян Е.Е., Экспериментальное обоснование методики применения специальных беговых упражнений в процессе начальной спортивной подготовки юных бегунов на короткие дистанции[Текст]: автореф. дисс.... канд. пед. наук. - М., 2010. - 25 с.
5. Богатырев В.С., Методика развития физических качеств юношей: учеб.пособие [Текст]/В.С. Богатырев. - Киров: 2011. - С. 180 – 214.
6. Врублевский Е.П., Управление, программирование и индивидуализация подготовки спортсменов в скоростно-силовых видах легкой атлетики: учебно-методическое пособие[Текст] / Е.П. Врублевский, А.Н. Хорунжий. – Смоленск: СГАФКСТ, 2009. – 130 с.

7. Легкая атлетика: Учебник (под общ. ред Н.Н.Чеснокова и В.Г.Никитушкина) М.: ФиС.- 2010. - 448с.

INFLUENCE OF VARIABLE INTERVAL TRAINING METHOD ON THE DEVELOPMENT OF SPEED ENDURANCE IN 400 METERS RUNNERS

PhD, Associate Professor V.A. Smbatyan,
teacher A.V. Kosakyan
Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia
Yerevan State University after V. Bryusov, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Variable-interval, method, speed endurance, motor qualities, sports result.

Research relevance: Extremely high demands are placed on the athlete's body for high achievements in modern sports. The 400m run is one of the most difficult and at the same time spectacular types of athletics. A high level of development of physical, high-speed and special endurance and excellent running technique are the main means by which you can achieve high athletic results. The most important factor in the development of high-speed endurance is to increase the maximum speed on the reference segment of the distance.

The special endurance of the 400m runner is his ability to withstand increasing fatigue while working at or near maximum intensity. This means that the athlete can maintain the acquired speed in cyclic exercises despite increasing fatigue. To develop special endurance, an athlete requires high aerobic and maximum anaerobic performance.

The use of the variable-interval method and its high efficiency are recognized by many leading experts, but some difficulties and complications limit its use in the educational and training activities of young runners. At the same time, we assume that the interval-variable method, combined with strict control of training intensity and complex methods for restoring the performance of athletes, will increase the level of speed endurance in the 400m run in runners aged from 14 to 15 years.

Research aim: To show the effectiveness of using the variable-interval method on the process of developing speed endurance in young men aged from 14 to 15, in a 400-meter run.

Research problems: Using various means and methods in the educational and training process to help to increase the speed endurance of 400 meter runners.

Research methods: Analysis of scientific and methodological literature on this issue, control testing, recording of the obtained results, pedagogical experiment, mathematical analysis of the obtained data.

Training sprinter athletes is one of the most difficult tasks that requires a systematic approach, where the trainer must take into account many factors.

It is a set of methodological foundations, organizational forms and conditions of the training process, optimally interacting with each other on the basis of certain principles and ensuring the best level of readiness of an athlete for high sporting achievements.

At the beginning of testing, the boys recorded the following average results: running 800m. – 2.36 min., running 4X400m – 1.31 min., running 1000m – 3.29 min., squats with a barbell 20kg., 30 squats.

The final testing showed the following results: 800m run - 2.26min., 4X400m run - 1.22min., 1000m run - 3.17min., squat with a 20kg barbell - 41 squats.

The implementation of serious special physical work to improve the speed endurance of athletes should begin exactly at the age of 15-16, at the initial stage of in-depth specialization.

Conclusion: The results of the pedagogical experiment prove the effectiveness of using the variable-interval method to improve the level of development of speed endurance in 15-16-year-old athletes who specialize in 400-meter running.

ВЛИЯНИЕ ПЕРЕМЕННО-ИНТЕРВАЛЬНОГО МЕТОДА ТРЕНИРОВКИ НА РАЗВИТИЕ СКОРОСТНОЙ ВЫНОСЛИВОСТИ У БЕГУНОВ НА 400 МЕТРОВ

К.п.н., доцент В.А.Смбатян,
преподаватель А.В.Косакян
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения
Ереванский государственный университет
им. В.Брюсова, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: переменно-интервальный, метод, скоростная выносливость, двигательные качества, спортивный результат.

Актуальность. В современном спорте высоких достижений к организму спортсмена предьявляются черезвычайно высокие требования. Бег на 400м один из сложных и в тоже время зрелишных видов легкой атлетики. Высокий уровень развития физической, скоростной и специальной выносливости и отличная техника бега являются основными средствами, с помошью которых можно добиться высоких спортивных результатов. Самым главным фактором в развитии скоростной выносливости является повышение максимальной скорости на эталонном отрезке дистанции.

Специальная выносливость у бегуна на 400м – это его возможность противостоять возрастающей усталости при работе максимальной или близкой к максимальной интенсивности. Это означает, что приобретенную скорость в упражнениях циклического характера спортсмен может сохранять несмотря на все возрастаюшую усталость. Для развития специальной выносливости от спортсмена требуется высокая аэробная и максимальная анаэробная производительность.

Использование переменно-интервального метода и его высокая эффективность признана многими ведущими специалистами, но некоторые трудности и сложности ограничивают его использование в учебно-тренировочном процессе юных бегунов. В то же время мы предполагали, что интервально-переменный метод сочетая со строгим контролем интенсивности тренировки и комплексными методами восстановления работоспособности спортсменов, повысит уровень скоростной выносливости в беге на 400м у бегунов 14 – 15 лет.

Цель исследования. Показать эффективность использования переменно-интервального метода на процесс развития скоростной выносливости юношей 14 – 15 лет, в беге на 400 метров.

Задача исследования. Используя в учебно-тренировчном процессе различные средства и методы способствовать повышению скоростной выносливости бегунов на 400 метров.

Методы исследования. Анализ научно-методической литературы по данной проблеме, контрольное тестирование, педагогический эксперимемнт, математический анализ полученных данных.

Краткие выводы. Подготовка легкоатлетов – спринтеров одна из сложнейших задач, которая требует системного подхода, где теренер должен учитывать множество

факторов. Она представляет собой совокупность методических основ, организационных форм и условий тренировочного процесса, оптимально взаимодействующих между собой на основе определенных принципов и обеспечивающих наилучший уровень готовности легкоатлета к высоким спортивным достижениям.

В начале тестирования у юношей зафиксированны следуюшие средние результаты, бег 800м. – 2,36мин., бег 4Х400м – 1,31мин., бег 1000м – 3,29мин., приседания со штангой 20кг., 30 приседаний.

Итоговое тестирование показало следуюшие результаты: бег 800м – 2,26мин., бег 4Х400м – 1,22мин., бег 1000м – 3,17мин., приседание со штангой 20кг – 41 приседаний.

Результаты педагогического эксперимента доказывают эффективность использования переменно-интервального метода для улучшения уровня развития скоростной выносливости у легкоатлетов 15-16 лет, специализирующихся в беге на 400 метров.

Выполнение серьезной специальной физической работы по совершенствованию скоростной выносливости у легкоатлетов следует начинать именно в 14-15 лет, на начальном этапе углубленной специализации.

Հոդվածն ընդունվել է 17. 07. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 18.07. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ԲԱԺԻՆ 3. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀՏԴ 37.015.31 DOI: 10.53068/25792997-2022.3.7-90

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ORCID: 0000-0001-6516-9120

Հ. գ. թ., դոցենտ Վ.Ղ. Գեղամյան,
դասախոս Ս.Ս. Արզաքանյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E.mail: Vardan.geghamyan@sportedu.am
Sona.arzakanyan@sportedu.am

Առանցքային բառեր: Ուսանող, ընդունակություններ, ուսումնական գործընթաց, համեմատական վերլուծություն, զարգացման դինամիկա:

Հետազոտության արդիականություն: Արդի ժամանակաշրջանի կրթական համակարգում իրականացվող շարունակական փոփոխություններն ուղղված են մանկավարժական գործունեության արդյունավետության երաշխիքներն ապահովող գործոնների ձևավորմանն ու զարգացմանը, ինչը շատ կողմերով պայմանավորված է սովորողի մանկավարժական ընդունակությունների զարգացվածության բարձր մակարդակով: Կրթական գործընթացը ոչ միայն իր էական ազդեցությունն է թողնում սովորողի գիտելիքների, հմտությունների և կարողությունների վրա, այլև ձևավորում և զարգացնում է ընտրած մասնագիտությանը համապատասխան ընդունակություններ: Սովորողի գործունեության արդյունավետության մեջ էական դեր են կատարում ընտրած մասնագիտությանը համապատասխան ընդունակությունները, որոնք թույլ են տալիս հաջողությամբ յուրացնել բուհի ծրագիրը և կայանալ որպես մասնագետ:

Ապագա մանկավարժի մասնագիտական գործունեությունը կազմակերպելու և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է մանկավարժական որոշ ընդունակությունների զարգացման բարենպաստ մակարդակ (կազմակերպչական, հաղորդակցական, կառուցողական, ճանաչողական և այլն): Այդ են վկայում

նաև տվյալ հիմնախնդրի հետ կապված բազմաթիվ հետազոտությունները [2,5,6]:

Այս տեսանկյունից առավել կարևորվում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ապագա մասնագետների մանկավարժական ընդունակությունների մակարդակի բարձրացման և ժամանակակից պահանջներին դրանց համապատասխանեցման հիմնախնդիրը [1]:

Տվյալ հիմնախնդրի լուծման սկզբնափուլը կարելի է համարել ուսումնառության ժամանակահատվածում բուհում ուսանողի մանկավարժական ընդունակությունների ուսումնասիրումը և զարգացման մակարդակի փոփոխության բացահայտումը: Միայն այդ հիմնահարցի պարզաբանման դեպքում հնարավոր է հիմնավորել և առաջարկել մանկավարժական ընդունակությունների կատարելագործման արդյունավետ ուղիներ [7]:

Հետազոտության նպատակը՝ ՀՖԿՍՊԻ-ի ուսանող մասնագետների մանկավարժական ընդունակությունների ձևավորման դինամիկան և դրանց բովանդակությունների բացահայտումն է՝ ըստ ուսումնառության 4 տարիների:

Հետազոտության նդիրներն են՝

1.Ուսումնասիրել ՀՖԿՍՊԻ-ի ուսանող-մասնագետների առավել կարևոր մանկավարժական ընդունակությունների դրսևորման շարժընթացը:

2. Բնութագրել տարբեր կուրսերում սովորող ուսանողների հաղորդակցական, կազմակերպչական, լսելու և կոնֆլիկտից խուսափելու ընդունակությունների զարգացման յուրահատկություններն ու ձևավորման առանձնահատկությունները:

Հետազոտության մեթոդներն ու կազմակերպումը: Հետազոտական գործընթացում ներառվել են հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, միմյանց հետ փոխկապակցված անկետային թեստավորում, մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտություններն արդյունավետ կազմակերպելու նպատակով գործնականում կիրառվել է Վ.Վ. Սինյավսկու և Բ.Ա. Ֆեդորիշինի կողմից մշակված կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունների ուսումնասիրման (ԿՕՀ) մեթոդիկան: Ն.Վ. Կիրշևայի և Ն.Վ. Ռյաբչիկովայի կողմից մշակված անձի կոնֆլիկտայնության մակարդակի գնահատման թեստը, ինչպես նաև լսելու ընդունակությունն ուսումնասիրող անկետային մեթոդը:

Հետազոտություններն իրականացվել են 2019-2020.ուսումնական տարվա ընթացքում, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի 1-ից 4-րդ կուրսերի տարբեր մասնագիտությամբ սովորող (ֆուտբոլ,

ըմբշամարտ, մարզական պարեր, շախմատ, լող, ծանրամարտ, կարատե և այլն) 200 ուսանողների շրջանում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հաշվի առնելով ոլորտի մասնագետների և մեր կողմից իրականացված երկարատև դիտարկումները՝ առանձնացվել և հետազոտվել են կազմակերպչական, հաղորդակցական, կոնֆլիկտայնության և լսելու ընդունակությունները [1,2,3,4]:

ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների հետազոտված մանկավարժական ընդունակությունների ցուցանիշների համեմատական վերլուծությունը՝ ըստ ուսումնառության տարբեր տարիների, փաստում է, որ առաջին և երկրորդ կուրսի հետազոտված ուսանողների ցուցանիշներն իրենց դրսևորման աստիճանով ու բնույթով միմյանցից գրեթե չեն տարբերվում: Երկու խմբում ընդգրկված ուսանողների միջև 4 մանկավարժական ընդունակությունների ցուցանիշների տարբերությունը՝ ըստ Ստյուդենտի սանդղակի (t), էական չեն, բացառությամբ՝ կոնֆլիկտայնության ընդունակության ցուցանիշի, որտեղ գրանցվել է հավաստի ($p < 0,05$) տարբերություն:

Հետազոտված ընդունակությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում կոնֆլիկտայնության ուսումնասիրումը, քանզի դրա ցածր մակարդակն այն չափանիշերից մեկն է, որը դրականորեն է բնութագրում ֆիզիկական կուլտուրայի ուսուցչին և մարզչին՝ որպես մանկավարժ և դաստիարակ:

Ինչպես տեսնում ենք, 1-ին տրամագրում ներկայացված կոնֆլիկտայնության ցուցանիշը ուսումնառության առաջին և երկրորդ տարիների ընթացքում արդեն իսկ դրսևորում է զարգացման աճ:

Ըստ հետազոտության արդյունքների՝ 1-ին կուրսի ուսանողների մոտ կոնֆլիկտայնության ցուցանիշը համապատասխան մեթոդի վերլուծության չափանիշերի միջին մակարդակի է, իսկ 2-րդ կուրսում այն դրսևորվում է զարգացման միջինից ցածր մակարդակում. որքան փոքր է ստացված ցուցանիշը, այնքան դրական է այն դրսևորվում, այսինքն՝ 2-րդ կուրսում իջնում է ուսանողի կոնֆլիկտայնության մակարդակը: Ենթադրվում է, որ այս փաստը պայմանավորված է հետևյալով. հայտնի է, որ երկրորդ կուրսը համարվում է ուսանողի ադապտացիայի վերջին փուլը, և ուսումնառության երկու տարիների ընթացքում նոր սոցիալական խմբերում ընդգրկվելը, միջանձնային փոխհարաբերություններն ու ադապտացիոն գործընթացն էականորեն կարող են ազդել ուսանողի կոնֆլիկտայնության ցուցանիշների վրա:

Ուսումնառության առաջին և երկրորդ տարիները համընկնում են դեռահասության երկրորդ կամ հասունության

առաջին փուլի հետ, որտեղ ակնհայտ ակտիվանում են հատկապես անձի այն պահանջմունքները, որոնք չեն բավարարվել ավագ դպրոցական տարիքում՝ մեծացնելով կոնֆլիկտայնության հավանականությունը:

Ինչ վերաբերում է մանկավարժական մյուս 3 ընդունակություններին, ապա կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունների ցուցանիշները երկու խմբերում էլ գրանցել են միջին մակարդակ, իսկ լսելունը՝ միջինից ցածր և, ինչպես նշել ենք, նրանց միջև տարբերությունը էական չէ, ինչը խոսում է այն մասին, որ ուսումնառության երկու տարիները դեռ բավարար չեն, որ նպաստեն այս ընդունակությունների զարգացմանը:

Տրամագիր 1

ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների մանկավարժական ընդունակությունների զարգացման դինամիկան՝ ըստ ուսումնառության տարիների



Մեր կողմից փորձ է արվել համեմատական վերլուծության ենթարկել նաև 2–րդ և 3-րդ կուրսի հետազոտված ուսանողների մանկավարժական ընդունակությունների ցուցանիշները, որոնք վկայում են, որ հատկապես կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունները զգալի զարգացման են հասնում 3-րդ կուրսի ուսանողների մոտ: Այլ է պատկերը

մյուս երկու ընդունակությունների ցուցանիշների միջև: Այսպես՝ լսելու ընդունակությունը դրսևորել է բավարար, իսկ կոնֆլիկտայնությունը երկու խմբերում էլ՝ միջինից ցածր ցուցանիշ, սակայն եթե միջին թվաբանական տվյալներն ենք դիտարկում, այստեղ 3-րդ կուրսում նկատվում է դրական միտում (տես՝ տրամագիր 1):

Կազմակերպչական ընդունակության ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ այն արդեն ուսումնառության 3-րդ կուրսում դրսևորում է զարգացվածության միջինից բարձր մակարդակ և իր դրսևորման աստիճանով ու բնույթով էականորեն տարբերվում է 1-ին և 2-րդ կուրսի ուսանողների միևնույն ցուցանիշներից: Գրեթե նույն պատկերն է գրանցվել նաև հաղորդակցական ընդունակության ցուցանիշների համեմատական վերլուծության միջև, որտեղ նույնպես 3-րդ կուրսում նկատվում է զգալի աճ՝ դրսևորելով միջինից բարձր ցուցանիշ, ինչը նույնպես ուսանողի ուսումնադաստիարակչական գործունեության գրավականներից մեկն է:

Այս երկու ընդունակությունների (կազմակերպչական և հաղորդակցական) զգալի տարբերությունը ենթադրում է, որ այն հատկապես պայմանավորված պետք է լինի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայով, սակայն մանկավարժական պրակտիկայից առաջ և հետո իրականացված ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ բացառությամբ հաղորդակցական ընդունակության՝ մնացած բոլորում տեղի են ունեցել դրական տեղաշարժեր: Լավագույն դեպքում ցուցանիշների միջև տարբերությունը մանկավարժական պրակտիկայի սկզբի և ավարտի միջև ընկած ժամանակահատվածում կազմել է ընդամենը 0,5-1 միավոր: Ստացված տվյալները վերաբերում են ընդունակությունների զարգացվածության միջին մակարդակին, որը պրակտիկայի արդյունքում չի փոփոխվել:

Քանի որ չեն հայտնաբերվել հավաստի փոփոխություններ ընդունակությունների միջին ցուցանիշների շարժընթացում, կարևոր էր պարզաբանել՝ արդյո՞ք բարելավվել են միջինից ցածր կամ միջինից բարձր հատվածում գտնվող ցուցանիշները:

Այս հարցի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, ինչպես և միջին ցուցանիշների դեպքում, պրակտիկայի ընթացքում ուսանողների մանկավարժական ընդունակությունների փոփոխությունները միջինից ցածր կամ բարձր մակարդակներում նույնպես էական չէին, չնայած, որ գրանցվել են ինչպես դրական, այնպես էլ բացասական որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, ուսումնասիրված բոլոր ընդունակությունների ցուցանիշնե-

ում գրանցվել են չնչին փոփոխություններ (0,5 – 1 միավոր): Դրական տեղաշարժերը վերաբերում են կազմակերպչական և հաղորդակցական ընդունակություններին: Սակայն բացահայտված փոփոխությունները հավաստի չէին:

Վերոնշյալը փաստում է այն, որ 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան չի կարող էական ազդեցություն ունենալ մանկավարժական ընդունակությունների զարգացման վրա, սակայն մանկավարժական պրակտիկայի ընթացքում առաջին անգամ ուսանողը գործնականում ծանոթանում է ընտրած մասնագիտության հետ, ինչը խորացնում է մասնագիտական հետաքրքրությունները, մեծանում է անձի հավակնության աստիճանը՝ կապված ապագա մասնագիտության հետ, բարձրացնում է ուսանողի ինքնադաստիարակման պահանջը, որոնց արդյունքում էլ ձևավորվում և զարգանում են համապատասխան ընդունակությունները:

Այնուհետև, համեմատելով 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողների հետազոտված ցուցանիշները, պարզ է դառնում, որ 4-րդ կուրսում որոշակի զարգացման աճ է նկատվում միայն կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունների ցուցանիշներում: Երկուսում էլ տարբերությունը, համեմատած 3-րդ կուրսի, հավաստի է ($p< 0,05$) և, ըստ թեստերի արդյունքների՝ պահպանվում է միջինից բարձր մակարդակ:

Կոնֆլիկտայնության և լսելու ընդունակությունների ցուցանիշների միջև էական տարբերություն չի գրանցվել:

Փաստ է նաև այն, որ հետազոտված մանկավարժական ընդունակությունները փոխկապակցված են ինչպես միմյանց, այնպես էլ մյուս ընդունակությունների հետ, քանզի որևէ ընդունակության ոչ բավարար զարգացման դեպքում այն փոխկապակցվում է մեկ այլով, կամ ընդհակառակը, բացասական ազդեցություն է ունենում մյուսների վրա:

Այսպիսով՝ ամփոփելով հետազոտության արդյունքները՝ որպես գիտական նորույթ, կարող ենք նշել այն, որ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ապագա մասնագետների մանկավարժական ընդունակությունների զարգացվածության բարձր աստիճանը կարող է նպաստել՝ իրականացնելու առավել արդյունավետ ուսումնադաստիարակչական գործընթաց:

Որպես **տեսական և կիրառական նշանակություն՝ կարող ենք առանձնացնել ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների,** ըստ ուսումնառության տարբեր տարիների, **հետազոտված մանկավարժական ընդունակությունների** կառուցվածքային բնութագրերը, դրանց զարգացմանը նպաստող կիրառական մոտեցումները,

որոնց իրականացումը կապահովի մանկավարժական ընդունակությունների դրական շարժընթացը:

Եզրակացություն: Իրականացված համեմատական վերլուծություններից ու դիտարկումներից ստացված տվյալներով՝ կարելի է եզրակացնել.

1.1-ին և 2-րդ կուրսերում, որոնք համարվում են ուսանողների ադապտացման շրջան, չեն կարող էական ազդեցություն ունենալ ընդունակությունների զարգացման գործում: Սակայն զգալի աճ է նկատվում հատկապես 3-րդ և որոշակի դրական փոփոխություն 4-րդ կուրսերում, ինչը պայմանավորված է հատկապես մանկավարժական և մարզչական պրակտիկայով, տարբեր ուսումնական ծրագրերով, կրեդիտային համակարգի փոփոխություններով, ուսանողի ադապտացիոն խնդիրներով, տարիքային և անձնային առանձնահատկություններով, բուհում տարբեր սոցիալական խմբերում միջանձնային փոխհարաբերություններով, ինչպես նաև բուհի՝ ծրագրով նախատեսված տարբեր միջոցառումներով:

2. Ուսումնառության 4 տարիների ընթացքում, բացառությամբ լսելու ընդունակության, մյուսները զարգանում ու փոփոխություններ են կրում ուսումնական գործընթացին զուգընթաց, և իրենց զարգացվածության մակարդակով, դրսևորման օրինաչափություններով ուսումնառության տարբեր կուրսերում տարբեր են:

3. Ապագա մասնագետի մանկավարժական ընդունակությունների զարգացման գործում էական նշանակություն ունեն ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը, նորարարական մոտեցումները, դասավանդման մակարդակը, գիտատեխնիկական հագեցվածությունը, դասախոսի և ուսանողի փոխհարաբերությունները: Մեծ սոցիալականացնող և զարգացնող ազդեցություն ունեն նաև ուսանողական միջավայրն ու ուսանողական, մարզական խմբերի առանձնահատկությունները:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արզաքանյան Ս.Ս., Գեղամյան Վ.Ղ., Մանկավարժի անձին ներկայացվող հոգեբանական պահանջները, Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ, Գիտամեթոդական պարբերական, №2, Երևան, 2021, էջ 26-33:

2. Ղազարյան Ֆ. Գ., Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության դիդակտիկայի հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2009, 111 էջ:

3. Белкин А. С., Педагогическая компетентность. Учеб. пособие / А.С. Белкин, В.В. Нестеров. Учебная книга, Екант. : 2003, – 188 с.

4. Ильина Н. Л., Психология тренера: учеб. пособие. — СПб.: Изд-во С.-Петерб. ун-та, 2016. — 109 с

5. Исаев Е. И., Педагогическая психология : учебник для академического бакалавриата / Е. И. Исаев. — М. : Издательство Юрайт, 2019. — 347 с.

6. Крутецкий, В.А., Педагогические способности, их структура, диагностика, условия формирования и развития: учеб. пособие. – М.: Прометей, 1991. – 112 с.

7. Федотенко И. Л., Туревская Е. И., Югфельд И. А. Подготовка будущих бакалавров физической культуры к превентивной профессионально-педагогической деятельности //Теория и практика физической культуры № 3. 2015, стр. 57 – 61

DYNAMICS OF FORMATION OF PEDAGOGICAL ABILITIES OF FUTURE SPECIALISTS OF PHYSICAL CULTURE AND SPORT

PhD of Psychological Sciences, Associate Professor V. Gh. Geghamyan,
Lecturer S.S. Arzaqanyan
Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: Student, abilities, educational process, comparative analysis, dynamics of development.

The article presents the results of a study of the pedagogical abilities of students of Armenian State Institute of Physical Culture and Sports, which can be one of the keys to ensure the effectiveness of professional activity: organizational, communicative, conflict-oriented abilities, and listening skills.

Research aim is to reveal the dynamics and contents of the development of pedagogical abilities of the student specialists of ASIPCS, based on the results of a 4-year study.

Research methods: study and analysis of scientific and methodological literature, survey of interrelated and mutually compensating results, expert assessment, survey-testing, mathematical and statistical analysis.

The research was carried out among 200 students from the 1st to 4th courses of ASIPCS that represented various sports: basketball, volleyball, football, wrestling, sports dances, gymnastics, swimming, there were also k*inesiologists*, sports journalists, etc.

Analysis of research results: Th**e** analysis of the researched abilities of students of ASIPCS revealed, that in addition to the ability to listen, along with the educational process, other significant changes develop and undergo, and the level of their development and patterns of manifestation are different in different courses of study.

Conclusion: Comparative analysis and observations have shown that the correct organization of the educational process, innovative approaches, the level of teaching and the relationship between the lecturer and the student are essential for the development of student abilities. Student environment and peculiarities of student sport teams also have a great socializing and developing effect.

ДИНАМИКА ФОРМИРОВАНИЯ ПЕДАГОГИЧЕСКИХ СПОСОБНОСТЕЙ БУДУЩИХ СПЕЦИАЛИСТОВ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА

К. п. н., доцент В.Г. Гегамян,
преподаватель С.С. Арзаканян
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: студент, способности, учебный процесс, сравнительный анализ, динамика развития.

В статье представлены результаты исследования педагогических способностей студентов Государственного института физической культуры и спорта Армении, которые могут стать одними из залогов обеспечения эффективности профессиональной деятельности: организаторские, коммуникативные, конфликтоориентированные способности, умение слушать.

Цель исследования - выявить динамику и содержание развития педагогических способностей студентов-специалистов ГИФКСА по итогам 4-х летнего обучения.

В исследовательский процесс были включены следующие методы:изучение и анализ научно-методической литературы,опрос взаимосвязанных и компенсирующих

друг друга результатов ,экспертная оценка, опрос-тестирование, математико-статистический анализ.

Исследование проводилось среди 200 студентов с 1-4 курс ГИФКСА, представляющих различные виды спорта:баскетбол, волейбол, футбол, борьба, спортивные танцы, гимнастика, плавание, также были кинезиологи, спортивные журналисты и др.

Результаты исследования. Из анализа исследуемых способностей студентов ГИФКСА стало ясно, что, кроме умения слушать, наряду с учебным процессом развиваются и претерпевают существенные изменения и другие, причем уровень их развития и закономерности проявления различны на различных курсах обучения.

Краткие выводы. Сравнительный анализ и наблюдения показали, что правильная организация учебного процесса, инновационные подходы, уровень преподавания и отношения между преподавателем и студентом имеют важное значение для развития способностей студента. Студенческая среда и особенности студенческих спортивных коллективов также имеют большой социализирующий и развивающий эффект.

Հոդվածն ընդունվել է 17. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 18.09. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Մարդոյան

ՀՏԴ 159.9 DOI: 10.53068/25792997-2022.3.7-100

ԱՌԱՋԱՏԱՐԻ ԴԵՐԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԹԻՄԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հ.գ.թ., դոցենտ Ն.Է. Գևորգյան, մ.գ.թ. Մ.Ս. Բարբարյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E.mail: natalya.gevorgyan@sportedu.am, mesrop.barbaryan@sportedu.am

Առանցքային բառեր: Առաջատարություն, մարզական թիմ, մարզիչ, մարզիկ, թիմային հաջողություն, առաջադիմություն, վարքագծային դրսևորում, թիմի առաջատար:

Հետազոտության արդիականություն: Սպորտում հիմնական սոցիալ-հոգեբանական օղակը թիմն է:

Մարզական թիմը հոգեբանական առանձնահատկություններով և որոշակի հարաբերություններով խումբ է:

Յուրաքանչյուր խմբում հաստատվում են իշխողի և ենթարկվողի, ազդողի և հետևորդի հարաբերություններ, որոնք բնութագրում են առաջատարությունը: Վերջինս միջանձնային ազդեցության գործընթաց է՝ պայմանավորված արժեքների իրացմամբ, որը բնորոշ է խմբի անդամներին և միտված է խմբի առջև դրված նպատակների լուծմանը [1]:

Սպորտային խմբերում և թիմերում առաջատարությունը պետք է դիտարկվի որպես ինքնակառավարման սոցիալապես անհրաժեշտ, բնական գործընթաց: Թիմի առաջատարը պետք է հստակ տեսլական ձևակերպի, որպեսզի մարդկանց ջանքերն ուղղի մեկ ուղղությամբ: Իսկական առաջատարն օգնում է թիմի անդամներին աշխատանքը դարձնել իմաստալից [6]:

Առաջատարը մարզական թիմերի այն կարևոր հիմքն է, առանց որի, ինչպես ցույց են տալիս մի շարք մասնագետների կատարած հետազոտությունները, թիմի գործողությունները կդատապարտվեն ձախողման:

Մարզական թիմերում առաջատարի ներգործության վերաբերյալ հետազոտությունները սակավաթիվ են, մեզ հասանելի գրականությունում դեռ չենք հանդիպել հետազոտությունների, որտեղ ուսումնասիրվել են Հայաստանում տարբեր մարզաձևերի առաջատարների անհատական, հոգեբանական առանձնահատկությունները: Սույն հանգամանքով է պայմանավորված ընտրված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը, խնդիրները: Հետազոտության նպատակն է՝ բացահայտել տարբեր մար-

զածևերում առաջատարի դերն ու գործունեությունը, վարքագծային դրսևորման առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են.

• Ուսումնասիրել առաջատարությունը՝ որպես սոցիալ-հոգեբանական երևույթ:

• Բացահայտել առաջատարի դերը մարզական գործընթացում:

• Բացորոշել առաջատարի անհատական–հոգեբանական առանձնահատկությունները:

• Պարզել առաջատարի վարքի դրսևորման առանձնահատկությունները մարզական թիմերում:

Հետազոտության մեթոդներն են՝

• մասնագիտական գրականության աղբյուրների ուսումնասիրություն և վերլուծություն,

• թեստային հետազոտություն,

• հոգեբանական զրույց,

• դիտում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Առաջատարության հարցը հաճախ քննարկվում է թե՛ մարզիկների, և թե՛ մարզիչների կողմից: Երբեմն, խոսքը թիմի անդամների միջև առաջատարի բացահայտումն է, իսկ երբեմն էլ թիմի անդամները փորձում են գնահատել հենց մարզչի արդյունավետությունը՝ որպես առաջատար [5]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ամերիկայի Միացյալ Նահանգների մի շարք ականավոր սոցիալական հոգեբաններ ուսումնասիրել են առաջատարության տարբեր առանձնահատկությունները: Նրանց հետաքրքրում էր, թե ինչ հատկանիշներով են մարդիկ դառնում առաջատար, ինչպես է առաջատարությունն օգնում կամ խոչընդոտում խմբային նպատակների իրագործմանը: Այդ ուսումնասիրություններից մի քանիսը նվիրված են նաև մարզիկների և մարզիչների միջև առաջատարության դերին [5]:

Սպորտային թիմերում սոցիալ-հոգեբանական գործընթացների ուսումնասիրման և կառավարման պրակտիկան ցույց է տալիս, որ թիմում առաջատարի բնականոն գործունեության հիմնական խնդիրը մարզչի և մարզիկների միջև փոխըմբռնումն է:

Սպորտում առաջատարության վերլուծությունը ցույց է տալիս, որ սպորտային թիմում կան առաջատարության ինչպես իրական, այնպես էլ պոտենցիալ հնարավորությունների բազմազանություն: Սպորտային թիմերում առաջատարներին վերլուծելիս կարելի է տեսնել, որ նրանք որոշակի ֆիզիկական հատկություններ ունեն, որոնք չունեն ուրիշները: Օրինակ՝ առաջատարները հիմնականում մի փոքր

ավելի բարձրահասակ են, ավելի ագրեսիվ և ուժեղ են, քան սովորական մարզիկները:

Ընդհանուր ենթադրությունը, որ անհատականության գծերի որոշակի համակցությունը կանխատեսում է առաջատարության արդյունավետությունը, չի հաստատվել առկա փորձարարական ապացույցներով [1]:

Սպորտային թիմերի հիման վրա կատարված հետազոտությունների շնորհիվ հաջողվել է մշակել սպորտում առաջատարության ոճերի դասակարգման հետևյալ աղյուսակը (աղյուսակ 1):

Առաջատարի հաջողությունը մասամբ կախված է խմբի անդամների կողմից՝ նրա կարգավիճակի, իրավասության և անհատականության ընկալումից: Փորձառու բարձրակարգ մարզիկներն ավելի քննադատաբար են վերաբերվում առաջատարին, քան երիտասարդ մարզիկները:

Հետազոտություններն անցկացրել ենք Նոր Նորք վարչական շրջանում գտնվող «Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոնում՝ տարբեր մարզաձևերի մարզիկների, «Արարատ-Արմենիա» աղջիկների ֆուտբոլային ակումբի խաղացողների և, «Ադանա» ֆուտզալի թիմի պատանի մարզիկների հետ՝ 2022 թվականի մարտ-ապրիլ ամիսներին:

Ընդհանուր առմամբ հետազոտություններին ներգրավված են եղել 14-20 տարեկան 75 մարզիկ, որոնցից՝ 20-ն ըմբշամարտիկներ էին, 15-ը՝ բռնցքամարտիկներ, 10-ը՝ ծանրամարտիկներ և 30-ը ֆուտբոլիստներ (12 պատանի, 18 աղջիկ): Դիտարկելով պարապմունքները՝ նկատեցինք առաջատարների դիրքորոշումը. նրանք կազմակերպում էին թիմի գործողությունները, հետևում թիմում կարգ ու կանոնին, ուղղորդում թիմակիցներին:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվեց, որ գրեթե բոլոր խմբերում առաջատարը նա էր, ով ավելի մեծ էր տարիքով կամ սպորտում ուներ որոշակի մարզական հաջողություններ:

Այսպիսով՝ ամենաարդյունավետ առաջատարները սովորաբար նրանք են, ովքեր ավելի լավ են հասկանում առաջատարների և հետևորդների դերը և կարողանում են գնահատել խմբի անդամների հարաբերական կարգավիճակը:

Ինչպես արդեն նշեցինք, բարձրակարգ մարզիկը միշտ չէ, որ կարող է նաև լավ առաջատար լինել, սակայն ներկայիս սպորտում այդպիսի օրինակները շատ են, կարող ենք, նշել մի քանի պրոֆեսիոնալ մարզիկների, որոնք նաև լավ առաջատարներ են: Մասնավորապես, ֆուտբոլում դիտարկենք Քրիշտիանու Ռոնալդուի օրինակը. վերջինս Պորտուգալիայի ֆուտբոլի հավաքականի ավագն է: Նրա գործողությունները Եվրո–2016-ին թիմին օգնեցին հասնել հաջողության:

Այսպիսով՝ մարզական թիմերում առաջատարն այն կարևոր օղակն է, առանց որի թիմը լուրջ հաջողության չի կարող հասնել [4]:

Առաջատարի անհատականությունը և նրա վարքագծի ոճը՝ որպես գերիշխող անձ, մեծապես որոշում են յուրաքանչյուր մարզիկի և ամբողջ թիմի ճակատագիրը: Այլ կերպ ասած՝ առաջատարներն ազդում են անհատների սոցիալականացման վրա:

Ուսումնասիրելով մարդկանց սոցիալական վարքագիծը՝ կարելի է հասկանալ առաջատարության դինամիկան և բացահայտել խմբային կյանքի շրջադարձային կետերը:

Որքան տարբեր են մարդիկ և խմբերը, նույնքան տարբեր են առաջատարներն ու նրանց վարքագծերը:

Առաջատարության նշաններ կարելի է գտնել ցանկացած խմբերում, և բոլոր դեպքերում կարելի է հետևել մեկ օրինաչափության. որպես առաջատար հանդես եկած անձը և նրա ղեկավարման ոճն արտացոլում են նրա առաջատար դառնալու հանգամանքները [3]:

Աղյուսակ 1.

Առաջատարության 6 ոճ սպորտում

Ոճ	Ավտորի–տար	Հեղինա–կավոր	Ընկերա–կան	Ժողովրդա–վարական	Օրինա–կելի	Ուսուցո–ղական
Առաջա–տարի գործելա ոճ	Պահան–ջում է ան–հապաղ հնազան–դություն	Մոբիլի–զացնում է մարդկանց՝ իր գաղա–փարները կյանքի կո–չելու հա–մար	Ձևավորում է հուզական կապեր և ստեղծում ներդաշնա–կություն	Հասնում է համերաշ–խության՝ թիմի ան–դամներին ակտիվորեն ներգրա–վելով կա–ռավար–ման գործ–ընթացում	Սահմա–նում է արդյու–նավետու–թյան և նվիրվա–ծության բարձր չա–փանիշներ	Օգնում է թիմի ան–դամներին
Կարգա–խոս	«Արե՛ք այն, ինչ ձեզ ասում եմ»	«Բոլորն իմ հետևից»	«Ամենից առաջ մարդիկ»	«Իսկ դուք ին՞չ եք կարծում»	«Իսկ հիմա արեք այն–պես, ինչ–պես ես եմ անում»	«Փորձեք այս տար–բերակը»

Առաջա–տարի գերիշ–խող բնու-թագրեր	Կամք, նա-խաձեռնո–ղականութ–յուն, ինքնա-տիրապե-տում	Ինքնա–վստահու–թյուն, կարեկ–ցելու կարողու–թյուն, նո-րարարութ–յուն ներմու-ծելու կարողու–թյուն	Կարեկցելու կարողու–թյուն, սո-ցիալական կապերն ամրապընդելու և մարդկանց հետ արդյու-նավետ շփվելու կա-րողություն	Թիմի այլ անդամների հետ գրա-գետ շփվե-լու, թիմային աշխատան–քը կառա-վարելու, մարդկանց հետ արդ-յունավետ հաղոր–դակցվելու կարողու–թյուն	Բարե–խղճութ–յուն, կամք, նախա–ձեռնողա–կանութ–յուն	Խրա–խուսելու կարողութ–յուն, կա–րեկցելու կարողութ–յուն
Սպոր–տային գործու–նեության մեջ դրսևոր–ման օպտի-մալ պայմաններ	Ճգնա–ժամային իրավի–ճակներ	Իրավի–ճակներ, որտեղ փոփոխութ–յունները պահան–ջում են նոր գաղա–փարներ կամ գոր-ծողու–թյունների հստակ ուղղութ–յուն	Իրավիճակ–ներ, երբ պահանջ-վում է հարթել թիմի ան-դամների միջև տա-րաձայ–նություն–ները կամ ստիպել նրանց դժվարին պայման–ներում աշխատել	Իրավիճակ–ներ, որոնց դեպքում անհրա–ժեշտ է համոզել թիմի անդամնե–րին թիմի քաղաքա–կանության ճշտության մեջ	Իրավի–ճակներ, երբ անհրա–ժեշտ է արագ աշխա–տանքի անցնել	Իրավիճակ–ներ, երբ անհրաժեշտ է օգնել թիմի անդամներին
Ազդեցու–թյունը թիմային մթնոլոր–տի վրա	Կործա–նարար	Խիստ բարեհա–ջող	Բարե–հաջող	Բարեհա–ջող	Կործա–նարար	Բարե–հաջող

Առաջատարներն իրենց կենտրոնական դիրքի շնորհիվ կարևոր դեր են գրավում խմբային նպատակների, աշխարհայացքի ձևավորման, ինչպես նաև խմբի անդամների համատեղ գործունեության կազմակերպման գործում, ուստի առաջատարի դերը թիմում շատ արժևորվում է:

Ազդեցիկ առաջատարի կարիքը խմբի կողմից հատկապես հրատապ է այն դեպքերում, երբ խմբի նպատակներին հասնելու ճանապարհին ինչ-որ խոչընդոտ է առաջանում, կամ դրսից ինչ-որ բան սպառնում է խմբին, այսինքն՝ երբ կա բարդ ճգնաժամային իրավիճակ [5]:

Դժվար թե հնարավոր լինի առանձնացնել անհատականության այնպիսի գծեր, որոնք բոլոր իրավիճակներում հնարավորություն են տալիս ճշգրիտ բացահայտել արդյունավետ առաջատարին: Այնուամենայնիվ, կան որոշ գծեր, որոնք բավականին լավ են բնութագրում առաջատարին՝ մի շարք տարբեր իրավիճակներում:

Հետազոտությունները բացահայտել են, որ առաջատարներն ավելի լավ են հարմարեցված շրջակա միջավայրին և ընդհանրապես կյանքին, ավելի գերիշխող են, ավելի էքստրավերտ, ավելի առնական, ավելի քիչ պահպանողական և միջանձնային հարաբերությունների ոլորտում ունեն ավելի մեծ հմտություն, քան խմբի սովորական անդամները:

Մարդկանց, միջանձնային հարաբերությունների կազմակերպման ու կառավարման գործում կարևորվում է նաև առաջատարի խառնվածքի հատկությունները, քանի որ կոնկրետ իրավիճակներում, գոյություն ունեն, անձանց համատեղելի ու անհամատեղելի հատկություններ [2]:

Առաջատարի վարքի հիմնական առանձնահատկությունները մեծապես պայմանավորում են թիմում, կոլեկտիվում մարզական գործունեության արդյունավետության բարձրացման հիմնահարցերի լուծմանը: Այդ մասին են վկայում առաջատարի վարքի կայուն դրսևորումները (համառություն, կայունություն, արգելքադիմացկունություն և այլն)՝ հոգեկան հուսալիությունը, ինչպես նաև բարձր կամային հատկությունների և, ընդունակությունների տիրապետումը (համարձակություն, նախաձեռնություն, նպատակասլացություն, ինքնուրույնություն, ինքնատիրապետում): Նշված գործոնները պայմանավորում են առաջատարի դերն ու ոճը թիմում՝ առաջատար կատարող, իրավիճակային առաջատար, առաջատար կազմակերպիչ, խառը ոճի առաջատար և այլն:

Հոգեբանական դիտման միջոցով բացահայտվել է մարզիկների վարքաբանական գծերի դրսևորման առանձնահատկությունները, ուսումնասիրվել է առաջատարների արտաքին տեսքը, ուշադրությունը, զրուցակցելու ցանկությունը, տրամադրության տատանումները, ագրեսիվության աստիճանը և այլն: Դիտումն իրականացվել է բնական պայմաններում, դիտել ենք ըմբշամարտիկների, բռնցքամարտիկների, ծանրամարտիկների և ֆուտբոլիստների պարապմունքները, որ-

տեղ ուսումնասիրվել են ոչ միայն առաջատարների, այլև խմբի այլ անդամների դրսևորումները:

Ըմբշամարտիկների պարապմունքները դիտարկելիս՝ բացահայտեցինք, որ խմբում առկա էին երկու առաջատարներ: Վերջիններս խմբի մյուս անդամներից տարբերվում էին տարիքով և ունեին սպորտային մեծ հաջողություններ:

Ուսումնասիրելով նրանց վարքի դրսևորումները՝ դիտարկումների միջոցով պարզեցինք, որ նրանք մեծ ուշադրությամբ էին լսում մարզչի հրահանգները և լրջությամբ էին կատարում մարզչի կողմից հանձնարարված առաջադրանքները, դիտարկումների ընթացքում նրանց միմիկայում չնկատվեց որևէ ծամածռություն, ագրեսիվ վարքի դրսևորումները նույնպես բացակայում էին:

Ըմբշամարտիկների փոքրերի խմբում պատկերը հետաքրքիր էր, թիմում կրկին գոյություն ունեին 2 առաջատար (որոնցից մեկը մարզիչի թոռնիկն էր): Արտաքնապես այդ երկու առաջատարներն աչքի չէին ընկնում, նրանք հասակով բարձրահասակ չէին, առնական չէին, նվաճած տիտղոսներով չէին գերազանցում թիմի անդամներին, սակայն հանդես էին գալիս որպես առաջատար:

Դիտարկելով նրանց վարքաբանական դրսևորումները՝ նկատել էինք հետևյալ փոփոխությունները՝ ուշադրության անկում, ծամածռություններ, տրամադրության տատանումներ, առատ քրտնարտադրություն:

Բռնցքամարտիկների պարապմունքներն ուսումնասիրելու շնորհիվ նկատեցինք, որ ի տարբերություն ըմբշամարտի, այստեղ մարզիկներն ավելի համառ և ագրեսիվ էին: Թիմի առաջատարը տարիքով մեծ էր, քան իր թիմակիցները: Վերջինիս մոտ նույնպես նկատվում էր ագրեսիվ վարքի տատանումներ: Նրա շարժումներն արագ էին, ջանքերը մեծ, ուշադրությունը կենտրոնացված:

Ծանրամարտում պատկերը գրեթե նույնն էր, այստեղ խմբի առաջատարը կրկին տարիքով ավելի մեծ էր: Ծանրամարտիկները շատ մեծ կենտրոնացվածությամբ էին կատարում վարժությունները, սակայն այս խմբում, համեմատած այլ մարզաձևերի խմբերի, առավել զարգացած էր վերբալ հաղորդակցությունը: Վարժությունների կատարման ընթացքում նկատվում էր տրամադրության փոփոխություններ:

Փորձերն անցկացվել են նաև ֆուտբոլիստների հետ: Վերջիններիս (աղջիկների և տղաների) պարապմունքները դիտարկելիս՝ նկատեցինք էական տարբերություններ. ի տարբերություն մենապայքարային և ուժային մարզաձևերի, այստեղ թիմում տիրում էր մեկ այլ մթնոլորտ: Շատ էին զրույցները, կատակները, ինչը փաստում է ուշադրության

հաճախակի անկման մասին. գրեթե բոլոր մարզիկների մոտ նկատվում էր բարձր տրամադրություն: Ելնելով այն հանգամանքից, որ ագրեսիվ դրսևորումները կարող են վնասել իրենց թիմակիցներին, նրանց կողմից որևէ ագրեսիվ վարքի դրսևորումներ մարզումներին չնկատեցինք, մինչդեռ մրցումներում պատկերը շրջադարձային փոխվում է. այստեղ խաղի ընթացքում ակնհայտորեն բարձրանում է նրանց ագրեսիվության մակարդակը, ինչը պարբերաբար վնասվածքի ձեռքբերման պատճառ է:

Եթե աղջիկների թիմում առաջատարը հենց ավագն էր, ապա տղաների թիմում այդպես չէր, այստեղ ավագից բացի թիմում գոյություն ունեին 2 առաջատար, որոնցից մեկն իրականցնում էր միայն կազմակերպչական գործողություններ: Թիմի մարզչի կողմից պաշտոնապես նշանակված ավագին թիմը որպես առաջատար չէր ընդունում:

Դիտարկելով պարապմունքները՝ նկատեցինք առաջատարների դիրքորոշումը: Նրանք կազմակերպում էին թիմի գործողությունները, հետևում կարգ ու կանոնին, ուղղորդում թիմակիցներին:

Ընդհանուր առմամբ մեր ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք նշել, որ գրեթե բոլոր խմբերում առաջատարը նա էր, ով ավելի մեծ էր տարիքով կամ ուներ որոշակի հաջողություններ մարզական բարձր նվաճումների սպորտում:

Ելնելով աղյուսակից՝ կարող ենք ասել, որ մեր կողմից ուսումնասիրված առաջատարների ղեկավարման ոճը հիմնականում «ընկերական» էր, սակայն տվյալ որակների ստույգությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ հետազոտություններ:

Հետաքրքիր էր մարզումներին բացահայտել տարբեր մարզաձևերում առկա վարքաբանական տարբերությունները, մասնավորապես ագրեսիվության մակարդակը, որը, ինչպես նշեցինք, ակնհայտ երևում էր բռնցքամարտում, սակայն քիչ էր նկատվում ծանրամարտում, ըմբշամարտում և ֆուտբոլում: Դա մեկնաբանվում է այն հանգամանքով, որ շարժումների արագությունն առաջացնում է հոգնածություն, ինչը նպաստում է ագրեսիվության բարձրացմանը:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ մենապայքարային և ուժային մարզաձևերում առաջատարները գրեթե բոլոր դեպքերում իրենց դրսևորում են այնպես, ինչպես խմբի մյուս անդամները: Արտահայտիչ շարժումներով կամ գործողություններով առաջատարները պարապմունքների ընթացքում աչքի չեն ընկնում, մինչդեռ թիմային մարզաձևերում առաջատարների գործողություններն ակընհայտ երևում են:

Այսինքն՝ կարող ենք ասել, որ մենապայքարային և ուժային մարզաձևերում բոլոր մարզիկները թիմում կատարում են իրենց առջև դրված հանձնարարությունները: Միայն որևէ բան կազմակերպելու կամ իրականացնելու ժամանակ է նկատվում առաջատարի գործունեությունը:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մրցումների ընթացքում մենապայքարային և ուժային մարզաձևերում յուրաքանչյուրն իր համար է գործում, այդ դեպքում առաջատարը գրեթե լիովին կորցնում է իր «ուժը», ի տարբերություն խաղային թիմերի, որտեղ առաջատարները մրցումների ընթացում հետևում են և վերահսկում, որպեսզի թիմի բոլոր անդամները կատարեն իրենց առջև դրված խնդիրները, չլինեն կոնֆլիկտներ և այլն:

Եզրակացություն: Առաջատարի վարքի կայուն դրսևորումները (համառություն, կայունություն, արգելադիմացկունություն և այլն)՝ հոգեկան հուսալիությունը, ինչպես նաև բարձր կամային հատկությունների և ընդունակությունների տիրապետումը (համարձակություն, նախաձեռնություն, նպատակասլացություն, ինքնուրույնություն, ինքնատիրապետում) կոլեկտիվում բարձրացնում են մարզական գործունեության արդյունավետությունը: Նշված գործոնները պայմանավորում են առաջատարի դերն ու ոճը թիմում՝ առաջատար կատարող, իրավիճակային առաջատար, առաջատար կազմակերպիչ, խառը ոճի առաջատար:

Մարզական գործընթացում շատ է արժևորվում առաջատարի դերը, վերջինիս կարևորությունն առավելապես զգացվում է խաղային թիմերում:

Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ առաջատարները խմբերում հիմնականում ավագ տարիքի մարզիկներ են, որոնք ունեն մարզական և մրցակցային մեծ փորձ, կամ առանձնանում են իրենց վարքային ցուցանիշներով:

Հետազոտությունները շարունակական են, հաջորդ փուլում պլանավորվում է ուսումնասիրել առաջատարի դերը թիմի սպորտային նվաճումների գործընթացում:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Ն. է., Սպորտը և «դժվար» դեռահասների վարքի շտկումը, Երևան, 2021, 88 էջ:
2. Бирман Л.А., Лидерство: учебник / Бирман Л.А. — Москва : КноРус, 2022. — 197 с.
3. Джамгаров Т.Т., Румянцева В.И., Лидерство в спорте. – М.: ФиС, 1983. –80 с.

4. Кретти Брайент Дж., Психология в современном спорте. (Пер. с англ. Ханина Ю.Л.) – М., ФиС, 1978. 224 с.

5. Сухов А.Н., Основы социальной психологии. Учебное пособие. М.: КНОРУС, 2018, - 242с.

6. https://peskiadmin.ru/hy/komandnoe-liderstvo-i-ego-znachenie-v-biznese-rol-lidera-v.html

THE ROLE OF A LEADER IN THE SUCCESS OF A SPORTS TEAM

PhD of Psychology, Associate professor N. E. Gevorgyan, PhD M.S. Barbaryan
Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Leadership, sports team, coach, athlete, team success, academic performance, behavioral manifestation, team leader.

Research aim: To reveal the role and activity of the leader in various sports, the characteristics of his behavioral manifestation.

Research problems:

- To study leadership as a socio-psychological phenomenon
- Determine the role of leadership in the sports process
- To study the individual psychological features of the leader
- Find out the characteristic features of leadership behavior in sports teams

Research methods:

- Research and analysis of professional literature sources
- Test study
- Psychological conversation
- Observation method

Analysis of research results: Some personal aspects of the leaders' behavior that affect the success of the sports team have been analyzed in the article. The main types of leadership have also been analyzed, with the help of which the leading role of leadership in sports teams is established.

Conclusion: Steady manifestations of the leader's behavior, psychological reliability, as well as possession of willpower and abilities, increase the effectiveness of sports activities in the team. The above mentioned factors determine the role and style of the leader in the

team: Leader-performer (executive), situational leader, leading organizer, mixed style leader.

The role of the leader is highly appreciated in the sports process; the importance of the latter is especially obvious in gaming teams.

Thus, we may conclude that the leaders in the groups are mainly athletes at an older age who have extensive sports and competitive experience or differ in their behavioral indicators.

РОЛЬ ЛИДЕРА В УСПЕХЕ СПОРТИВНОЙ КОМАНДЫ

К.п.н., доцент Н.Э. Геворгян, к.п.н. М.С. Барбарян
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: лидерство, спортивная команда, тренер, спортсмен, командный успех, успеваемость, поведенческое проявление, лидер команды.

Цель исследования - выявить роль и деятельность лидера в разных видах спорта, особенности его поведенческого проявления.

Проблемы исследования - изучить лидерство как социально-психологический феномен, определить роль лидера в спортивном процессе, изучить индивидуально-психологические особенности лидера, выяснить особенности лидерского поведения в спортивных командах.

Методы исследования и организации - исследование и анализ источников профессиональной литературы, тестовое исследование, психологическая беседа, метод наблюдения.

Анализ полученных результатов. В статье рассматриваются некоторые личностные стороны поведения лидеров, воздействующие на успех спортивной команды. Рассматриваются также основные типы лидерства, с помощью которых обосновывается ведущая роль лидерства в спортивных командах.

Краткие выводы. Устойчивые проявления поведения лидера - психическая надежность, а также обладание волевыми качествами и способностями повышают эффективность спортивной деятельности в команде. Названные факторы определяют роль и стиль лидера в коллективе: лидер-исполнитель, ситуативный лидер, ведущий организатор, лидер смешанного стиля.

В спортивном процессе высоко ценится роль лидера, важность последнего особенно ощущается в игровых командах.

Таким образом, можно сделать вывод, что лидерами в группах являются в основном спортсмены старшего возраста, имеющие большой спортивный и соревновательный опыт или отличающиеся своими поведенческими показателями.

Հոդվածն ընդունվել է 22. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 23.09. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյան

ՀՏԴ 794.125 DOI: 10.53068/25792997-2022.3.7-112

ՇԱԽՄԱՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դասախոս Ե. Գ. Հակոբյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E-mail: ervand.hakobyan@sportedu.am

Առանցքային բառեր: Շախմատ, մրցակցություն, մտավոր զարգացում, ազդեցություն, դաստիարակություն, ընդունակություն, վերլուծություն:

Հետազոտության արդիականություն: Հասարակության զարգացման ներկայիս փուլում բարձր ինտելեկտուալ հնարավորություններ ունեցող մասնագետների պահանջարկն անշեղորեն աճում է:

Հայտնի է, որ այդ որակական հատկություններն անհատի մոտ հիմնականում ձևավորվում են զարգացման դպրոցական փուլում:

